


ԵՊԱ

№5(64)
2020

ԱՐԱՅ
Ե ԵՂԵՆ
ԻՆ ԿԵՆ

29



ԱՆԵ ԶԱՅԵՆԻՔ ՎԵՐԿԻՉԵԼՈՎ ԻՆԿԱՍՏՐՈՒՅԻ յԱՆ ԶԱՐԱՊԱՐԻՃ.

Անկախություն
21.09.2020



Դր հայրենի



«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻ
Երևան



Այս խմբագրական նամակը գրելու համար անհրաժեշտ էր հաղթահարել օբյեկտիվ և սուբյեկտիվ մի քանի լուրջ խնդիր: Սուբյեկտիվներից գլխավորն այն էր, որ թողարկման համար 88-ի շարժման ու 91-ի անկախության մասին տեքստեր են գրել մեր ժամանակների հայաստան ստեղծաշարի ու գնդիկավոր գրիչների վարպետները: Լուրջ, ասենք, ես հիմա ինչ պիտի գրեմ, երբ ներսում կարելի է կարդալ Պասկևիչյանի, Հայաստանցու, Լուսինե Հովհաննիսյանի, Ջավեն Խաչիկյանի հուշերը, մտորումները, վերլուծություններն ու լուսանկարները: Սա, մեղմ ասած, անանցանելի պատճառ է: Բայց ամեն ինչ չէ, որ իմ ունակությունների խնդիրն է: Կան նաև օբյեկտիվ երևույթներ: Այն է՝ և՛ վերոնշյալ հեղինակները, և՛ թողարկման մեջ ընդգրկված մյուս փայլուն անձնավորությունները, գրեթե բոլորը սեփական աչքերով են տեսել այն, ինչի 29-ամյակը մենք նշում ենք այս համաճարակային աշնանը: Ես ընդամենը մի քանի տարեկան մանուկ էի, իսկ իրենք սեփական ոտքերով գնում էին հրապարակ, սեփական աչքերով տեսնում անհավատալի եռագլուխները, սեփական վանկարկումներով միանում «մի-ա-ցուն», «Լարաբաղը մերն ա» և այլ թևավոր լոգունգներին, սեփական ձեռքերով լուսանկարում այս ամենը «ամենաներով» ու «զենիթներով», իսկ ոմանք նույնիսկ գրում այդ ամենի մասին արդեն անկախացող հայաստանյան թերթերում:

Նրանք անկախացող սերունդն են, մենք՝ անկախ սերունդը: Ժամանակն այնպիսի մի երևույթ է, որ ընդամենը 30 տարի առաջվա թեկուզ ամենամոռնումենտալ իրադարձությունը (70 տարվա ընդմիջումից հետո պետական անկախությունը հենց դրանցից է) դեռ բավարար պատմական չէ, որպեսզի ծովից ծով Հայաստանի պես հիանաա ու նախանձես այն տեսածներին: Բայց նաև արդեն հեռու է, արդեն քո իրականությունը չէ, որպեսզի հիշես ու քեզ նույնացնես հետը: Ու ստացվում է այնպես, որ Անկախացումը մնաց արանքներում, օդում կախված: Նրանք՝ անկախացող սերունդը, պայքարեցին, հաղթեցին, իսկ մենք՝ անկախ սերունդը, պարզապես ընդունե-

ցինք դա որպես իրողություն ու դեռ մի բան էլ սկսեցինք փնթիթթալ թե էս լավ չի, էն հարմար չի, բա դրսերում էս կա, իսկ բա մեր մոտ սրանից...

Ահա թե ինչու է կարևոր Շարժումն ու Անկախությունը հիշել միշտ, այլ ոչ թե միայն սեպտեմբերյան հանգստյան օրերին (ի դեպ, ինչու է գրեթե անտեսվում Հոչակագրի ընդունման օգոստոսի 23-ը): Անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ դիտել ապշեցուցիչ լուսանկարները, որտեղ ժողովրդի ծովն է երևանի փողոցներում՝ այն հարյուր հազարները, որոնք ոչ թե ամբոխ էին, այլ ժողովուրդ, որին չէին վախեցնում նույնիսկ սովետական տանկերն ամեն քայլափոխին (փորձում եմ պատկերացնել ու չի ստացվում՝ օտար զինվորներ ու տանկեր Բարեկամության հրապարակում, մեր տնից հինգ րոպե հեռավորության վրա...): Պետք է հիանալ այդ ծովը զարդարող պաստառներով, որոնք ստեղծվում էին որպես հաղորդագրություն և պահանջ, իսկ հիմա ոչ այլ ինչ են, քան արվեստի գործ: Ամեն անգամ, երբ «ընտրություն» բառը լսելիս ոլորում ենք աչքերը և փնջացնում, արժե հիշել, որ այն գլխավոր «այո»-ի ընտրությունն իրական էր, մաքուր, զուլալ և անկեղծ:

Այս ամենը պետք է հիշել միշտ, ոչ թե տարին մեկ-երկու անգամ հասկանալու համար, որ Հայաստանի Հանրապետությունը մեզ տրվել է ոչ հենց այնպես, այլ հետևողական պայքարի արդյունքում: Եվ որ նրանք՝ անկախացող սերունդը, փորձել է հնարավորինս ամուր հիմքեր դնել այս նոր կառույցի տակ:

Մենք՝ անկախ սերունդը, հետո շարունակել ենք պայքարել, մեկ պարտվել ենք, մեկ հաղթել: Դա լավ է, ամեն սերունդ պիտի իր պատմությունն ունենա: Բայց այս մեկը՝ այս սեպտեմբերին իր 29-րդ տարեդարձը տոնող հաղթանակը, պիտի մյուսներից ավելի լավ հիշվի: Որովհետև ինչ էլ փորձի համոզել նորին մեծություն ժամանակը, դա և՛ պատմություն է, և՛ ներկա:

Գլխավոր խմբագիր
Արտավազ Եղիազարյան

ԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆ 29

29

06 Տոնական ծրագիր
Անկախություն 29
21.09.2020
Ինչ լսել, ինչ դիտել ու ինչու
հարստանալ այս փառվա
վիրություն ծրագրում:

10 Ինֆոգրաֆիկա
Հանապարհ դեպի
Անկախություն
Նարնորագույն իրադարձու-
թյունները, թվեր և մարդիկ:

18 Պատմություն
Մենք անկախական ենք
Արմեն Հայաստանյու
պարմական շրջալսյր:

26 Փաստաթուղթ
Անկախացողի
օրագիրը
Պարտիկներ Շարժան
ակնաարես պարանու
օրագրից:



28 Հետադարձ հայացք
Անկախության
ճանապարհին
40 օրվա փորձով լրագրողի
կյանքում գլխավոր ռեպորտաժը:

30 Հետադարձ հայացք
Լենին, պարտիա,
անկախություն
Ինչ է նշանակում լինել ան-
կախության սերնդից մեկը:

32 Հետադարձ հայացք
Ակտիվիստ լրագրողը կամ
լրագրող ակտիվիստը
Այն ժամանակի մասին,
որը հաճույքով կկրկնել:



34 Հետադարձ հայացք
Գործընթացի սկիզբը
Գրող Միգրան Պասկևիչյանը
հիշում է, թե ինչու էր Արաբու-
թյան հրապարակն ամենա-
ապահով վայրը երկրում:



36 Հուշագրություն
Տանկն ու ճագարը
Ուրհրդային բանակի փո-
խերը Երևանում ակնաարես-
ների մանկական հուշերը:

38 Սաունդթրեք
Ջանգվածային
ոգեշնչման զենք
Աշուր Միրզյանի
լեզենդար ջեփոյր:

40 Ֆոտո
Զրույց
իրականության հետ
Շարժումն ու պարերալը՝
լուսանկարիչ Զավեն
Ռաչիկյանի օբյեկտիվից:

44 Ֆոտո
Միտոդական օբյեկտիվ
Ճարտարապետի և անհայտ հե-
ղինակի փրոդական կադրերը:

48 Արվեստ
Պայքարի
պատկերագրումը
Ինչպես ծավեցին ցույցերը
վարդարող պատարտները:

52 Տարեդարձ
Հանրապետության
տարիքի
Մարդիկ, որոնք ծնվել են Հա-
յաստանի Հանրապետության
հետ նույն օրը:



60 Գիտական հայացք
Առասպել սկզբի մասին
Արագրագետ Լևոն Արրա-
համյանը վերլուծում է 88-ի
իրադարձություններն ապի
ճևալիման կոնսերվատիվ:

64 Խորհրդանիշ
Մեր հայրենիք,
ազատ անկախ
Ինչպես ծնվեցին Երրորդ
հանրապետության գլխավոր
խորհրդանիշները՝ դրոշը,
յինանշանը, օրհներգը:



68 Կադրերի բաժին
Անկախության տոնը
Հանրապետության
հրապարակում, 1991 թ.,
սեպտեմբերի 21
Մի դրվագ Հայաստանի անկա-
խության պարմությունից:



Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱՋԻ
ԵՂԻԱՋԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱՎԱՋԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Արբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱՎԱՋԱՆ

Հապիկ՝
Խորեն Մաթևոսյան /
Kupikazu
ԵԴՎԱՆ #5(64) | 2020

Թողարկումը լույս է տեսել
«Անկախություն 29» ծրագրի շրջանակում



Անկախություն
21.09.2020

29

ՀՀ կառավարություն

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզյան,
Հասմիկ Բարխուդարյան,
Անալի Խաչատրյան, Գեյլ
Նալբանդյան, Արմեն Հայա-
տանցի, Տիգրան Պասկևիչյան,
Լուսինե Հովհաննիսյան,
Մանե Եփրեմյան/Պան,
Կարինե Ղազարյան/Երեան,
Էռնա Ռազզովա/Երեան,
Նորայր Զիլինգարյան

Լուսանկարներ և
պատկերագրումներ՝
Արմենայրես, Անի Տագեր,
Մաքս Միվալյան, Լևոն
Համբարձումյան, Զավեն
Խաչիկյան, Էդ Թադևոսյան,
Արսեն Շուր Կարապետյան,
Սեդրակ Մկրտչյան, Նորայր
Զիլինգարյան, Աննա Բար-
լեյանի արվիվ, Երևանի
պատմության թանգարան

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta,
Montserrat Arm հեղինակներ՝
Ջուլիետա Ուլանովսկի,
Վահան Հովհաննիսյան

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազ Եղիազարյան

Հայաստանի
Հանրապետություն,
0014, Երևան,
Պարույր Սևակ 8
Էլ. փոստ՝
evnmag@gmail.com
Ungwag' evnmag.com

facebook.com/
YerevanCityMagazine

instagram.com/
evnmag

© 2011-2020 «ԵԴՎԱՆ»
Գովադալին նյութերի բովանդա-
կության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:
«ԵԴՎԱՆ» ապրանքային նշանի
իրավատեր է հանդիսանում
Արտավազ Եղիազարյանը:
Համարը տպագրության է հանձնվել
09.09.2020
Տպագրված է Անտարես
տպագրատանը, 0009,
Երևան, Մաշտոցի 50ա/1
Տպաքանակ՝ 4000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Ջանգվա-
ծային լրատվության մասին» և «Գովազ-
դի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:
Ամսագրի նյութերը վերատպվում են
միան իրավատիրոջ գրավոր համա-
ձայնությամբ: «ԵԴՎԱՆ» ամսագրին
հղում կատարելը պարտադիր է:
«ԵԴՎԱՆ» ամսագրի ստեղծման
գաղափարը պատկանում է «Երևան
Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

Անկախություն
21.09.2020



Մեր շնորհակալ



ԽԱՉԵԱՐ ՕԶՈՒՆԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ
Լոռու մարզ

ԱՆԵՐ ԿԱՅՐԵՆՆԻՔ

Կարճատև, բայց հազեցած շրջայց Հայաստանի Նորագույն պատմության կարևորագույն էջով. հուշեր, ապրումներ, ամպոսանքներ, հաղթանակներ, լուսանկարներ ու փաստեր: Շնորհավոր Անկախություն:





A large, bold, black stylized number '2' logo, which is the primary branding element for the company.

Սերժ Թանկյանը, Օրգովի աստղադիտակը, Այն
ամենը, ինչ պետք է իմանալ այս տարվա՝ հայտնի
պատճառներով առցանց ձևաչափով անցկացվող
միջոցառման մասին:



ԳԱՂԱՓԱՐ

Միջոցառումների նշանաբանն է «Մեր հայրենիք», ինչը խորհրդանշում է աշխարհի բոլոր հայերի միասնակա-
նության ու ընդհանուր հայրենիքի գաղափարը: Համա-
վարակով պայմանավորված միջոցառումների զգալի
մասը կլինի առցանց հարթակում: Սա հնարավորություն
է միավորելու բոլորին նաև Հայաստանի սահմաններից
դուրս, կարևորելու Մեր Հայրենիքի՝ հավասարապես
բոլորինը լինելու զգացումը:

Միջոցառումների ծրագիրը բաղկացած է 33 տարբեր մարզերում նկարահանած համերգներից, մեր հայրենիքում ու նրա սահմաններից դուրս ապրող հայերի պատմություններից, հայերի ցանկությունների ու երազանքների մասին տեսանյութերից, սահմանում ապրող մարդկանց ու այդ սահմանը պահող զինվորների ողջույններից ու այլ դրվագներից:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Սեպտեմբերի 21-ին Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոյի և այլ հարթակներում հայերը կ'պատմեն անկախության իրական արժեքի մասին, կ'ներկայացնեն հայրենիքը սիրելու հայկական բանաձևն ու իրենց կենսափորձը: Անկախության սերնդի տաղանդավոր երաժիշտները կ'սկսեն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում հատուկ առանձնացված 11 տարածքներում, որտեղ լավագույնս համադրվում են մեղեդին ու մեր հայրենիքի դիտարժան կոլորիտը: Հայտնի հայերի հետ նույն հարթակում իրենց պատկերացումները հայրենիքի մասին կ'կիսեն առօրյա կյանքում իմաստնացած հայերը: Սեպտեմբերի 21-ին անկախության սերնդի դերասանները կ'ընթերցեն հայ ժամանակակիցների լավագույն տողերը՝ գրված Հայաստանի անկախացումից ի վեր: 2020 թվականին աշխարհի թերևս միակ ձեռքբերումն անցումն էր օնլայն ռեժիմին, ինչի շնորհիվ էլ երկրագնդի բոլոր հայերը կ'կարողանան մասնակցել Անկախության 29-ամյակին: Սոցիալական հեռավորության պահպանման պահանջին զուգահեռ՝ համավարակն ակամայից ջնջեց բոլոր սահմանները՝ պարզևելով եզակի հնարավորություն լինել միմյանց առավելագույնս մոտ:

ԲԱԺԻՆՆԵՐ



ՄԵՐ ԵՐԳԸ

ՀԱՐԹԱԿՆԵՐ

Համացանցային հարթակներից առաջնայինը Ֆեյսբուք սոցցանցում բացված էջն է, որտեղ առանձին իվենթ հարթակում կ'տեղադրվեն միջոցառումների մասին տեղեկատվությունը, Սեպտեմբերի 21-ին Առաջին ալիքի ուղիղ միացմանը հետևելու կոչերը: Բացի այդ, այս էջը կ'դառնա արդյունավետ միջոց սեպտեմբերի 1-ից սկսած ամեն օր անկախության մասին խոսելու, ֆոտո պատմություններով կ'իսվելու, տոնի նախատրամադրություն ստեղծելու: Հանրային ռադիոյի միջոցով կ'հեռարձակվեն ՀՀ 10 մարզերում և Երևանում նկարահանված 20 րոպեանոց համերգների ծալագրությունները: Անկախության օրն Առաջին ալիքի եթերում 7 ժամ շարունակ կ'լինի հեռարձակում՝ բաղկացած վերոնշյալ խորագրերից: Ծրագրի նպատակն է միավորել հայերին ու ցույց տալ Մեր Հայրենիքն իր մարդկային պատմություններով, բնության ու ճարտարապետության յուրահատկություններով, վերաաժնորդել ու վերագտնել իրական հայրենիքի գաղափարը:



ՄԵՐ ՀՈՂԵՐԸ

Նպատակն է առաջին անգամ ոչ միայն ցույց տալ հայկական ճարտարապետության, մշակույթի, բնության դետալային գեղեցկությունը, այլև դրանց ազդեցիկ լինելը մեծ մասշտաբների մեջ: Թռչնի թռիչքի բարձրությունից արված նկարահանումները կ'հաստատեն ծավալի, աշխատանքի ու կատարողական արվեստի պատմական ֆենոմենը: Տեսախցիկը ֆիքսելու է ամենը՝ թե՛ կորուսյալ մատուռները, բազմադարյա եկեղեցիներն ու ամրոցները, և թե՛ բնության ինքնիշխան ստեղծագործությունները՝ կարկատանանման դաշտավայրերը, հպարտ լեռներն ու անդնդախոր վիհերը:



ՄԵՐ ՏՂԵՔԸ

Անկախությունն առաջին հերթին սահմանի ու սահմանը պահող զինվորի մասին է, մեր տղերքի, հայոց մարտունակ բանակի, Նրա շնորհիվ նվաճած ու պահպանվող խաղաղության մասին է: Խորագրի նպատակն է շրջել սահմանային գորամասերով, հավաքել զինվորների պատմությունները, Նրանց սրտանց ողջույններն ու բարեմաղթանքները՝ ստանալով անկեղծ կադրեր, ուր երևում է Նրանց պարզ ու անմիջական առօրյան:



ՄԵՐ ԽՈՍՔԸ

Անկախության սերնդի հետ կ'ենսափորձով կ'կիսվեն այն պատկառելի ու հարգանք վայելող հայ մեծերը, որոնք իրապես գիտեն անկախության արժեքը, դերն ու նշանակությունը: Նրանք կ'խոսեն ազատ, ինքնիշխան երկիր ունենալու ու հայրենիքը սիրելու մասին, կ'տան ապրելու բանաձևեր, որոնք արդեն ենթարկվել են ժամանակի փորձությանը, կ'ընդգծեն քաղաքացի լինելու կարևորությունն ու գիտակից ապրելու անհրաժեշտությունը: Նրանց իմաստուն խոսքը կ'ինչի թանգարաններում այն մարդկանց, ովքեր արդեն թողել են իրենց կարևոր հետքը հայ ժողովրդի կյանքում:



ՄԵՐ ԳՈՐԾԵՐԸ

Այն մարդիկ կամ թիմերը, որոնք հաջողության են հասել հայրենիքում, իրենց ազնիվ աշխատանքի արդյունքում բերել Նոր մոտեցումներ ու արժեքավոր փոփոխություններ, ունեն բացարձակ իրավունք տեղ գտնելու Հայաստանի գերագույն տոնին նվիրված երթրում: Նպատակը ոչ թե մարդկանց մասին խոսելն է, այլ հենց աշխատանքի՝ բժախնդիր ու պահանջկոտ մոտեցումների ու անսահման նվիրվածության: Ու որքան առավել տարբեր բնագավառներ ընդգրկվեն այդ մարդկանց տեսադաշտում, այնքան արագընթաց տեղի կունենա երկրի զարգացումը:



ՄԵՐ ՏԱՂԵՐԸ

Արդեն 2-րդ տարին է, ինչ Անկախության տոնի գերխնդիրներից է միջոցառումների ապակենտրոնացումը: 2020-ին տոնը նախանշված էր անցկացնել Վանաձորում՝ բացահայտելով քաղաքը որպես կարևոր տուրիստական երթուղի: Հետևելով այդ նպատակին այս տարի Անկախության օրը երիտասարդ, տաղանդավոր դերասանները Վանաձորի տեսարժան ու կոլորիտային 8 վայրերում կսամունքեն անկախության տարիների ընթացքում գրված գործերը: Անկախության սերնդի մտքերն ու ստեղծած պոեզիան կտարածվի Վանաձորի մթնոլորտում՝ հաղորդելով քաղաքին տոնական գույներ:



ՄԵՐ ՀԱՅԵՐԸ

Գալահամերգն ամբողջ միջոցառման տրամաբանական հանրագումարն ու ամփոփումն է, որի նպատակն է ցույց տալ Սփյուռքի, Արցախի ու Հայաստանի եռամիասնությունը: Աշխարհի տարբեր անկյուններից հայերը կուղարկեն հայկական որևէ ստեղծագործության իրենց կատարումը: Մեկ ընդհանուր եթերով ցուցադրվելով՝ դրանք իրար կկապեն աշխարհի անկյուններն ու մատնացույց կանեն հայերի ապակենտրոնացման հզոր ուժը: Հայտնի հայերի շարքում կլինեն Սերժ Թանկյանը, Տիգրան Համասյանը, Սերգեյ Խաչատրյանը, Ալեքսիս Օհանյանը և այլն:



Մեր Քաղաքները



ՄԱՐԽԱՅԵՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
Երևանի մարզ



ՄԵՐ ՕՐՅՆԵՐԳԸ

«Մեր Հայրենիք» խորագրի ներքո կհամախմբվեն ու մեկտեղվեն նաև հայերի ծայնները: Նախապես կհավաքագրվեն օրհների կատարումներ Հայաստանում ու դրա սահմաններից դուրս: Ձայնագրությունները կսինքրոնացվեն, ինչի շնորհիվ հազարավոր հայերի կատարմամբ եթերում կհնչի անկախության խորհրդանիշ, պետական հիմն «Մեր Հայրենիքը»:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ

Եթե չլիներ չարաբաստիկ համավարակը, ապա տոնախմբություններն անկասկած կանցնեին ոչ թե օնլայն, այլ լավ էլ օֆֆլայն: Եվ ինչպես 2019-ին տոների կենտրոնը Երևանից տեղափոխվեց Գյումրի, այս անգամ բոլորս ուղևորվելու էինք Վանաձոր (եթե կուզեք՝ Կիրովական, մեծ ցանկության դեպքում՝ Ղարաբաղի խառնուրդ): Ինչևէ, նույնը կարող ենք անել մյուս տարի, երբ նշենք Անկախության 30-ամյա հոբելյանը:



Մեր Քաղաքները

Ճանապարհ դեպի ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 1986-ից սկսած

Հայաստանում իրականացվում են բազմաթիվ ակցիաներ ու ցույցեր՝ կառավարության ուղղված տարբեր կոչերով, պահանջներով այս կամ այն խնդիրը, ակտիվանում է բնապահպանական շարժումը, խոսվում է Նախիջևանում, Արցախում հայկական հուշարձանների ոչնչացման մասին:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Հոկտեմբերի 18, 1987**

Առաջին ցույցը Երևանում՝ ի նշան բողոքի Չարդախյու գյուղում հայերի բռնաճնշումների:

📍 **Չարդախյու**

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Փետրվարի 20, 1988**

Չանգվածային ցույց Երևանում՝ ի պաշտպանություն Արցախի:



📍 **Արցախ**
📅 **Փետրվարի 22, 1988**

Աղդամից ԼՂԻՄ մտած զինված ադրբեջանցի ցուցարարների հետ բախում Ասկերանի մոտակայքում:



📍 **Արցախ**
📅 **Փետրվարի 20, 1988**

ԼՂԻՄ Մարզկոմը որոշում է կայացնում դիմելու Հայկական ՍՍՀ, Ադրբեջանական ՍՍՀ ու Մոսկվային՝ անցկացված ստորագրահավաքի արդյունքում լուծել Արցախը Հայկական ՍՍՀ-ի հետ վերամիավորվելու հարցը:



📍 **Արցախ**
📅 **Փետրվարի 13, 1988**

Ստեփանակերտում բազմամարդ ցույցի ընթացքում ստեղծվում է «Կոունկ» շարժումը, որի անվանումը բացի խորհրդանշական թոշունի անունից նաև հապավում էր Լեռնային Ղարաբաղի շեղափոխական կառավարման կոմիտե (Комитет революционного управления Нагорного Карабаха): Ցույցի մասնակիցներից ընտրվում է 66 անդամ: Շարժումը հետագայում Բաքվի կողմից հայտարարվում է անօրինական: Գործում է մինչև 1988 թվականի հուլիս:



📍 **Արցախ**
📅 **Աշուն, 1987**

Չանգվածային ստորագրահավաք Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում Հայկական ՍՍՀ-ին միանալու պահանջով, որին շուտով միացավ ողջ հասուն հայաբնակ բնակչությունը՝ 100,000-ից ավելի ստորագրություն:

📍 **Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Փետրվարի 27-29, 1988**

Սումգայիթում պաշտոնական Բաքվի հովանավորությամբ 3 օր անընդմեջ իրականացվում է հայերի սպանդ (պաշտոնական թիվը՝ 29 հայ ու 3 այլազգի): Ձերբակալվում են հարյուրավոր ջարդարարներ, որոնցից 94-ին մեղադրանք է առաջադրվում՝ հիմնականում «Խուլիգանություն» հորվածով: Հարուցվում է 80 առանձին գործ՝ խուսափելով մեկ միասնական մեծ գործից: Ադրբեջանցի որևէ պաշտոնյա չի դատապարտվել:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Փետրվարի 25, 1988**

Երևան են մտցվում Ներքին գործերի մի քանի հազար զինվոր, ովքեր փակում են կենտրոնական փողոցներն ու Օպերայի հրապարակը:

📍 **Հայկական և Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Մայիսի 12, 1988**

Հայաստանի ղեկավար Կարեն Դեմիրճյանը, ինչպես նաև Ադրբեջանի ղեկավար Բյանրան Բազիրովն ազատվում են պաշտոնից: Դեմիրճյանին փոխարինում է Սուրեն Հարությունյանը:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիս, 1988**

Պաշտոնապես ստեղծվում է «Ղարաբաղ» կոմիտեն՝ 11 անդամներով:



📍 **Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Հունիս, 1988**

Ադրբեջանն արգելափակում է Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ավտոճանապարհով բեռների փոխադրումը: Քաղաքացիական մեքենաների վրա սկսում են սիստեմատիկ կերպով հարձակվել:

📍 **Հայկական և Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Հունիսի 13-15, 1988**

Ադրբեջանի Գերագույն խորհուրդն անթույլատրելի է որակում ԼՂԻՄ դիմումը Հայաստանի հետ վերամիավորվելու մասին: ՀՍՀ Գերագույն խորհուրդը դրական որոշում է կայացնում Արցախի Մարզկոմի դիմումին՝ Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիսի 28, 1988**


Նոր ղեկավար Սուրեն Հարությունյանն արտոնում է մայիսի 28-ին փողոցներում տեղադրել Առաջին հանրապետության մինչ այդ արգելված եռագույն դրոշմը:

📍 **Արցախ**
📅 **Մայիսի 22, 1988**

Սկսվում է համազգային գործադուլ:

📍 **Արցախ**
📅 **Մայիսի 21, 1988**

Ստեփանակերտ մտցվում են խորհրդային զորքեր:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Հուլիս, 1988**

Սկսվում է համազգային գործադուլ:

📍 **Արցախ**
📅 **Հունիսի 30, 1988**

Ստեփանակերտում լուծարված «Կոունկ» կոմիտեի փոխարեն ստեղծվում է «Միացում» շարժումը, որը համակարգում է պայքարը: Շարժման նախագահ է ընտրվում Ռոբերտ Քոչարյանը, տեղակալ՝ Սերժ Սարգսյանը:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Հուլիսի 5, 1988

«Զվարթնոց» օդանավակայանում գործադուլին ընդառաջ կազմակերպած ցույցը ցրում են հատուկ ջոկատայիններ՝ կոշտ միջոցներով ու հրազենի կիրառմամբ, ինչի արդյունքում մեկ մարդ, ով փորձում է լուսանկարել տեղի ունեցողը, սպանվում է, իսկ ևս մեկը դառնում հաշմանդամ:



📍 Հայկական ՄՍՀ
📅 Սեպտեմբեր, 1988

Զգալով ձերբակալվելու հավանականությունը՝ «Ղարաբաղ» կոմիտեում ստեղծում է զաղտնի կոմիտե, որին անդամակցում են Երջանիկ Աբգարյանը, Դավիթ Շահնազարյանը, Ավետիք Իշխանյանը, Արշակ Սադոյանը, Վիտյա Այվազյանը, և այլք:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Օգոստոս, 1988

«Ղարաբաղ» կոմիտեի հիման վրա սկսվում է Հայոց Համագգային Շարժման ստեղծումը, որը 1990 թվականին վերափոխվում է կուսակցության:

📍 Միգրացային
📅 Նոյեմբերի 19, 1988

ԱՄՆ ներկայացուցիչների պալատն ընդունում է բանաձև, որում աջակցում է Հայաստանի ու Արցախի վերամիավորմանն ու քննադատում հայերի դեմ բռնությունն Ադրբեջանում:



📍 Հայկական ՄՍՀ
📅 Հուլիսի 18, 1988

Հայտարարվում է պարեկային ժամ: Երևան են մտցվում լրացուցիչ զինվորական ուժեր, որոնց ընդհանուր թիվը հասնում է 200 հազարի:



📍 Մոսկվա
📅 Հուլիսի 18, 1988

ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը դիտարկում է Հայաստանի ու Ադրբեջանի Գերագույն Խորհուրդների որոշումներն ու որոշում կայացնում Հայկական ՄՍՀ ու Ադրբեջանական ՄՍՀ սահմաններին փոփոխության անհնարինության մասին: Փոխարենը գումարներ են հատկացվում Արցախում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Սեպտեմբեր, 1988

Երևանում անցկացվում են հանրահավաքներ, որոնց մասնակցում են մինչև 500 հազար մարդ: Հանրապետության կազմակերպությունների մինչև 70%-ն իրականացնում են գործադուլ:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Նոյեմբերի 25, 1988

Հայտարարվում է հատուկ դրություն, Երևան է մտցվում ռազմական տեխնիկա: Արգելվում են հանրահավաքներն ու գործադուլները:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Նոյեմբերի 16, 1988

Երևանում ցույցին մասնակցում է 600 հազար մարդ, իսկ դրան հետևած երթին մինչև 1 միլիոն մարդ: Բազմամարդ ցույցեր են նաև Բաքվում:

📍 Արցախ
📅 Հուլիսի 12, 1988

ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների խորհուրդը հռչակում է ԼՂԻՄ-ն Ադրբեջանի կազմից դուրս գալու կողմ ու «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն» անվանափոխելու «Արցախի Հայկական Անկախ Մարզ»: Որոշումը չեղարկվում է Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Սեպտեմբերի 21, 1988

Հայաստանի Գերագույն Խորհուրդը կասեցնում է «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը:

📍 Հայկական ՄՍՀ
📅 Սեպտեմբերի 21, 1988

Սկսվում են հարձակումներ Հայաստան եկող զնացքների վրա:

📍 Միգրացային
📅 Հուլիսի 7, 1988


Եվրախորհրդարանն ընդունում է բանաձև, որում աջակցում է Հայաստանի ու Արցախի վերամիավորմանը ու քննադատում հայերի դեմ բռնությունն Ադրբեջանում:





📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Դեկտեմբեր, 1988 - Հունվար, 1989**

Ձերբակալվում են «Ղարաբաղ» կոմիտեի բոլոր անդամներն ու տեղափոխվում ռուսական բանտեր:



📍 **Արցախ**
📅 **Հունվարի 12, 1989**

Արցախում մտցվում է Մոսկվայի ուղիղ կառավարում: ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեն ղեկավարում է Արկադի Վոլսկին:

📍 **Արցախ**
📅 **Հունիսի 26, 1989**

Շահումյանի շրջանի ժողովրդական պատգամավորների որոշմամբ շրջանը միանում է ԼՂԻՄ-ին:


📍 **Հայկական և Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Ամառ, 1989**

Նախիջևանում ձերբակալում են հայկական զնացք: Դրան ի պատասխան՝ Հայաստանն արգելափակում է Նախիջևանի երկաթգծային ուղիները, ինչից հետո Ադրբեջանն արգելափակում է Հայաստանի երկաթգծային ուղիները:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Դեկտեմբերի 7, 1988**

Հայաստանի հյուսիսում տեղի է ունենում ուժեղ՝ 6.8 մագնիտուդով երկրաշարժ, որին զոհ է գնում ըստ պաշտոնական տվյալների՝ 25 հազար մարդ, իսկ ըստ մասնագիտական հաշվարկների՝ 38 հազար: Անտուն է մնում մոտ 500 հազար մարդ:



📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիսի 30, 1989**

«Ղարաբաղ» կոմիտեի անդամներն ազատ են արձակվում:

📍 **Հայկական ՍՍՀ, Արցախ**
📅 **Դեկտեմբերի 1, 1989**

Հայաստանի ու Արցախի Գերագույն խորհուրդներն ընդունում են որոշում Հայկական ՍՍՀ ու ԼՂԻՄ վերամիավորվելու մասին: Որոշումն անթույլատրելի է համարվում Ադրբեջանի ու խորհրդային Միության Գերագույն խորհուրդների կողմից:




📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Փետրվարի 25, 1989**

1988 թվականից սկսած բազմաթիվ բնապահպանական ցույցերից հետո փակվում է Մեծամորի ատոմակայանի առաջին էներգաբլոկը: Որպես հիմնավորում էր ներկայացվում իր սեյսմիկ ավտանգավորությունը Սպիտակի երկրաշարժից հետո: Մարտի 18-ին փակվում է երկրորդ էներգաբլոկը:

📍 **Հայկական և Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Սեպտեմբեր, 1989**

Ադրբեջանը զրեթե ամբողջությամբ արգելափակում է Հայաստանի մուտքի ճանապարհները:





КАРТА ПОГРОМОВ АРМЯН. БАКУ, 13-19 ЯНВАРЯ 1990 Г.

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Օգոստոսի 23, 1990**

Հայկական ՍՍՀ Գերագույն Խորհուրդն ընդունում է Անկախության հռչակագիրը, որը բաղկացած էր 12 կետերից:



📍 **Ադրբեջանական ՍՍՀ**
📅 **Հունվարի 13-20, 1990**

Բաքվում իրականացվում է հայ բնակչության կոտորած: Դաժան և անմարդկային կերպով սպանվում են հարյուրավոր հայեր, դադարեցվեց քաղաքի 240 000 հայ համայնքի գոյությունը: Հայկական ժառանգությամբ հայտնի Բաքուն լիովին հայաթափվում է:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Օգոստոս, 1990**

Տավուշում Ադրբեջանի սահմանին բախումներ են տեղի ունենում՝ հրետանու կիրառմամբ: Ադրբեջանական հարձակումները տապալվում են, իսկ 3 ադրբեջանաբնակ անկախները՝ Վերին Ոսկեպարը, Սոֆուլուն ու Բարխուդարլին անցնում են հայ ազատամարտիկների հսկողության տակ:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Փետրվար, 1991**

Հայաստանի Գերագույն խորհուրդը նախաձեռնում է հանրաքվե՝ առաջադրելով Հայաստանի անկախությանը հարցը: Հանրաքվեն պետք է կազմակերպվեր 6 ամսից:

📍 **Միգրացային**
📅 **Մայիսի 1, 1991**

ԱՄՆ Առնոլդ Նեյսոնը ընդունում է բանաձև, որով քննադատում է Ադրբեջանի բռնությունները Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:



📍 **Հյուսիսային Արցախ**
📅 **Հունվարի 11, 1990**

Տեղահանվում է Խանլարի ու Շահումյանի հայ բնակչությունը:

📍 **Ադրբեջան**
📅 **Օգոստոսի 30, 1991**

Ադրբեջանը հռչակում է անկախությունը:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիսի 17, 1990**

Երևանում խորհրդային զորքերի հետ բախումների արդյունքում սպանվում է 27 մարդ: Մայիսի 29-ին հայտարարվում է համազգային սուգ:

📍 **ԽՍՀՄ**
📅 **Մարտի 17, 1991**

ԽՍՀՄ ողջ տարածքում անցկացվում է հանրաքվե՝ որոշելու մարդկանց կարծիքը՝ պահպանել խորհրդային Միությունը, թե ոչ: Հայաստանը հրաժարվում է միանալ այս հանրաքվեին ու սպասում է իր հանրաքվեին կես տարուց:

📍 **Արցախի Հանրապետություն**
📅 **Սեպտեմբերի 2, 1991**

Արցախը, Շահումյանի շրջանն ու Գետաշենի ենթաշրջանը հռչակում են անկախությունը՝ որպես անկախ Արցախի Հանրապետություն:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Սեպտեմբեր, 1991**

Վարչապետ Վազգեն Մանուկյանը ստորագրում է հրամանագիր, որով ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվում է «Հատուկ զույն» ու իր կազմում ներառում Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի ու Մեղրու ինքնապաշտպանական վաշտերը, որոնք դառնում են ապագա ՀՀ ՊՆ հիմքը: Զուգահեռ զինաթափվում է Հայոց ազգային բանակը:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 **Ապրիլի 13, 1991**

Երևանում ապամոնտաժվում է Լենինի արձանը:

📍 **Արցախ**
📅 **Ապրիլի 30, 1991**

Ադրբեջանական ՕՄՈՆ-ը՝ հիմնականում բաղկացած շրջանի ադրբեջանական գյուղերի ակտիվիստներից՝ խորհրդային ուժերի աջակցությամբ տեղահան է անում Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Մարտունու, Հաղրուծի ու Շուշիի բազմաթիվ հայաբնակ գյուղեր: Ընդհանուր առմամբ էթնիկ զտումների է ենթարկվում 26 հայկական բնակավայր: Գործողությունը կասեցվում է հուլիսին:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիսի 20, 1990**

Լաուավարությունը փակում է «Մաիրիտ» գործարանը՝ ընդառաջելով ցույցի մասնակիցների պահանջին՝ բարելավելու էկոլոգիական վիճակը տարածաշրջանում:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Մայիսի 20, 1990**

1990 թվականի մայիսի 20-ին և հունիսի 3-ին տեղի են ունենում Գերագույն Խորհրդի ընտրություններ, որտեղ մեծամասնություն է ստանում Ղարաբաղ կոմիտեի հիման վրա ստեղծված ՀՀԿ կուսակցությունը: Շուրջ 70 տարի Հայաստանում ղեկավարելուց հետո Կոմունիստական կուսակցությունը պարտություն է կրում: Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվում է Գերագույն Խորհրդի նախագահ: Արցախից ընտրվում է 13 պատգամավոր: Վազգեն Մանուկյանն ընտրվում է վարչապետ:

📍 **Հայկական ՍՍՀ**
📅 **Հունվարի 17-19, 1990**

Նախիջևանի կողմից Ադրբեջանը հրետակոծել է Արարատի շրջանը, առաջ բերել զինված ուժերը դեպի Հայաստանի տարածք: Հունվարի 17-19 ընթացքում հայկական կամավորական ուժերը հետ են վերցրել բարձունքներն ու լուրջ կորուստներ պատճառել: Հայկական ուժերի հսկողության տակ է անցնում նաև Բյարբի (Տիգրանաշեն) անկյավը:

Kamo
Azat
Martunashen
Getashen
Manashik
Erkej
Buzlukh

Mets Shen
Aghabekalanj

Patara
Astghashen

Tsaghkadzor
Yeghtsahogh
Kirov

Petrosashen
Arpagyaduk
Spitakashen
Tsamdzor
Sarishen
Myulkudara
Arbulag
Dolanlar
Cilon
Tsor
Banazur
Binyatlu

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՔ. ԲՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԻ ՄԱՍ

Ինֆորագրաֆիկա

99.5%



📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Սեպտեմբերի 21, 1991

Հայաստանում անցկացվում է անկախության հանրաքվե, որին մասնակցում է 95% բնակչությունը, որոնց 99.5% քվեարկում է կողմ: Հայկական ՄՍՀ-ն անվանափոխվում է Հայաստանի Հանրապետություն: Որպես դրոշ հաստատվում է առաջին հանրապետության եռագույնը:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Հոկտեմբերի 16, 1991

Հայաստանում անցկացվում են առաջին նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում Լևոն Տեր-Պետրոսյանը 83.4% ձայներով ընտրվում է ՀՀ առաջին նախագահ:

📍 **Արցախ**
📅 Դեկտեմբերի 10, 1991

Հրետակոծության պայմաններում Արցախում անցկացվում է հանրաքվե, որի արդյունքներով բնակչության 99.9%-ը քվեարկում են կողմ:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Սեպտեմբերի 23, 1991

Գերագույն խորհուրդը հանրաքվեի արդյունքների հիման վրա հռչակում է անկախ հանրապետություն:

📍 **Միզապցային**
📅 Դեկտեմբեր, 1991

Հայաստանի Հանրապետության անկախությունը պաշտոնապես առաջինը ճանաչում են Լիտվան, Ռումինիան, Թուրքիան, ԱՄՆ, Կանադան, և այլք: Մինչև 1992 թվականի վերջ Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատում 61 պետության հետ:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Դեկտեմբեր, 1991

Հերթական անգամ փակվում է Ադրբեջանից եկող գազամուղը: Սկսվում է Հայաստանի էներգետիկ շրջափակումը:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Հունվարի 28, 1992

Կառավարության որոշումով ստեղծվում են ՀՀ Զինված ուժերը:

📍 **Հայաստանի Հանրապետություն**
📅 Սեպտեմբերի 22, 1991

Արցախ են ժամանում Բորիս Ելցինը, Նուրսուլթան Նազարբաևը, ովքեր ելույթ են ունենում Ստեփանակերտում ցույցի ժամանակ: Հաջորդ օրը նրանց միջնորդությամբ Ժեզեզմովոյսկում ՀՀ, Արցախ ու Ադրբեջանի ղեկավարները ստորագրում են առաջին փաստաթուղթը, որը սկիզբ է դնում արցախյան բանակցություններին:

📍 **Ադրբեջան**
📅 Նոյեմբերի 23, 1991

Ադրբեջանի նախագահն Այազ Մութալիբովն ընդունում է օրենք, որով լուծարում է ԼՂԻՄ-ը, իսկ Ստեփանակերտն անվանափոխում Խանքենդի:

📍 **Արցախ**
📅 Հունվարի 6, 1992

ԼՂՀ գերագույն խորհրդի նախագահ է ընտրվում Արթուր Մկրտչյանը:

📍 **Միզապցային**
📅 Դեկտեմբերի 21, 1991

Հայաստանը նախկին ԽՍՀՄ այլ 10 պետությունների հետ միանում է ԱՊՀ-ին: Հետագայում միանում է նաև Վրաստանը: Չեն միանում Մերձբալթյան պետությունները:



📍 **Արցախ**
📅 Սեպտեմբերի 25, 1991

Ադրբեջանական զինված միավորումները սկսում են Ստեփանակերտի հրետակոծումը Այազան, իսկ այնուհետև Գրադ հրետանուց: Հրետակոծությանը զոհ է զնում 100-ից ավելի մարդ, իսկ 300-ից ավելին դառնում են հաշմանդամ: Փակ ճանապարհների, երկաթգծի, օդանավակայանի պայմաններում, առանց էլեկտրականության ու ջեռուցման Ստեփանակերտը գոյատևեց մինչ քաղաքի ապաշրջափակումը Խոջալուի, Շուշիի, Լաչինի ու Ադրաֆի գործողությունների ավարտը:



📍 Միգապցային

📅 Փետրվարի 13, 1992

Եվրախորհրդարանը ընդունում է բանաձև, որտեղ քննադատում է Արցախի հայերի դեմ աննախադեպ ագրեսիան Ադրբեջանի կողմից:

📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Մարտի 2, 1992

Հայաստանը դառնում է ՄԱԿ լիիրավ անդամ:

📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Դեկտեմբեր, 1994

Շրջանառության մեջ է դրվում ՀՀ դրամը:



osce

📍 Միգապցային

📅 Հունվարի 30, 1992

Հայաստանն անդամակցում է ԵԱՀԽ-ին (հետագայում՝ ԵԱՀԿ):

📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Նոյեմբերի 7, 1995

Կատարվեցին վարչատարածքային փոփոխություններ, որով պետության նախկին շրջանները միավորվեցին՝ ստեղծելով 10 մարզ, ու 11-րդ մարզի կարգավիճակ ստացավ Երևանը:



📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Հոկտեմբերի 24, 1992

ՍՄՆ Սերկայացուցիչների պալատն ու Սենատը համատեղ ընդունում են «Ազատության աջակցության ակտ»-ը, որի 907-րդ կետով արգելվում է ուղիղ ռազմական աջակցությունն Ադրբեջանին, քանի դեռ վերջինս չի վերացրել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակումը:

📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Հուլիսի 5, 1995

Համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվում է ՀՀ առաջին սահմանադրությունը:



📍 Հայաստանի Հանրապետություն


📅 Ապրիլի 19, 1992

Հաստատվում է Հայաստանի զինանշանը:

📍 Հայաստանի Հանրապետություն

📅 Մայիսի 12, 1994

Զինադադարի համաձայնագիրը Հայաստանի, Արցախի Հանրապետության ու Ադրբեջանի միջև Ռուսաստանի միջնորդությամբ հաստատվում է ու գործում առ այսօր:



Երևանի անկախության խարտեզ 1987-1991

«ԶՎԱՐԹՅՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

Հուլիսի 5, 1988

Հայաստանում գործադուլի ակտիվիստների 1 ժամ անընդ
գնեցող Մանուշակի գլխավորությամբ
սիմվոլիկականները ներխուժում են օդանավակայան:
Բախման ընթացիկում 1 քույրաբար զոհվում է,
1-ը դառնում հաշմանդամ:



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅՑԻ ՎԱՅՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՇԵՆՔ

1991-ԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՂԱՐԱԲԱՂ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՎԱՔԱՏԵՂԻ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

1987-1988

Խովսեփակյանի և Բյուրյան-Դավթյանի բաժին (11-րդ հարկ)

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅՑԻ ՎԱՅՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

1991-ԻՑ՝ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅՑԻ ՎԱՅՐ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ



ՀԱՆՐԱՀԱՎԱՔ 1991 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ

ԼԵՆԻՆԻ ՀՐԱՊԱՐԱԿ



ՀՀՇ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Մայիսի 27, 1990

Լքակ է բացվում ՀՀՇ գրասենյակի ուղղությամբ: Մեկ երկրամասով սրհնում է:

ԿԱՅԱՐԱՆ

Մայիսի 27, 1990

Երկաթուղու սինված պահակախմբի հեղ ընդհարման ընթացիկում սպանվում է 6 մարդ, 10-ը վիրավորվում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅՑԻ ՎԱՅՐ

«ՆԱԻՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆ

1988

Բազմաթիվ ցույցեր՝ «Նուիրիտ» գործարանը փակելու պահանջով:



ՍՈՎԵՏԱՇԵՆԻ ԽՃՈՒՂԻ

Մայիսի 27, 1990

Ցույցարարները շրջափակում են Էրեբունի հիվանդանոցը, որտեղ տեղափոխվել էին մինչ այդ Լալարանում սպանվածների մարմինները: Այնուհետև Սովետաշենի Խանապարհի վրա վիճվորականներն անկանոն կրակ են բացում ցույցարարների ուղղությամբ, սպանվում է 17 խաղախայիական ու մեկ սարս, մի խանի տղանյակը վիրավորվում:

ՄԵՆՔ անկախական ենք

Արժեն Հայաստանյին պատճառ է Շարժման գլխավոր
իրադարձությունների ու ծարդկանց ծասին՝ վերհիշելու կամ
վերգապես հանաչելու համար:

* Չմոլրվելու համար ուշադրություն դարձրե՛ք հեղինակային ծանոթագրություններին:





Արմեն Հայաստանյի

Սկզբում **88**-ն էր, Բեռլինի պատը Հաղորդում ճաքեր տվեց, Երևանի սրտում փլվեց:

Ձյուն-ձմեռ էր, իսկ մեզ համար՝ զարնանամուտ. «Ղարաբաղը մերն է» ասինք, ելանք ցույցի: «Լենին-պարտիա-գորբաշուվ»-ը պաստառ շինած հայ հայցվոր էինք, թղթի շերտին էլի առած էս անգամ էլ Մոսկով զնացինք, ստացանք ապտակ Սումգայիթով: Մարտի 8-ի Կանանց տոնը լուռ երթ դարձավ. ելանք կրկին Ծիծեռնակի բլուրն ի վեր՝ թարմ ծաղիկներ նոր զոհերի հիշատակին խոնարհելու: Կինոյի տան մեծ հավաքին որոշեցինք՝ կրկին ցույցի: Ի պատասխան՝ լուրթ երկնքում «պերեստրոյկայի ծիծեռնակները»¹ ճախրեցին, հանրահավաքի փոխարեն մարտի 26-ին մի մարդու պես տանը մնացինք՝ Երևանը դարձնելով «մեռյալ քաղաք»: Ապրիլ 24-ին² մեր ուսերին մի նոր խաչքար դրած տարանք, հասցրինք Ծիծեռնակաբերդ: Չէ, հետդարձի ճամփա չկար, հա՛, տունդարձի ուղին մեկն էր՝ սգավորից պայքարողի պիտ վերածվեինք, խնդրարկուից՝ քաղաքացու: Ծիծեռնակը բույն էր շինում, «Պուգաչովի վրաններում»³ շարժման գլուխն էր խմորվում: Ու մի օր էլ Լուսաշխի շենքում (ասել է թե՛ լուսավորության աշխատողների) ժողով արեցին: Եդ հավաքին Բաղյան Ջորին⁴ էնքան տոչորվեց, որ հերթական կոմիտեի կազմից դուրս մնաց, բայց պատմական մի հանդիպում էլ գրանցվեց. ծանոթացան Տեր-Պետրոսյան Լևոնն ու Արարիքյան Բաբկենը:

Շեփորածաղկի գարունն էր, ձյուն չարեց, մայիսն էնքան սրտեր վառեց, որ չգիտեմ՝ որը պատմեմ, որը թողնեմ: Մայիսմեկյան վերջին կարմիր շքերթը (Ղարաբաղն իր գրպանում էդպես էլ չգտած Դեմիրճյանի աչքի առաջ «Ղարաբաղը վերակառուցման հայելին է» գրությամբ պաստառ պարզեցինք)⁵, թե՛ ամսի 7-ին Ակադեմիայի շենքի դիմաց հազարավոր «Պրավդաների» հրկիզումը, գուցե երգեմ՝ ոնց էինք ծովում շրջափակված Օպերայի շուրջբոլորը. մեկ Թամանյանի առաջ ժողովվում (մայիս 12), մեկ Մատենադարանի բարձունքին զգվում (մայիս 17), մինչև մի օր՝ երկու ամսվա պաշարումից հետո, նորից նվաճեցինք Օպերայի հրապարակը (մայիս 19): Ո՛րը պատմեմ, որը թողնեմ. ուսանողական նստացույցը, որ մեկնարկեց մայիս 26-ին, թե՛ մայիս 28-ի ինքնաբերական տոնը, երբ Առաջին հանրապետության 70-ամյակի առթիվ Գորգիսյան Մովսեսը Եռագույնը ծածանեց: Շեփոր Աշոտի շեփորականչը, որ ասես «Ինչո՞ւ է աղմկում գետը» հարցի գտնված պատասխանը լինեք, «Պայքար, պայքար, մինչև վերջ»-ը, որ վանկարկվում էր անվերջ ու առայսօր արձագանքում: Գարունն էնպես պայծառ էր կրկին, ու մայիսը վարդազույն էր, ոչ թե կաս-կարմիր: Իսկ փառահեղ էս մայիսի օրացույցը վերջին օրով անմահական պտուղ տվեց. Հայաստանի Ղարաբաղ կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վերջնական կազմը հաստատվեց⁶: 11-ն էին Կոմիտեի տղաները՝ վերածնվող երկրի հիմնադիր հայերը, բոլորն էլ գիտուն, բանիմաց մարդիկ: «Ղարաբաղը մերն է» ասինք, «երկրի դեկը Կոմիտեի տղաների ձեռքն է» ասինք, ու էդ զարնան վերջին օրից մինչև 90 թվի Գերագույն Խորհրդի (այսուհետ՝ ԳԽ կամ խորհրդարան) ընտրություն, ըստ էության, երկրում հաստատվեց երկիշխանություն. դե յուրե իշխում էին կոմունիստները, դե ֆակտո՝ Ղարաբաղ կոմիտեն, դե, Կոմիտեն էլ այլ բան չէր, քան տեղով մեկ ժողովուրդը:

88-ի թեժ ամառվա արևի տակ հասունացավ համազգային շարժման պլանը, որ պիտի դառնար քաղաքական մի նոր ակոս կամ ուղեծիր («անկախություն» բառը չկար, ոգին էր սոսկ դեռ թևածում, տողատակից աչքով անում): Միացում էինք ուզում, Արդարություն էինք ուզում, իսկ Անկախություն. երազում ու չէինք վանկարկում, որ արյան լճում չխեղդվի մեր վերածին երազանքը: Շանթը՝ եղավ Շարժման առաջին հասարակավորը, որին միացան շատերը: «Որտեղից եկար, որտեղից ելար, դու Շանթ անունով մի շանթ պատանի, թող քո աչքերի փայլը խելագար անարդարության դատաստանն անի...»⁸:

— Դուք չեք հաղթի, քանի դեռ ձեր շարքերում ձեզ վրա ծիծաղողներ ունեք,— հունիսյան մի օր, հայտնվելով Ազատության հրապարակում (հա՛, ամռան սկզբից Օպերան արդեն մենք կոչում էին Ազատության հրապարակ), ասաց ճապոնացի մի հոգեբան: Բայց արի ու տես, որ հունիսի 15-ին Շարժումը գրանցեց իր առաջին հաղթանակը. հանրապետության կոմունիստական իշխանությանը ստիպեց ընդունել իր պահանջները (ընդունելը՝ ընդունեցին, իսկ մեկ ամսից՝ հուլիս 18-ին, Մոսկովներում որոշումները օրեցօր): Ինչ խոսք, դեռ կային ծիծաղողներ, բայց երբ գործադրվավոր մի ողջ ժողովուրդ, Հայաստանի սրտում հուլիսի 5-ին սպանված իր առաջին անմեղ զոհին՝ Խաչիկին, հողին էր հանձնում (Կարմիր բանակի սպայի նկատմամբ հավատն էլ էր հետը թաղում), անթաքույց ծիծաղող այլևս չկար: Քսաներկուամյա լույսի պես տղուն՝ լուսանկարիչ անգեն ջահելի օրը ցերեկով մի կրակոցով «Զվարթնոցի» ճամփին նահատակեցին:

¹ Երևանի երկնքում հայտնված ռազմական ուղղաթիռներին ժողովուրդը սրամկորեն կնիեց այս անունով: Հանրահավաքի շերտերից համար առաջին անգամ Ծիծեռնակաբերդի ծրարվեց մայրահաղթի:

² Չնայած հուշահամալիրը կառույվել է 60-ականներին, բայց Ապրիլի 24-ը պաշտոնապես չէր նշվում, միայն 88-ին համաժողովորական ենշման ներքո Հայաստանի կոմունիստական իշխանությունը կանաչեց Հայոց ցեղասպանությունը: ՀՀԸ-ն իր ծրագրի հրապարակումից երեք ամիս անց առաջինը հասավ հենց ՀՊԱՀ ԳԽ կողմից ցեղասպանությունը դատապարտող որոշման ընդունմանը՝ նոյեմբերի 22-ի նիստում:

³ Մինչև «Հայաստանի Ղարաբաղ կոմիտեի» 11 հոգանոց վերջնական ցուցակի հաստատումը (88-ի մայիսի 31), նախաձեռնող խմբի կազմն անընդհար փոփոխվում էր, ինչի շնորհիվ այս ժողովները սրապեղ էին «Պուգաչովի վրան» անվանումով:

⁴ Ջորի Բաղյանի հետ Լոմիթեի հարաբերությունները վերջնականապես խզվեցին 88-ի հունիսին, երբ վերջինս առաջարկեց հանրահավաքներն ավելի թեմայներու համար «ինչնա-հրկիզում» կազմակերպել, ինչին ի պատասխան առաջ խաչվեց հենց նրա թեմանությունը:

⁵ Ապրեն Դեմիրճյանին աշխատանքից հեռացրին 88-ի մայիսի 21-ին: Թեև նա չէր ապարտում համապայման շարժմանը, բայց հերմահու Ազգային հերոսի կոչման արժանապատի թիվն այլ արժանիքներին՝ նաև այն բանի շնորհիվ, որ այս լարված օրերին Երևանում աղյուս ջնափվեց:

⁶ Բաբկեն Արարիքյան (Պեդհամարյանի դասախոս, որպես, ֆիդաթ գիտ. թեկնածու), Համբարձում Գալստյան (պարտ. գիտ. թեկնածու, ազգագրագետ), Սամվել Պետրոսյան (հեռուստադրամ), Ալեքսան Զալիդյան (պարտ. գիտ. թեկնածու), Ռաֆայել Ղալաբյան (Վերդե-միայի թղթակից անտում), Սամսոն Ղալաբյան (ուսույի), Վալդեն Մանուկյան (Պեդհամարյանի դասախոս, որպես, ֆիդաթ գիտ. թեկնածու), Աշոտ Մանուկյան (դրոյի ուսմագետ), Վանո Միրադեղյան (արհմիակցի), Դավիթ Վարդանյան (բարոսարդիայի դեկա-վար, ֆիդաթ. գիտ. թեկնածու), Լեոն Մեր-Պետրոսյան (Մարենստարանի ակադ գիտաշխատող, բանասիրական գիտ. դոկտոր): 12-րդ անդամը՝ Մանվել Սարգսյանը, մեկ ամսից հրաժարվեց անդամակցությունից:

⁷ Շանթ շարժությունն ին միայն ևս 12 հասարակավոր, իսկ հունիսի 7-ին՝ տղիալիստական աշխատանքից հեռու Գառնիկ Մանուկյանը: 300-ից ավել նախադրյալներն ապառնում էին, որ իրենի էլ հունիսի 10-ից կոմունան հասարակին: Հունիսի 12-ին հյոծված Շանթ շարժությունյանը դարարեցրեց հունիսի 15-ի նախաշրջանին պահանջներ ներկայացնող հաշարույց Լենկովմի իարդուդար Սուրեն շարժությունյանի հախարիսույմներից հետո: Ոմանից դարարեցրին հունիսի 15-ին, երբ նախաշրջանը պահանջներ բախարարող որոշումներ ընդունեց, մասնափրապես ԼՂԻՄ-ը ՀՊԱՀ-ի մաս կանաչեց, Սումգայիթի դատապարտման և այլ հարցերով, սակայն շուտով՝ հուլիսի 18-ին, որոշումներ չեղյալ հայարարվեցին:

⁸ Վահագն Դավթյանի՝ Շանթ շարժությունյանին նվիրված բանասրերծությունից:

9 88-ի նոյեմբերի 13-ին Լոմիպեի անդամ Աշուր Մանուչարյանը և «Գթություն» բարեգործական կազմակերպության նախագահ Խաչիկ Սրամբույանը թափուր մնալու ընդդառնություններում ընդունվելիս ՀՄՍՀ ԳԽ պարզամտավոր:

10 Նոյեմբերի 22-ին ակախած ՀՄՍՀ ԳԽ նախարարանը մի երկու որոշում ընդունելուց հետո ընդհատվել էր: 24-ին Օպերայի թատրոնի շենյոն համաժողովի որոշումն ինքնաձեռնադրվելուց ԳԽ պարզամտական նիստը: Նախաշրջանը պատահելու համար նոյեմբերի 24-ի կեսգիշերից միջուկային հաստիկ դրոշմում և պարզապես ժամ:

11 Գործների միության ղեկավար անդամներին գեներալ Մակարյանի գլխավորությամբ դեկտեմբերի 10-ին ճեղքակալվելին Լեոն Մեդր-Պեդրոսյանը, Բաբկեն Արարիչյանը, Վալգեն Մանուկյանը, Սամվել Գևորգյանը, Ալեխանն Հակոբյանը: Ընդհատված անցած Լոմիպեի մյուս անդամներին նույնպես շուրջով ճեղքակալվելին: Վաճառ Սիրադեղյանին և Սամսոն Դադարյանին՝ դեկտեմբերի վերջին, իսկ հունվարի 7-ին մյուսներին, երևանյան բնակարանում ընդհատված հավաքի ժամանակ: Միայն բոլորին ճեղքակալելուց հետո հայտարարվել էր իրարմի մասին: Բաղրամյանի կազմակերպողներին Կեդրավորակային Ծավալում «Բուրիլով» և «Մարտականայն Կիշինա» բաները: Լոմիպեի ճեղքակալումն վեց ամիսների ընթացքում շարժման ատագնությունը պրանկնեյ հոկտեմբերի 23-ի գաղթին որոշումը հաստատված փոխարինող կազմը:

12 Եթե 2018-ի Միտ հեղափոխությունը «ֆեյսբուքյան» էր, իսկ 2008-ի շարժումը կոչվում է նաև «DVD» հեղափոխություն, ապա 1988-ի Շարժման Կեդրավորության պարսածման համար նման միջոց էին թողնվելները, որոնք եղելում էին ինֆորմացիան:

(Աշուրի շեփորը թանգարանային նմուշի է վերածվել, իսկ Ջաքարյան Խաչիկն անհուշարձան է մնացել, լուսանկարները սոսկ ընտանեկան մասունք են դարձել): Երեք անհու օր, մակաշովյան ջարդ օրանալակայանում, Օպերան լցված մղկտացող ծեծվածներով: Հետո՝ նոր թափ, ինչեր, ինչեր, ինչեր ասես, որ չեն եղել էր օրերին: զողերն անգամ չէին զողանում, Սիրադեղյան Վանոն կարդաց հրապարակում: «Հանրապետության ողջ տարածքում հանցագործ ամեն գործողություն դադարեցնում ենք: Կարող եք վատահել մեզ, և դռները բաց թողած՝ ամբողջ օրն անցկացնել Ազատության հրապարակում: Ձեր տների ապահովությունը երաշխավորում ենք, այո, մենք՝ գողերա»: Էլի ճնշումներ, էլի կեղծումներ, էլի կալված Ազատության հրապարակ: Չենք ընկրկում, ամեն ուրբաթ Մատենադարանն ենք մեզանով անում: Օգոստոսի 19-ին Կոմիտեն հանդես եկավ «Հայոց համազգային շարժում» ծրագրով:

Աշունը մեզ առատ բերք էր խոստացել: Նոր ուստարի՞, եղևի՛, բարի, սեպտեմբերի մեկին Լեթ հարյուր ուսանող Ազատության հրապարակին իր համար շուրջօրյա լսարանի վերածեց. նստել ենք «դասի» ու տուն չենք գնում: Աշուն է, ճուտ ենք հաշվում: Կարմիր մեծ տոնին՝ նոյեմբեր 7-ին, հրապարակում Կոմիտեի տղաներին տրիբուն կանչեցին, բայց մերժում ստացան, բոլ ու փոշման թողին հեռացան: Ահեղ իշխող էին, իսկ էս աշուն կուռկուռի ձագ էին դարձել. Կոմկուսը ճաք էր տվել⁹: Ինչ արին-չարին՝ մեր ատամները ո՞չ համրեցին, ո՞չ ջարդեցին: Եվ ճարահատ աշնան վերջին հատուկ դրություն, պարետային ժամ մտքեցին¹⁰. երեկոյան տասից հետո դուրս գալ չկա, երևանում հավաքվել չկա: Դա էլ հոգ չի, էջմիածին, Լենինական, Կիրովական, հազար ու մի քաղաքներ կան: Ձմռան նման ձախող օրերը կգան ու կերթան, ու չենք տխրի մենք մեր երկրում, բայց ձմեռը մեր շտկված մեջքը կտորեց. դեկտեմբեր 7-ը սև օր բերեց մեր գլխին... Բռունցք դարձած մեր ձեռքերը խոնարհվեցին, մի օրվա մեջ հիսուն տարվա մեռել վերցրին ու թաղեցին, ու շվարած, դեռ պապանձված՝ փլատակված մեր տան բակում լուրն առանք. Կոմիտեի տղաներին բանտարկել են:



Դեկտեմբեր 10-ին, երբ աշխարհը Մարդու իրավունքների օրն էր նշում, երբ Սովետով մեկ սգո օր էր հայտարարվել մեր երկրաշարժի զոհերի համար, Գորբաչովը հրաման տվեց Կոմիտեին մեկուսացնել¹¹: «Լենին-պարտիա-գորբաչով»-ը դարձավ անեծք:

89-ի ամենատխուր Նոր տարին՝ անձմեռապա, անտոնածառ, անտերուդուրս Ամանորը: Գարնանամուտին նորից պիտի մեջքներս շտեկինք, և արեցինք. Սումգայիթի տարեկիցը դարձավ մի նոր զարթոնքի օր. փետրվարի 28-ին մի միլիոն մարդ Ծիծեռնակի բլուրն ի վեր ելավ կրկին:

Գարուն եկավ՝ թռուցիկների չքնաղ գարունը¹²: Մարտի 8-ին երթի ելան մեր մայրերը, արդեն անթաքույց՝ եռագույններով: Ապրիլ 24-ն առաջին անգամ պաշտոնապես հիշատակվեց: Ֆուտբոլային խաղերն անգամ երթ ու ցույցի ենք վերածում, չկա բազմամարդ մի միջոցառում, որ ընդվզման նոր ալիքներ չբարձրացնի: Ու մայիսը մեր պայքարի զիլ ամիսը, մեզ նոր ծաղկունքով պսակեց: Նրանք մեզնից սարսափած են, այ քեզ հրաշք՝ անգամ մայիսմեկյան շքերթ չարեցին, որ Սովետի ամենամեծ ու հաստատված տոներից էր, անգամ մայիս 11-ին ստիպված եղան հանրահավաքն արտոնել ու քաշվեցին (եկան խոսելու, աղմկեցինք, հետ չքվեցին), անգամ մայիսի 14-ին նախատեսված Երևանի «Արարատի» ու Թիֆլիսի «Խինամո»-ի ֆուտբոլային հանդիպումը չեղարկեցին, բայց էդ օրը մենք հաղթանակ գրանցեցինք. Շարժման երեք թեկնածու ԽՍՀՄ ժողպատգամավոր ընտրվեց, որոնցից մեկը՝ Ստարավոյտովա Գալինան (ձայների 75.1%-ով):

ՄԵՐ ԳԱԼԻՆԱՆ

Հեռվից դժվար է հասկանալ ո՞նց պատահեց, որ 30-ը բոլորող «նորանկախ» ու «հինավուրց» Հայաստանն իր ազգային հերոսների շարքում էդպես էլ մի կին չունեցավ: Կոմիտեի տղաներին հանգիստ խղճով կարելի է հիմադիր հայրեր կոչել, բայց էս դեպքում արժի ամրագրել, որ մայրն Արցախն էր, ոչ թե Հայաստանը: Ղարաբաղյան շարժումից է ծնվել Անկախ Հայաստանը: Մինչդեռ Արցախը կին հերոս ունի՝ Ժաննան Գալստյան՝ դերասանուհի, որ բեմից իջավ ու զենք վերցրեց (անգամ «գլավա»-ն նրան ներվեց): Թե ժամանակին Կապուտիկյան Սիլվան հրաժարվել «մայր Հայաստանի» իր դերից, գուցե դառնար անառարկելի էն հերոս կինը, որ Անկախության սիմվոլը լիներ, բայց չստացվեց, դեռ 88-ի սեպտեմբերին, երբ Կոմիտեն Ազատության հրապարակում նրան խոսափող տրամադրեց, ժողովուրդը երես թեքեց, իսկ 90-ի ընտրություններում ամօթալի պարտություն կրեց. ստացավ 60 ձայն: Նրա «Էջեր փակ գործներից» զրքում առկա է մի զրջման միտում, թեև չկա հիմնավորում: Շատ են խորհել Մարգարյան Մարտի մասին, որ էդպես էլ Կապուտիկյանի սովորում մնաց, նրա դատեր Բայանդուր Անահիտի, որ նվիրումի քայլող մարմնացում էր... Պետրոսյան Մանուշակի մասին, որ 88-ին Բյուրականի աստղադիտարանի գիտքարտուղարն էր, և Ղարաբաղի հարցով բազմաթիվ դիմումներում տասնյակ տղամարդկանց մեջ մեկ էլ հանկարծ հայտնվում է մեն մի կնոջ՝ հենց իր անուն-ազգանունը. նա «Հայաստան» հիմնադրամի առաջին տնօրենն էր ու խոշոր հաշվով չզնահատվեց:

Անկախացման գործին մեծ նպաստ բերած տասնյակ էջերով կանանց անուններ իմ «Իսկ գորոցներից» կարող եմ հանել, բայց ուրիշ էր մեր Գալինան հենց մենակ էն պարզ պատճառով, որ հայ չէր ու կաշկանդված չէր «նախնայաց սուրբ գործը» առաջ տանելու մեր հին մարմաջով: (Քերոլյան Քոքսն էլ հայ չէր, ոչ էլ Յվետանա Պասկալևան, բայց նրանք փոքր ի շատե գնահատվել են): Մեր ազգային հերոսների շարքում ծագումով հայ չի միայն Ռիթկովը («մուօ ու ցրտի») իրական հայր Ռիթկովը, որի որոշմամբ Մեծամորի ատոմակայանը փակվեց, երբ Կոմիտեի տղաները բանտում էին, Ադետի գոտու վերականգնումը տապալած Ռիթկովը, Փաշինյանին ծաղրող Ռիթկովը, «չինովնիկ» Ռիթկովը, որի Սովետը մինչև վերջին շունչը պայքարում էր Հայաստանի անկախացման դեմ): Իսկ կոմիտեական, մեր հարցի պաշտպան Գալինային դեռ պարտք ունենք չվճարված: 89-ի տխուր Նոր տարում կարողում էինք նրա «Հայաստանի իմ քույրերին ու եղբայրներին՝ ամանորյա շնորհավորանքների փոխարեն» թողուցիկն ու հույսի լույսով լցվում: Ասում են՝ 90-ին, երբ Տեր-Պետրոսյանը հանդիպել էր Սովետի ներքին գործերի նախարար Բակատինի հետ, Գալինայի ներկայությունն էլ է բարերար ազդեցություն թողել, որ 2 000 «կալաշնիկով» ատանանք «Հատուկ գունդը» զինելու համար, այն դեպքում, երբ Գորբաչովը պահանջում էր մեզին «զինաթափվել»։ Հազար ու մի գործ է արել Ստարավոյտովան մեզ համար, հիշատակը մնա անմար։ Թե Սախարովին մեր մայրաքաղաքի սրտում կիսանդրիով մի հրապարակ տվինք իբրև երախտիք, ապա Ստարավոյտովա Գալինային ըստ արժանվույն էր պես էլ չմեծարեցինք (Ավանում թիվ 177 դպրոցը նրա անունով է, բայց աշակերտներն անգամ զիսի չեն, թե ինչու)։ Երկրապահն էլ ժամանակին մի պատվոգիր է շնորհել։ Թե ինձ հարցնեք՝ Գալինան է իմ հերոսը, շատ ավելի, քան Ռիթկովը։



Նեչ էլ վայիս չի մայիսը, ամենալավ ամիսն է։ Պարետային ժամին նայող էլ չկա, տնավորվել ենք Մատենադարանի բարձունքում ու օրինիբուն էլ նստացույց, էլ հացադուլ, ինչեր ասես, որ չենք անում։ Էդ մայիսի 28-ին վերականգնված Եռագույնը ծածանեցինք. մեր պարտադրող բռունցքի ուժով կոմունիստները կարմիր գրիչն իրենց կոտրած ձեռքն առան՝ «պատմության սխալը» շտկեցին։ Իսկ մայիսը՝ մեր պայքարի զիլ ամիսը, որ այլևս եռագույն էր, կրկին հուսախաբ չարեց, իր վերջին օրով՝ կեսգիշերին, ազատ արձակված Կոմիտեի տղաներին մեզ մոտ բերեց՝ Մատենադարան։ Ու Էդ գիշեր նրանց հյուժված մարմինները մեր գիրկն առանք ու նշեցինք, առանց տորթի ու մոմերի, Կոմիտեի տարեդարձն ու վերադարձը։

Հետո թացը չորից զատելու, ջրբաժանների ամառն էր. «չորս պատի» մեջ մեզ տեղավորել չի լինի, բայց Շարժումը, թե կառույցի չվերածվի, առաջ գնալ էլ չի ստացվի։ ՀՀԸ-ն իր հիմնադիր ժողովն արեց և ի վերջո գրանցվեց¹⁵։ Հարցերը շատ էին, առանցքը՝ մեկը. ինքնորոշում, թե՛ հողի վեճ, հայդատականություն, թե՛ ինքնիշխանություն։ Այս ամառը շատ էինք երազել, մեր պայքարն էլ էր մրգի պես հասել, ու տաբու չէր Անկախություն պահանջելը։

Իսկ պատերազմն արդեն չոքել էր դռանը, ըստ էության 88-ին մեկնարկել էր չհայտարարված ու նոր թափով ծավալվել էր շրջափակմամբ, որ այլ բան չէր, քան Հայաստանի պաշարում, ասել է թե՛ իր բնույթով կազմակերպված և ռազմական գործողություն¹⁶։ Մի բան էլ կար. մեր ԳԽ-ում արդեն հինգն էինք, չհաշված մեկ պատգամավոր, որ ընտրվել, բայց բանտում էր¹⁵։

ՀՀԸ-ի անդրանիկ համագումարի աշունն էր։ Վերջ, մենք ուժ ենք, «փշխողներն» ի զորու չեն հարցեր լուծել, մենք պիտի գանք իշխանություն։ Թվում էր, թե մի դարավոր վախ էինք կոտրել (ռուսը հենց որ ոտքը քաշի, թուրքը կգա ու մեզ կուտի)։ Ի պատասխան էս ընդվզման՝ աշնան վերջին նոյեմբերի 28-ին, Մոսկովը մեր հարցը փակեց, երկու տարվա ողջ պայքարի արդյունքները ջուրը անեց։ Հաջորդ օրը երևանում շատ մարտական «սգո երթ» էր։

Իսկ էդ ձմռան հենց առաջին օրով ևեթ «Մի՛ւս-ցուն»-ը որոշումի վերածեցինք¹⁶։ Հայաստանն ու Ղարաբաղը՝ մի պետություն, մենք մերն ապինք ու արեցինք, թեև պարզ էր՝ Մոսկովն էլի կբեկանի։

Ծանր ձմեռ, դաժան հունվար, 90-ի հին Նոր տարին սև օր եղավ. Բաքվում մերոնց կոտորում են։ Յոթ օրուգիշեր անարգել մորթ ու թալան։ Ոչ միայն Արցախում, անգամ Գորիսում են արտակարգ դրություն մտցրել, իսկ Բաքվում դեռ հապաղում են, որ մինչև վերջ հայաթափեն¹⁷։ Ինքնապաշտպանական առաջին կատաղի մարտերն են, ու չգիտեմ՝ որը պատմեմ, որը թողնեմ։ Կարմիր բանակը մեզ զինաթափում, խեղդած է պահում, հակառակորդի տեղը լեռացնում։



13 Հունիսի 17-ին Պեյրհամաքսարանում րեղի էր ունեցել ՀՀԸ հիմնադիր ժողովը։ Հունիսի 25-ին ՀԽՍՀ ԳԽ-ն ՀՀԸ-ն գրանցելու որոշում կայացրեց, որն ի կայարար անվեց միայն նոյեմբերի 1-ին՝ ՀՀԸ առաջին համագումարի նախօրեին։ ՀՀԸ-ն իսկապես համապցային ընդգրկում ուներ և միակուսակցական ԽՍՀՄ-ում այլ կերպ, իսկ իբրև հասարակական կազմակերպություն չէր կարող գրանցվել։ Ըստ Էոթյան ժամանակի հայաստանյան գրեթե բոլոր կուսակցական-խառնական միախրները 90 թ. հայրենվեյին խորհրդարանում ՀՀԸ-ի միգրյով։ ՀՀԸ անդամ կամ համակիր թեկնածուները դարձան պարզամտներ, ապա նոր ձևավորվեցին ֆրակցիաներ, այդ թվում՝ դաշնակցությունը, որի ՀՀԸ ցուցակներով ընտրված անդամները շուրջով ինչնաքայահայրվեցին։ Այս օանապարհով ունեցանք բաշմակուսակցական խորհրդարան։

14 Հունիսի 21-ից սկսվեց ամբողջական ջրգափակում։ Հայաստան մրնող բեռների 85%-ը գալիս էր հյուսիսից՝ Ղազախից, հարավից՝ Նախիգևանով։ Գնացիներն ամիսներով կամ րեղ չէին հասնում, կամ գալիս էին թաքսված։ Բոլորի ալիի շնորհիվ սեպտեմբերի 25-ից կարև ընթացիով օանապարհները բաշվեցին, բայց բեռների նույնիսկ կեսը րեղ չէր հասնում։ Գրեթե ամբողջովին փչացվում էր նաև Մեդրի գոյու վերկանգման համար նախաըեսված գույին ու շինանյութը։

15 Օգոստոսի 27-ին ՀԽՍՀ ԳԽ-ում թափուր մնացած րեղերի համար արդեն պաշտոնապես օանաշված ՀՀԸ-ն իր թեկնածուներն առազադեց։ Հինգ րեղից չորսում հաղթանակ րարան Լոմիլեի անդամներից Առնը Մեդր-Պեյրոյանը, Ռաֆայել Ղազարյանը, Արցախի «Լոռնկ»-ից Ռոբերտ Բոչարյանն ու խաղանրարակյա Արկադի Մանուչարովը։ Մինչ այդ Շարժման ներկայացուցիչներից ԳԽ պարզամտվոր էին ընտրվել Ա. Մանուչարյանը և Ռ. Սրամբոյյանը։

16 Դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ ԳԽ-ն միախան որոշում ընտրուեց Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիախրման մասին։

17 Արցախում և հարակից րարածիններում արտակարգ դրություն մրցրվեց հունիսի 15-ին, իսկ Բախիում հունիսի 20-ին։

18 90-ին Հայաստանում արձանագրվել է շուրջ 230 հազար բռնագաղթածների առկայություն, իսկ աղեկորի գոյություն մոտ 530 հազար մարդ շարունակում էր մնալ անօթևան:

19 Առաջացած իրավիճակում Լենգրոնն ապրիլի 3-ին ՌՍՀՄ կառվից դուրս գալու մասին օրենք ընդունեց, որով սահմանվում էր խնդրա-հարույց մի կարգ՝ մասնավորապես հանդիմանել և 5-ամյա անչուժային շրջան: Օրենքն ամբողջ ուժով այդպես էլ չկիրառվեց, իսկնի որ հազարորդ արևելաֆրոն ՌՍՀՄ-ը դարարեց գոյություն ունենալ:

20 90-ի ՀՌՍՀ ԳԽ ընտրությունները ետախույ էին: Եթե թեկնածուներից մեկը չէր պահում մասնակիցների կեսից ավելի ջայներ, նշանակվում էր կրկնական իրավություն (ստավել ջայներ պապած երկու թեկնածուներով): Եթե ընտրարեքսմասում իրերում չէր սարահոկվել, կամ ընտրություններն անվավեր էին խանաչվել, նշանակվում էր նոր օր, և կարող էին առազարդվել նոր թեկնածուներ: Հնարությունների առազին օրը մայիսի 20-ն էր (կրկնական իրավությունների օրը՝ հունիսի 3-ը), արդյունքում ՀՀ-ից ընտրվեց 72 պարագամաեր, ընդ որում՝ 11-ը՝ ԼՂՀ-ից, իսկ կրկնական ընտրության օրը՝ հունիսի 15: Հունիսի 20-ին րեդի ունեյալ նորընտիր խորհրդարանի առազին նիստը:

21 ՀՌՍՀ ԳԽ-ն հունիսի 20-ին որոշում կայացրեց, որ ՌՍՀՄ ներքին րդիներին և բանակին արգելվում էր հանրապետությունում որևէ պարմից գործողություն կարարել ստանց մեր խորհրդարանի թույլտվությամբ:

22 Հունիսի 25-ին հրապարակվեց Գորբաչովի հրամանը ՌՍՀՄ-ում օրենքով չնախատեսված փնական կազմակերպություններն արգելելու և անօթևանական վեներ բռնագաղթելու մասին: Հունիսի 30-ին ՀՌՍՀ ԳԽ-ն որոշում կայացրեց Հայաստանում և Նադաբարում հրամանագրի կանեյման վերաբերյալ: ԳԽ պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովի նախագահ դարձավ Վազեն Սարգսյանը, որն արդեն ի պաշտոնն շարունակեց մինչ այդ կենտրոնացված որևէ հրամանադատության չենթարկվող աշխարհաբորի հավախագրումը մի որոշի պակ:

23 Հայաստանի Նադաբաղ կոմիտեի վերջին ժողովին մասնակցել է 8 հոգի (բայապա էին Ալեխան Հակոբյանը և Համբարձում Գադարյանը, իսկ Սամոն Ղազարյանը մի խանի ամիս առազ դուրս էր եկել կառվից): Առազարդված թեկնածուները Ասոն Աեր-Պեպրոսյանը և Վազեն Մանուկյանն էին, որոնք և ջնանակցեյին գադրնի իրավությունները: Հարազատ մասնակիցները բայահայրել են, թե ում են րվել իրենց ջայնը: Ասոն Աեր-Պեպրոսյանը 4 ջայն (Ռաֆայել Ղազարյան, Բաբեն Արարիյյան, Վանտ Միդադեյան, Սամվել Պետրոսյան), Վազեն Մանուկյանը 2 ջայն (Դավիթ Վարդանյան, Աշուր Մանուչարյան):

24 ԳԽ 260 պարգամաերից մոտ 40-ը դեռ չէր ընտրվել, իսկ նախագահի ընտրության համար պահանգվում էր ընդհանուր թվի կեսից ավելին՝ 131 ջայն: Օգոստոսի 3-ի նիստն ընտրարվեց գիշերվա ժամը 3-ին: Առազին իրավություններ՝ Ասոն Աեր-Պեպրոսյան – 110 ջայն, Վարդիմիր Մուխիյան – 93 ջայն: Երկրորդ իրավություններ՝ Ասոն Աեր-Պեպրոսյան – 124 ջայն, Վարդիմիր Մուխիյան – 83 ջայն: Օգոստոսի 4-ին նիստը վերակալեց ժամը 14-ից: Երրորդ իրավություններն առազարդվեց նաև Պարույր Հայրիկյանը (որն ԱՄՆ-ից րվել էր իր համաջայնությունը), և պապալ 8 ջայն, Ասոն Աեր-Պեպրոսյանը՝ 123 ջայն, Վարդիմիր Մուխիյանը՝ 81 ջայն: Միայն չորրորդ իրավությունները Ասոն Աեր-Պեպրոսյանը պապալ 140 ջայն և ընտրվեց ՀՌՍՀ ԳԽ նախագահ (Վարդիմիր Մուխիյան – 76 ջայն):

25 Միմիստրների խորհրդի նախագահ Վազեն Մանուկյանն իր նախընտրական երայթում նշել էր. «Ոչ մի բան մեզ այնխան չի հետաշնում մեր երադանիցի, անկախ պերություններա-կանգնումից, ոչ մի բան այնխան չի խանգարում մեր րնարեսության րարապմանը, որին անօթևանական գործող փնական գրկարների արեղծած առակայունապումը» (13.08.90 թ.): Որոշում էր կայացրել ԵԳ նախարարությունը կից հադուկ պորաբաժանումներ արեղեբու մասին, որին կարող էին անդամագրվել աշխարհադրականները: Նախորդիվ՝ Ռեոն հունիսի 30-ին, 1114 հոգուց բաղկացած Միկիյայի



Պակաս հերոսական չէր թիկունքի կյանքը: Փետրվարի դրությամբ վեց միլիոն տոննա բեռ Ադրբեջանում տակով էին արել: Մի տասնյակի չափ ապրանք «տալոնով» էր, մնացածն էլ թե ժամանակին «տակից» ճարվում էր, հիմա արդեն մի կարգին բան չէր մնացել: Մոտ մի միլիոն մարդ տուն ու տեղ կորցրած՝ ժածքի աղետյալ ու փախստական¹⁸: Մեկ է, տանով չէինք տալիս, հազար ճակատով ու կուռ թիկունքով կոիվ էինք տալիս:

Անկախության ծարձակման մեր գարունն էր: Թե Մերձբաղյան երկրները, մեկը մյուսին հերթ չտալով, հոչակում էին անկախություն, մենք չէինք շտապում «զնացքից թոչել»։ մեր տեղը նեղ էր, պատերազմի բուլի մեջ էինք, ամեն ինչ պիտի օրենքով անեինք¹⁹, հազար չափեինք ու մեկ կտրեինք (ո՛ր ատաջ ընկնեինք, բա Ղարաբաղը): Նախ պիտի գանք իշխանության, նոր հոչակենք Անկախություն: Ուստի գնում ենք ընտրության²⁰:

Ուշ լինի՝ նուշ լինի, երեք ամիս ուշացումով, 70 տարվա մեջ առաջին անգամ իրական ընտրություններ ենք անում. Կոմկուսը՝ ընդդեմ ՀՀԸ-ի, դեռ ավելին՝ Արցախն էլ է Հայաստանի հետ քվեարկում: Մեկնարկի փուլից պարզ դարձավ. հաղթել ենք ու հաղթելու ենք: Չմարսեցին: Իշխանություն եք ուզում, դե ստացեք: Անկախության անդառնալի պիքի դեմ հրանդով կրակեցին: Հավանաբար արցունքի ծով պիտի դարձնեին Երևանը, հաջողվեց արյան լճակներ գոյացնել, քանի որ մենք զգոն մնացինք, չտրվեցինք ԿԴԵ-ի սադրանքներին: Կայարանից սկսեցին, Էրեբունի, Նուբարաշեն, մինչև անգամ Կենտրոն հասան ու Օպերան օղակեցին:

Էսպես եղավ. բոլորս գիտեինք՝ մերոնք Սովետի բանակից զենք էին վերցնում, բայց շատ հաճախ բեմադրում էին՝ իբր հարձակվել, խլել են: Մի Էդալիսի գլխանց կապած պայմանով էլ մայիսի 27-ի առափուտյան գնացել էին երկաթուղային կայարան՝ զենքի առևտրի: Պայմանավորվածի պես օղ կրակեցինք, զինվորներին իբր զինաթափեցինք, մեկ էլ հանկարծ դավադիր մի կրակահերթով վեց երկրապահ միանգամից սպանվեցին (էն էլ ասեմ, որ պատասխան կրակոցից Կարմիր բանակը մահ չգրանցեց): Տանկերը մտցրին Երևան ու աջուձախ կրակում են՝ լվացք կախող տնտեսուհուց մինչև պատշգամբ ելած ծխող աչքներին զինված աբստամբ է թվում: Երկու օր-գիշեր գարուն-սիրուն Երևանը ռազմադաշտի էին վերածել: Մեր մայիսը՝ մեր պայքարի զիլ ամիսը, զլխներին վայիս արեցին: 26 զոհված, 6 տասնյակից ավելի մարդ՝ վիրավորված, ժողովուրդը՝ հաբեկված: Ո՛ր մեկին հիշեմ, որին մոռանամ. մեքենայի մեջ աչքը կպցրած գետաշենցի էն սիրուն տղուն, (անօթևան փախստական էր հեզ ջահելի անունն անգամ չիմացվեց), որ կրակի տակից փախել, տուն-տեղ կորցրած եկել հասել էր Երևան, մուշ-մուշ անուշ քնած մնաց: Ոչ դատ եղավ, ոչ դատաստան, Երկրապահի մեր տղերքից մի քանիսի անունները հուշաքարին գրեցինք, իսկ խաղաղ բնակիչ անմեղ զոհերին մինչ օրս էլ ծաղկով հիշելու մի քար չճարվեց քարերի ամբոց մեր երկրում հայոց:

Բայց ամառը կարկտահար Անկախության ծիր դարձավ դալար ցողուն ու պսակվեց անզուգական մի ալ ծաղկով՝ Անկախության հոչակագրով:

Արդեն գիտենք՝ մենք ենք տեղը մեր երկրի: Հենց առաջին նիստից ևեթ պարզ էր դարձել (հունիսի 20)²¹. մենք Մոսկովին ենթակա չենք, ձեր զորքերը մեր երկրում պիտի հաշվի նստեն մեզ հետ, իսկ օրեր անց մի կարևոր հաղթանակ էլ գրանցեցինք. մեր զորքն ենք ունենալու (հունիսի 30)²²: Մենք ենք տեղը մեր զլխի, բայց դե երկրին ամեն դեպքում զլուխ պետք է: Երկրի դեկը Կոմիտեի տղաների ձեռքն է, թող իրենք էլ որոշեն²³: Օգոստոսի 3-ին վերջապես մեր ԳԽ-ն նախագահ է ընտրում: Առափուցից մինչ ուշ գիշեր հա սպասում ենք ու սպասում «ալիտակ ծիսին», ասես Հոռմի պապ են ընտրում. նիստը ձգվում, չի վերջանում: Մյուս օրը երեկոյան նոր լուրն առանք. վերջ, ընտրվեց՝ չորրորդ փորձից, Առնն է մեր դեկավարը²⁴: Ճակատագրի հեզնանքով հաջորդ օրը երկրում սուզ էր հայտարարվել (օգոստոսի 1-ին Երևան-Ստեփանակերտ ընկած ինքնաթիռի զոհերի հիշատակին):

Օգոստոսի 23-ին Անկախության հոչակագիրն ընդունեցինք: Պարզ է, չե՞, որ այսուհետ մենք անկախ ենք: Մեր պետական տոնացույցից ջնջված էս օրով ծնվեց Անկախ Հայաստանը, իսկ ծնունդը վավերացվեց աննախադեպ փաստաթղթով, որ թե երկրի ծննդականն էր, թե ազգային մեր տարածայն ու բազմաձայն մեծ իղձերի շտեմարանը, թե անկախացման ողջ գործընթացի կետ առ կետ հղացված պլանը, թե... թե... ու թե ինձ հարցնեք՝ 90-ի ամռանն արդեն անկախությանը «այո» էինք ասել մեր հոչակագրով:

Անկախության հոչակագիր, դե՛ հիմա տեսեք: Ու ԿԴԵ-ն մեր փառահեղ ամռան վերջը հարամ արեց: Թե ասֆալտի ֆիդայիներն ինչ չարիքի էին վերածվել, բոլորս գիտեինք (կովող տղու դի-

մակի տակ բռնանում ու թալանում էին), բայց օգոստոս 28-ի լույս 29-ի գիշերը եկանք հասանք առավել ցավոտ մի կետի, երբ մեր սրտի մայրաքաղաք Երևանում ինքներս մեր վերջը տվինք, երբ զինված ծուռն առաջին անգամ մահացու կրակ բացեց իր ազգընտիր պատգամավորի ուղղությամբ։ Եթե հարցնեք՝ Հոկտեմբերի 27-ն ինչի՞ց ծնվեց, ո՞նց պատահեց, որ մեր ազգը հենց ինքն իրեն ահաբեկող զավակ ծնեց, ապա կասեմ՝ ՀԱԲ-ի խելքից, որ թույլ տվեց գլխին սարքեն, իսկ որ վատից էլ վատթար էր՝ ստեղծվեց նախադեպ։ Էսպես եղավ. վրաերթի ենթարկեցին մեր Ռաֆայել Իշխանյանի՝ հայոց լեզվի մեծ ջատագով, պատգամավոր և ի վերջո վարչապետի աներոջը²⁵։ Բանակցելու համար ՀԱԲ-ի շտաբ մեկնած Այվազյան Վիտյան ու Գեղազնիկ Միքայելյանը սպանվեցին (երկուսն էլ՝ հետմահու ազգային հերոս)։ Մոցվեց արտակարգ դրություն, իսկ արդյունքում ՀԱԲ-ը լուծարվեց, անկախացման մեր պատմության ճերմակ էջին անջնջելի սև բիծ մնաց, ուրիշ ոչինչ²⁶։

90-ի տալոնով բենզինի աշունն էր, հերթը՝ էլ չասեմ, գնա-գալիս եմ։ Հոկտեմբերի 5-ին Հատուկ գնդի շքերթը տեսանք ու հուզվեցինք։ Կաթողիկոսն²⁷ օրհնում է զինվորին, իսկ զինվորն Աստծու և ազգի առաջ՝ երդվում²⁸։ Չէ՛, այլևս բացառված է. մեր երկրից դուրս չենք ծառայելու Կարմիր բանակին²⁹։

91-ի Նոր տարուց հետո Սովետը պահելու մի հուսահատ փորձ էլ ծնվեց³⁰. համամիութենական հանրաքվե մոգոնվեց։ Սովետ չկա, վերջացել է, ինչը պահենք։ Հազար ու մի հոգսեր ունենք։ Տարեսկզբին որոշեցինք՝ սովխոզները վերացնում ենք, հողը տալիս գյուղացուն։ Համակ աշխարհը հիացավ, մենք պոզ ու պոչ կպցրինք. «Հողը տվին գյուղացուն, գյուղացուն տվին հողին»³¹։ Իսկ իրականում սեփականատեր դարձած գյուղացին մեզ վերահաս սովից փրկեց (մեկ էլ սիգը Սևանի, ոչ թե կոնյակն ու ջերմուկը, որ ասում էին՝ մեզ կպահի)։ Սովամահ չեղանք, ապրեցինք, թեև արդեն շատերիս ձեռքը գործ չկար, ու պարենը քառապատիկ թանկացել էր³²։

Հետո «Կոլցո»-ի գարունն էր, որի հենց առաջին օրով՝ մարտի մեկին, որոշեցինք. Անկախության մեր հանրաքվեն ինքներս կանենք, բայց անօրեն Սովետի օրենքի տառը կպահենք, որ ոչ մեկը երբևիցե կպնելու տեղ չունենա։ Անկախության հանրաքվե՛, դէ՛, հիմա տեսեք ձեր հալը։ Ու հոգեվարքի մեջ հայտնված Մոսկովը, Բաքվի հետ ձեռք-ձեռքի տված, հարձակվեց մեզ խեղդելու։ Ապրիլ-մայիս՝ երկու ամիս բզկտում էին. ո՞րը պատմեմ, ո՞րը թողնեմ. Գետաշննը, որից միայն Հայկազունի երգը մնաց. «Չորս կողմը անդունդ է, ճամփեքդ՝ փակված, երկնքում սև ու մութ ամպեր կուտակված»։ Չէ, չեմ երգի պատերազմը...

Ապրիլյան մի կատակ-ծես կպատմեմ։ Էսպես եղավ. Ուլյանովին արտաքսեցինք հրապարակից (ապրիլ 13)³³։ Գիտեինք, որ ժամը 5-ին արձանը քանդելու են, շատերս գնացել էինք՝ թամաշա անենք, քչերս՝ ծպտյալ հրաժեշտ տալու։ Լուված սպասում ենք, երբ պիտի կռունկը 7- մետրանոց արձանն օդ հանի, մեկ էլ տեսնենք՝ գլխատում են։ Երբ սնամեջ գլուխը պոկվեց իրանից, մի քիչ ժանգոտ անձրևաջուր թափվեց վզից՝ արյան նման, ասես հրապարակային մահապատժի ականատես էինք։ Հետո կտրած գլուխն օդում հայտնվեց, ու փոթկացինք։ Իսկ երբ անգլուխ մարմինը պատվանդանից պոկեցին, ուրախ ծափեր լսվեցին, մեկ էլ՝ շամպայնի գմբողցներ։ Բեռնատարի վարորդը, որի թափքում հայնվեց հսկա մարմինը, ասեց. «Ժողովուրդ ջան, հետ կանգնեք, թող հարազատներն առաջ անցնեն»։ Մի քեֆը լավ ջահել փորձեց մագլցել քարշակը, որ Լենինի վրա միգի, ոստիկանները հազիվհազ հետ պահեցին, սա էլ թե՛, չէ՛, չէ որ չէ՛, հորս գլուխը կերել է, պիտի 2...։ Ծիծաղից թուլացել էինք։ Երբ քարշակը դանդաղ և հանդիսավոր շարժվեց հրապարակով, մարդիկ սկսեցին մեջը կոպեկներ նետել։ Սովետի ուրախ թաղումն էր, իր հատած կոպեկը դեռ շրջանառում էր՝ СССР գիր ու դուշով։ Կոպեկները թույլ զնգում էին՝ անգլուխ մարմնի հետ զարկվելով, ու կարծես չափազանց արժեզրկված մի բան հեռանում էր՝ վերջին գրոշն ու խարջն իր հետ տանելով։ Մարմինը պատկերասրահի փակ բակ շարտվեց, գլուխը՝ պահեստ։

Երկաայր սրի ու պառակտման մեր ամառն էր։ Երկնքներից ընկանք ուղիղ գազանանոց³⁴։ Բաժան-բաժան էինք եղել՝ ՄԽՄ ու ԱԽՄ, ՀԲԴՄ ու ՀՀԿ, ամենքը մի բան էր գոչում, ոմանք անգամ կոչ էին անում՝ հրաժարվենք հանրաքվեից ու միանանք Գորբաչովի պայմանագրին, հա՛, հենց հանուն Ղարաբաղի (Դաշնակցություն, Կոմկուս), իսկ ամենից անսպասելին ՀՀՇ-ի պառակտումն էր³⁵։ Շահումյանը կրակի մեջ, մենք՝ խոտվքի։

ՄԵՐ ՍԱՄՍՈՆԸ

Անգամ հեովից հեչ էլ դժվար չի հասկանալ՝ ո՞նց պատահեց, որ 30-ը բոլորող «նորանկախ» ու «հինավուրց» Հայաստանի ազգային հերոսների շարքում էրպես էլ ոչ Կոմիտեն հայտնվեց իբրև մեկ ամբողջություն, ոչ էլ 11 անդամներից որևէ մեկը։ Եղավ ինչ եղավ. Անկախության պատմության կեղծում, որի հետևանքով էսօրվա ջահելը մտածում է, թե Սովետը փլվեց, Անկախությունն էլ

օսկերապիվ հակադրեցության զոկադի ճևափորմնն սկիբն էր դրվել, որը մասնակցում էր սահմանների պաշտպանությանը։ Մինչդեռ ՀԱԲ-ը հրաժարվու՛ էր կատակարության ենթակայության փակ մյուներև՝ համարելով, որ հենց ինքն է Հայոց ազգային բանակը։

26 Չնայած պնդումներին, որ շուրջ 160 հազար փնտիրագրված անդամ ունեն, ՀԱԲ-ը լուծարման պահին ունեցել է 385 անդամ, առգրավել է 20 ինֆանտիզ, 19 ադրեռանակ, 28 հակակարկիտային հրանոթ, 4850 փամփուշտ։ Հարկանշական է, որ հանձնվելուց առաջ ՊԱՆ-ի նախագահ Բարսեղյանի գլխավորությամբ ՀԱԲ-ի Կրակայանից երեք խոշոր բեռնափորներով «ասլրանե՛ք» է դուրս բերվել։

27 Վազգեն Առազին կաթողիկոսը նորընտիր ԳԽ բալման նիստին նույնպես մասնակցել էր իր հայրապետական օրհնանիով։ Անկախայման որզ գործընթացում Հայաստանյայց առափերական եկեղեցին և անջամբ մեհախառն անտրանալի դեր ունեցան։ Մեր ազգային հերոսների ցանկում միակ հոգևոր առաջնորդն առայսօր Վազգեն Առազինն է։ Երան շնորհվեչ նաև ՀՀ խաղախացու առազին անձնագիրը։

28 Երրորդ սկսվում էր հերկյալ փողեղով. «Ես՝ Հայաստանի Հանրապետության խաղախայիս, փորագրվելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության և հասարակական կարգի պահպանության հայտով պորաբաժանումների շարիները, Ասրժոտ և ազցիս առգլե երդիում եմ՝ անմապորդ նվիրվել Հայրենիինս պաշտպանության և վերածնման սուրբ գործին, դառնալ նվիրյալ փնտիր Հայաստանի վերականգնվող պետականությանն...»։

29 ԳԽ հոկտեմբերի 17-ի որոշմամբ կանգնվեչ համընդհանուր փնտապարության մասին ՈԱՂՄ օրենիի գործերությունը հանրապետության փարածիում։ Հեպարու ծառայելու էինի միայն Հայաստանում, թեև նրանչ համար, ովիեր այլ վայրերում ծառայելու ցանկություն էին հայրնում, սահմանվում էր կարգ։ Դեռ 89-իչ Մոսկիան պահանգում էր «որասալիիներին» իրելորեն հերապնել։ Հայաստանում րելուկայիւծ խորհրդային 7-րդ բանակի փնտիրական րապախալ Միխայել Սկյանը ոչ մեկի նկարմամբ իրեական գործ չհարուչեչ, մինչև որ 90-ի հունվարիչ Հայաստանի ԳԽ-ն ապաիրեականացրեչ պահանգը (մայիսին չերարկվեչ գարնանային րրակոը)։ 90 թփսկանին խորհրդային բանակի րրակոըչ Հայաստանում իրագործվեչ ընդամենը 7%-ով։ Բայց միևնույն է, Գլխավոր շրարը մինչև 91-ի գարնանային րրակոըչ ապանալիչ նամակներ էր ուրարկում Հայաստանի իշխանություններին։

30 91-ի հունվարի 16-ին որոշվեչ ՈԱՂՄ-ի պահպանության հարչը դնել հանրաիվիի, նշանակվեչ օր՝ մարրի 17։ Հանրաիվիին չնսունակչեչին 6 հանրապետություն՝ 3 Մերձբալթյան հանրապետությունները, ինչպես նաև Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան։ Մովարի պահպանմանն «այո» ասաչ ընրրողների 80%-ը։

31 91-ին 90-ի համեմար գյուրրորրրում գրանչվեչ 11.3% ան։ Հայաստանի հորային ռեֆորմը միգրացայնորեն համարվում է բայտրիկ հագորիւծ րնրեական անրարարություն, ըար էուրյան՝ անիականաշնորհման այս գործընթայի շնորհիվ հնարաիոր եղավ խուսափել անկախության առազին րարիներին վերահաս տովիչ։

32 91-ի մայիսի դրությամբ առազին անհրաժեշրության աննրամթերիների գները նախորդ րարիս համեմար սակաչեղ էին 2-4.5 անգամ։

33 Երևանի գործկոմի նախագահ (այսինին խաղախապետ) էր ընրրվել Լոմիլրեի անդամ Համբարձում Գարսյանը։ Բարախագրուիոր թեև ճեռնպահ էր իվեարկել որոշմանը, բայց արշանը հանելիս հայրարարեչ. «Մենի իաղեչինի մոլախորը», իսկ սապմոնրաժման աշխարանիներին եկել էր րոնական սալիրակ սիգակով, աշխարողներին ցույումներ էր րալիս։


34 91-ի հունիսի 14-ին ՆԳՆ Երևանի պետավրրրեւչության հսկիչ ՄԻ-8 ուղրաթիոն իր հերթական թիռիչը կարարելիս վթարի է ենթարկվում և ընկնում Երևանի կենրանաբանական այգու մեզ։

35 91-ի հունիսին վարչապետ Վազգեն Մանուկյանը հայրարարեչ իր կողմիչ նոր խաղախան կարնակրալության արեղծման մասին։

36 «Այո» իմաստով խոսակցությունների թիվը՝ 2.042.262 մարդ (94.39 %), «ոչ» իմաստով խոսակցությունների՝ 10.002 մարդ (0.46 %):

37 Ինչպես 90-ի օգոստոսի 23-ի հռչակագիրը, այնպես էլ այս դրոշմը՝ Արամ Մանուկյանին հանձնարարելը խորհրդանշական կապ էր սրբեղծում Առաքին հանրապետության հետ: Եռագույնն արդեն օրենքով հաստատված էր (24.08.90 թ.), իսկ ՀՀ օրհներգն ու պինանշանը հաստատվելիս հազորդ տարիներին՝ նույն տրամաբանությամբ:

մանանայի պես մեր գլխին ընկավ: Տեսնես աշխարհում կա՞ ժողովրդավար մեկ այլ պետություն, ուր հիմնադիր հայրերին «ազգի դավաճան» պիտակն են կացրել: Տեսնես աշխարհում կա՞ մի ուրիշ ժողովուրդ, որ յուր ազգակցի ձեռամբ սպանված չորս ազգային հերոս ունի: Շատ են մտածել «մեր ժամանակների հերոսի» մասին (ի դեպ, համանուն մրցանակաբաշխությունն իր խորհրդով ՀՀ Քաղաքացու օրվան ավելի կապեր, քան Անկախության տոնին և առավել ազդեցիկ կլինեն, եթե պետական մրցանակի կարգավիճակով շնորհվեր): Ինչ խոսք, զի է, որ վերջապես մենք դուրս ենք գալիս «գնա մեղի՝ արի սիրեմ» տրամաբանությունից, վերջապես ազգի կենդանի հերոս զինվորականը մեզանից մեկն է: Վերջապես հերոսացնում ենք կյանքեր փրկող ու ապրեցնողին, ոչ թե սպանվածին կամ «ծանոթով» հերոս կարգում էռնեկյանի պես փողին փող չասող գործարարի, որ պարզապես Հայաստանում «ոխկալին» ներդրում է արել: Շատ են մտածել Կոմիտեի տղաների բախտի մասին, Սիրադեղյան Վանոյի, որին անգամ Թավրյա հեղափոխությունը հետ չբերեց, Համբարձում Գալստյանի, որի սպանությունը դարձավ Կոմիտեի անունը Հայոց պատմության էջերից ջնջելու առաջին «գործնական» քայլը: (Երևանի թիվ 83 դպրոցը նրա անունով է, բայց աշակերտներն անգամ գլխի չեն, թե ինչու): Բայց ուրիշ է մեր Սամսոնը՝ Կոմիտեի հաշտարարը, որին երպես էլ չհաջողվեց ընկերներին ի մի բերել: 88-ին ուսուցիչ էր մեր Սամսոնը Երևանի թիվ 183 դպրոցում, որ ժողովուրդը կոչում էր Բլեի դպրոց (տնօրեն Աշոտ Բլեյանի պատվին): Շարժման կարևոր հավաքատեղիներից էր: Էստեղ էին աշխատում Կոմիտեից ևս երկուսը. Մանուշարյան Աշոտն ուսմասվարն էր, Գալստյան Համբարձումը՝ ուսուցիչ: (Այս դպրոցի աշակերտներ էին Կոմիտեից չորսի՝ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ալեքսան Հակոբյանի, Վանո Սիրադեղյանի, Սամվել Գևորգյանի երեխաները): Սամսոնը Վանոյի մոտ ընկերն էր, բայց Մանուկյան Վազգենի հետ զնաց ԱԺՄ, հետո հանրային տեսադաշտից կորավ մինչև 2007: Ինքն է կազմակերպել Լևոնի ու Վազգենի հանդիպումը, որ արդյունք չտվեց: Վերջերս փողոցում պատահական տաքսի նստեցի, տեսնեմ՝ դեկին Ղազարյան Սամսոնը: Ու հիշեցի՝ «մեր ժամանակի հերոս» մրցանակ ստացած մի ուրիշ ուսուցչի, որ Երևանի մի դպրոցից դուրս էր եկել, գնացել գյուղում կոնյակի համով պանիր էր արտադրում: Մեկը երկու անող, կյանքին ժպտացող մարդու հաղթանակն է, ազնիվ քրտինքով տուն պահողի պատիվը, բայց և պետության պարտությունը, որ իր ուսուցիչը դպրոցը թողնում, պանրագործ է դառնում: Սեղծված պատմությամբ երկրի ցուցիչն է, որ իր հիմնադիր-ուսուցիչը չի փոխանցում սերունդներին անկախացման մեր պատմության իր անձնական զիտելիքը, փոխարենը՝ տարիներով տաքսի է քշում: Թե ինձ հարցնեք՝ Սամսոնն է իմ հերոսը, շատ ավելի, քան Էռնեկյանը:



Ամռան վերջին օգոստոսյան պուտչը եղավ ԴԿԿԻ-ն՝ մահվան գրկում ջղակծկվող կայսրության մեջ հեղաշրջման մի ձախորդ փորձ, որ ուղղակի արագացրեց գործընթացը:

Հետո մեր սիրո աշունն էր, որ երբեք չի կրկնվի: Սեպտեմբերի 21-ին «այո» ասացինք ազգովին մեր ընդհանուր սիրեցյալի Անկախությանը³⁶: Երկու օրից քվեարկության արդյունքների հիման վրա խորհրդարանը միաձայն կայացրեց Հայաստանի անկախության հռչակման մասին իր պատմական որոշումը, որ կրկին ընթերցեց Մանուկյան Արամը³⁷:

Ահա և վերջ: Հենց էսպես էլ ամեն ինչ եղավ. 88-ին սաղմնավորված, 89-ին իբրև պտուղ հասունացած, 90-ին իր Հռչակագրով երկնված, մեր նորածին ու վերածին Հայաստանը 91-ին անկախ ճանաչվեց, աշխարհը տեսավ ու մեզ ընդունեց: «Ի՛նչ, արդեն անկախ ենք, հիմա էլ ազատություն ենք ուզում» ասինք: «Ազատություն», մեզ կրկնեց հայի բախտը վերևից, չէ մի չէ՝ Երջանկություն, ո՛հ, փշոտ է ճանապարհը... դե, մնացածը՝ անգիր գիտեք: Եվ ուրեմն՝ կեցցե՛, Ազատ, Անկախ ու Երջանիկ Հայաստանը՝ ի փառս մեզ ու մեր խոխոց, և ի հեճուկս չարախնդրաց ոմանց, ասել է թե՛ չուզողների ինադու:

Իսկ վերջաբանի փոխարեն արժի հիշել անկախության հռչակման աղիթով Գև-ի ՀՀ քաղաքացիներին, հայ ժողովրդին ուղղված պատմական դիմումը.

«Վերադարձ դեպի ինքնություն հեշտ չի լինելու, մենի դեռ նոր ենի սկսել իայլել ասպարության Խանապարհով: Քաղաքակիրթ մարդկության անցած ուղին ջույյ է րալիս, որ դա մեկ օրվա հարց չէ, և, հարկապես, դուրին Խանապարհ չէ: Ուսրի խոնարհաբար յուրացնելով առազադեմ պե-րությունների փորձը՝ մենի պեպի է կարողանանի պահպանել և հարստացնել մերը: Այո՛, մենի գնում ենի դեպի համայն մարդկության ընտանիք, բայց արդեն մեր դրոշի ներքո, մեր անկախ պետականության և մեր ազգային սեփական դիմագծով: Ազատության Խանապարհին մեզ սպասում են նոր փորձություններ: Դա ամենօրյա ինքնություն է լինելու մեզ համար: Պահպանենի մեր ոգևորությունը, բայց համակրվենի իրապաշտությամբ, շարունակենի մնալ երազող, բայց պթաի դատողությամբ»

P.S. Դեկտեմբերի 25-ին, երբ մարդկության զգալի մասը Սուրբ ծննդյան տոնն էր նշում, երեկոյան ժամը 19.38-ին Կրեմլի գլխից կարմիր դրոշն իջեցրեցին: Վարագույր:

🏠 Արմեն Հայաստանյի
📍 Մախ Սիխապյան, Արմենպետ / Մարտին Շահբապյան, Ռուբեն Աթայան, Միլիթար Խաչատրյան



Անկախապող օրագիրը

Հարվածներ ծրագրավորող Նորայր Չիլինգարյանի օրագրից, որպես նա 13-14 տարեկանում գրի է առել Լարաբադյան շարժման և Անկախության պայքարի համար նշանակալի դեր ունեցող սոցիալական ու խառնական իրադարձությունները: Ավելի պարկերավոր դարձնելու համար հեղինակը նաև նկարապարդել է որոշ իրադարձություններ:



17/11/1990

Շուտով ՀՀՀ համագումար է լինելու: Գորբաչովի ելույթում ոչ մի լավ բան չկար, ինչպես նաև չէին նշված ճգնաժամից դուրս գալու ուղիներ – նշեց Իզիթյանը: Աֆանասյանը պահանջեց, որ Ռիժկովին հանեն, իսկ իր ելույթում բազմիցս հղում էր Տեր-Պետրոսյանին:

18/11/1990

Ըստ Նոստրադամուսի այս պետության վերջը կգա երեք տարի և յոթ ամիս անց: Գորբաչովը մտադիր է հայտարարել նախագահական կառավարում: Հանրապետությունները չեն ցանկանում իրենց սովորենիտետի խախտում:

19/11/1990

Լարաբադում սպանում են մարդկանց: Օդանավակայանը գրավել են ադրբեջանցիները: Արդեն շուտով չի լինի մթերք: Հայաստանին պետք է 10 ԻԼ-86 նաև արտասահմանյան թռիչքների համար, որովհետև շրջափակման պարագայում զնաքները պետք չեն:

20/11/1990

Լարաբադում գյուղերից մեկի վրա հարձակում է եղել, բայց հայերն այն հետ շարտեցին: Վազգեն Սարգսյանն ասաց, որ սահմանին կան 500 զինված տղաներ, ու երբ պետք լինի՝ կօգնեն:

21/11/1990

Ելցինը գնաց Ուկրաինա՝ պայմանագիր ստորագրելու: Իրեն պալատում են տեղավորել ու նա շատ գոհ է: Հիմա Ռուսաստան գալու է Ղազախստանի դեկզագիա, և Ելցինը չի իմանում իրենց որտեղ տեղավորել: Պալատ են նորոգում հյուրեր ընդունելու համար: Ադրբեջանը ջանում է ստորագրել Ռուսաստանի հետ առևտրային պայմանագիր, որովհետև այն պարունակում է ընթացիկ սահմանները ճանաչելու կետ:

23/11/1990

Սկսվեց ՀՀՀ համագումարը: Շեյնին իր ելույթում ասաց, որ ռուս դեմոկրատների ցանկությունն է՝ ավելի շատ ազատություններ տրամադրել հանրապետություններին: Այդ պատճառով իրեն բոլորը հայհոյեցին, բացի մի պատգամավորից, որ բոլորի համար ներողություն խնդրեց: ՀՀՀ համագումարը անցնում է Կոմկուսի համագումարների շենքում:

25/11/1990

Համագումարին տաջիկ է խոսել: Տեր-Պետրոսյանը նշել է, որ պայքարն անկախության, և ոչ թե Լարաբադի համար է:

26/11/1990

Հողի մասին օրենք են ընդունում: Համագումարին խոսեց Վազգեն Ա-ն: Գորբաչովը ստացավ Նոբելյան մրցանակ:

28/11/1990

Հայաստանի Կոմկուսի համագումար:

30/11/1990

Գորբաչովը մեկնել է Մոլդովա: Վազգեն Մանուկյանը պնդում է՝ մենք չունենք անկախությանը հասնելու ծրագիր:

1/12/1990

Սիրվան Կոմկուսի համագումարում նշել է, որ պետք է մնալ ԽՄԿԿ կազմում:

2/12/1990

Գորբաչովն ուղիղ ասաց, թե դեմ է մասնավոր սեփականությանը: Վազգեն Մանուկյանը խուճապի մեջ է:

3/12/1990

Հայտարարված է տրոլեյբուսների վարորդների գործադուլ:

4/12/1990

Ռուսաստանն ընդունեց մասնավոր սեփականության մասին օրենքը:

Ադրբեջանցիները սպանել են վեց հովիվ և անասուններին: Ձիավորականները պնդում են, որ կա չքացահայտված ԲՏՌ՝ ՉԲՏՌ: Եվ չքացահայտված ուղղաթիռ՝ Չուղղաթիռ:


Հայերը պետք է ծառայեին աղետի գոտում, բայց այդտեղից էլ են փախչում: Գուցե և ճիշտ են անում, բայց չէ՞ որ կարող է պարտադրեն Ռուսաստանում և այլ հանրապետություններում ծառայել: Իսկ եթե մենք ստեղծենք պրոֆեսիոնալ բանակ՝ փախուստներ չեն լինի:

Պարույր Հայրիկյանն ասաց, որ անհրաժեշտ է ընտրել նախագահ և ստեղծել խումբ, որը կզբաղվի նոր սահմանադրությամբ:

Գերագույն Խորհրդի շենք ներխուժել է նոռակով մարդ և պահանջել, որ իրեն ելույթ տրամադրեն:

5/12/1990

Այսօր գազի արտահոսքի պատճառով շենք է պայթել: Վազգեն Ա-ն նամակ է հղել Գորբաչովին: Պարզվում է, որ նոռակով մարդը պահանջել էր (պարզ գրած չի) համաներում և ասաց, որ շենքը շրջապատված է: Մինչ նա խոսում էր, շենք ներխուժեցին զորքեր:



6/12/1990

Հայաստանում ուզում են դեղերի գործարան և հիվանդանոց բացել: Ինչ վերաբերում է Եվրոպոլիսին՝ երևի այն կկառուցեն:

7/12/1990

Ստեղծվել է հանգստյան օրերի, հիշատակի օրերի և տոների մասին օրենքի նախագիծ: Հեռուստացույցով խոսել է Տեր-Պետրոսյանը: Ժամանել են Բելգիայի, Մոնդոլիայի, Ամերիկայի, Հոլանդիայի ներկայացուցիչներ:

8/12/1990

Գերմանացիները կառուցել են մանկատուն, որն հիմա ընտանեկան է: Դեսպանները շրջել են աղետի գոտիով: Մետլոքն ասաց, որ չի կարող զավ Հայաստան, բայց իր փոխարեն ուղարկում է 8000000:

9/12/1990

Եվս մի տուն է պայթել: Հախտյորները սատարում են Միութենական պայմանագրին: Ոնց որ Կասպարովը հաղթում է:

10/12/1990

Քննարկվում է օրինագիծ, որն արգելում է կուսակցություններին ֆինանսավորվել դրսից:

11/12/1990

Կանգնեցված են սահմանադրության կետերը, որ հակասում են անկախության հռչակագրին:

12/12/1990

Հայաստանում արդեն ընդունված է մասնավոր սեփականության մասին օրենքը:

13/12/1990

Լյուբիմովին կրակեցին, բայց նա մնաց կենդանի: Գուցե որ նա չանի իր հաղորդումը: Չէ որ վաղը ուրբաթ է: Գորբաչովն իր կարեկցանքն արտահայտեց Լյուբիմովին:

14/12/1990

Շևարդնաձեն գնացել է Թուրքիա: Տեր-Պետրոսյանը հանդիպել է ԿԳԲ-նիկների հետ: Գյուղացիները կարծում են, որ հողը պետք է անվճար բաժանել:

15/12/1990

Պարզվում է Լյուբիմովին զանգել էին, ասել, որ մենակ գա ինչ-որ տեղ, կարևոր փաստաթղթեր փոխանցելու համար: Այնտեղ նրան և կրակեցին: Մոլորվացիները հիմար են:

16/12/1990

Մինչև Ադրբեջանը և Հայաստանը կենտրոնաձև Լարաբադի վրա, իրենք չեն դուրս գալու ԽՍՀՄ կազմից: Մուլը վերաբերում է Մոլդովային:

Հայ պատգամավորները չեն գնալու ԽՍՀՄ համագումարին:

17/12/1990

Լիտվացիները նույնպես չեն ներկայացել համագումարին: Չեն ներկայացել, քանի որ համարում են, որ ԽՍՀՄ-ից դուրս են: Իսկ հայերը ներկայացան Լարաբադի պատճառով:



18/12/1990

Ուզբեկները համաձայն չեն պայմանագրի հետ: Մարգարյանը թաքուն գնացել է համագումարի: Նա դավաճան է:

Հավանական է, որ շատ հանրապետություններ կմերժեն Միութենական պայմանագիրը:

19/12/1990

Սկսվեց համագումարը: ԽՍՀՄ համագումարին քննարկում էին Միութենական պայմանագիրը: Լավ է, որ մեր պատգամավորներն այնտեղ չեն գնացել:

20/12/1990

Հայաստանի համագումարում համակարգիչը սկսեց սխալ թվեր ցուցադրել: Սեղմում է մի հոգի, իսկ ցույց է տալիս իբր երկու: Կամ կողմ քվեարկեցին 57 հոգի, իսկ ցուցադրեց 20-ի մոտ:

21/12/1990

Շևարդնաձեն ասաց, որ Գորբաչովը վարում է դիկտատորի քաղաքականություն, ու հավանական է կհասցնի այնպիսի դիկտատուրայի, որ աշխարհը չի տեսել: Գորբաչովը երևի չէր սպասում նման բան: Ջորի Բալայանը գրել է տափակ դիմում Գորբաչովին:

22/12/1990

Շարունակվում է Միութենական համագումարը, քննարկում են ինչպես հանրապետությունների ձեռքերը կապեն: Բայց ինչքան շատ ձնշեն, էնքան շատ կդիմադրեն:

23/12/1990

Տեր-Պետրոսյանն անդրադարձել է Յազովի ուղտիմատումին, որում վերջինը սպառնում էր, որ կհրաժարվի պայմանավորվածությունից, որ հայերը ծառայեն Հայաստանի տարածքում, և ասաց, որ յուրաքանչյուր մեկի գործով ռազմական դատարան է տալու:

24/12/1990

Ճապոնացիները Լարաբադում ֆիլմի համար նյութ էին նկարում, իսկ իրենց կասետներն այստեղ զողացան: Կամ հայերը, կամ ԿԳԲ-ն:

25/12/1990

Հայաստանից առանգել են ժողովրդական համագումարի պատգամավորին, երբ նա թռնում էր Լարաբադից երևան: Այդ կապակցությամբ հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել Ջորի Բալայանը:

26/12/1990

Հայաստան եկել է գործարար գործարան բացելու համար:

27/12/1990

Կասպարովն աշխարհի չեմպիոն է: Հավելն ուղղել է նամակ Տեր-Պետրոսյանին, որում սատարում է նրան:

28/12/1990

«Վզգլար» հաղորդումը հանեցին, իրենք պատրաստում էին Շևարդնաձեի մասին հաղորդում: Պատրաստում են ԽՍՀՄ մարդահամար: Կարպովը պաշտպանում էր հայերին:

30/12/1990

Մոսկվայում վրանների ճամբարը շրջափակել են և բուլդոզերներով քանդել: 47 հոգի ձերբակալված է: Չիտայում բունտ է ջրի պատճառով:

31/12/1990

Թատերական հրապարակում ժողովուրդ է, տոնածառ, պարեր, եկավ Տեր-Պետրոսյանը, հիշեց հին բարի ժամանակները, բղավեց՝ Արցախ, Միացում, Պայքար, պայքար մինչև վերջ:

1/1/1991

Էլեկտրաէներգիան չի հերիքում: Գիշերը լույս են անջատել: Ժողովուրդը գնաց էլեկտրիկներին ծեծելու:

2/1/1991

Ստեղծվում է Դաշնային Խորհուրդ, ուր հանրապետությունների Գերագույն Խորհուրդների նախագահները քննարկելու են Գորբաչովի հետ 1991 թվի բյուջեն:

3/1/1991

Էլեկտրաէներգիայի ճգնաժամ է, քննարկվում է Սևան իջեցնելը: Ավելի լավ է նստել առանց լույս, քան դա:

4/1/1991

Մի քանի օրից երևի կանջատեն էլեկտրականությունը: Գագ չկա:

5/1/1991

Այսօր ճրագալույց է: Քանի որ էլեկտրաէներգիայի պակաս է, հիմա չեն հեռարձակում ծրագրեր, որ մարդիկ չմիացնեն հեռուստացույցները:

7/1/1991

Հայաստանում բոլոր հեռուստահաղորդումները հայերեն են լինելու: Էլեկտրականություն չկա: Գագը քիչ է:

8/1/1991

Չնայած հեռուստատեսությունն անջատում են, բավական էլեկտրականություն չհաջողվեց խնայել՝ ընդամենը, որ ամբողջ Լենինականը սնեն: 30-ին վառվել է 5 ենթակայան, 31-ին 3:

10/1/1991

Լիտվա բերում են դեսանտի զորքեր: Ծեծել են լրագրողի, բայց այլ լրագրողների հաջողվեց նկարել դա և ցուցադրել հեռուստատեսությամբ:



Գնել Նալբանդյան. Անկախության ճանապարհին

Խմբագիր Գնել Նալբանդյանը հիշում է, թե ինչպես էր լրագրողական 40 օրվա փորձ ունենալով լուսաբանում 1991 թվականի սեպտեմբերի 21-ի պատմական իրադարձությունը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին ձայնագրման միկրոֆոնը ձեռքիս, տարեց օպերատորի առջևից վազելով անցնում էի Երևանի փողոցներով, բակերով ու այգիներով և պատահական անցորդների, տաքսու վարորդներին, խանութների վաճառողներին, պուրակներում զբոսնողներին ու նարդի խաղացողներին, հղի կանանց ու երիտասարդ զույգերին տալիս էի միևնույն հիմար հարցերը. «Քվեարկության գնացել եք: Ի՞նչ եք զգում անկախության առաջին օրը: Հետո չե՞ք փոշմանի: Ի՞նչ է անկախությունը Ձեզ համար»:

Ես Հեռուստառադիոպետկոմի «Լրաբեր» ծրագրում լրագրող էի աշխատում այդ ժամանակ: 40 օրվա լրագրող էի: Ավելի ճիշտ՝ ոչ թե լրագրող, այլ ավագ խմբագիր: Հաստիքով էր այդպես: Պիտի նախ կրտսեր խմբագիր լինեի, տարիներ անց՝ խմբագիր, տասնամյակներ անց՝ ավագ խմբագիր, հարյուրամյակներ անց՝ գլխավոր խմբագիր: Բայց բանի որ ինձ գործի վերցնելու պահին ավագ խմբագրի հաստիքն էր ազատ, ես անմիջապես դարձա այդպիսին: Այդ փաստը երևի պիտի շույր ինքնասիրությունս, բայց պարզապես հուշեց, որ պետական ապարատում ֆիկտիվ աստիճանակարգումն այդ պետության անկման ցուցիչներից մեկն է: Սովետում շատ սովորական բան էր գրանցվել մի հաստիքով, բայց բոլորովին այլ բան անելը, վճարվել մեկ այլ սկզբունքով, արածը ներկայացնել միանգամայն այլ լույսի ներքո ու հեռացվել ոչ այն բանի համար:

Այնպես որ իմ սեպտեմբերի 21-ը սկսվել էր հանրաքվեից 40 առաջ՝ Հեռուստառադիոպետկոմ ընդունվելիս, կադրերի բաժնի խստապահանջ վարիչի խոժոռ հայացքի ներքո: Ավելի ճիշտ՝ անկախացումը դրանից 1 տարի առաջ էր: 1990-ի օգոստոսի 23-ին, երբ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1-ին նստաշրջանում ընդունվեց Հայաստանի անկախության Հռչակագիրը: Բոլորը հուզվեցին: Հատկապես նրանք, ովքեր ինչ-որ բան գիտեին Առաջին Հանրապետության Արամ Մանուկյանի մասին: Շատերն իհարկե չգիտեին ոչինչ. արգելված էր, բայց բոլորը ցույց էին տալիս, թե շատ լավ էլ գիտեն: Հռչակագիրը կարդալու պատիվը վերապահված էր մեկ այլ Արամ Մանուկյանի: Պատմական սիմվոլիզմը խեղդում էր մարդկանց կոկորդը:

Բայց Հայաստանում շատերն իրենց անձնական անկախացման բերկրանքն ապրել էին Հռչակագրից 2,5 տարի առաջ՝ 1988-ի փետրվարին, երբ Վաչե Սարգսյանյանն ու Իգոր Մուրադյանը հմուտ բեմավարների պես կառավարում էին տասնյակ հազարավոր ցուցարարների բազմությունը Թատերական հրապարակում, գլխավորում գիշերային երթը Երևանի դատարկ փողոցներով, որպեսզի մարդիկ գիշերվա ընթացքում չմտնեն, չհոգնեն հրապարակում ժամերով կանգնելուց, չհիասթափվեն, ցուցարարների շարքերը չնորսանան: Չանգվածն անցնում էր գիշերվա անհանգիստ քնով ընկած փողոցներով, «Մի-ս-ցուն», «Ղա-ր-բա-ր» վանկարկումները խաչմերուկից խաչմերուկ վառում էին մուգ շենքերի պատուհանների լույսերը, ամեն շենքից նորանոր նվիրյալներ էին միանում երթին: Բոլորը հուզված էին: Հատկապես նրանք, ովքեր հիշում էին 1965-ի ապրիլյան զանգվածային ցույցերը, ազգային զարթոնքը՝ «Հո-ղե-րը... հո-ղե-րը»: Պատմությունը կարծես կրկնվում էր:

Բայց 88-ի փետրվարը սկսվել էր Շարժումից 4 ամիս առաջ՝ 87-ի հոկտեմբերին, երբ Երևանում անցկացվեց առաջին Էկոլոգիական ցույցը: ԵՊՀ բանասիրականի մեր կուրսն այդ ժամանակ ցույցի առաջատար ուժերի մեջ էր (մեր կուրսը նաև առաջիններից մեկը դասադուլ հայտարարեց Փետրվարյան շարժման օրերին): Մենք շարժվեցինք Համալսարանից,



րանից, անցանք Իսահակյան փողոցով, հասանք Մատենադարանի դիմացի խաչմերուկին ու փողոցի մեջտեղով (այն ժամանակ՝ տրամվայի գծերով) իջանք մինչև Օպերայի խաչմերուկ: Բղավում էինք՝ «Կորչի փոքր քիմիան», «Փակել Նաիրիտը», «Փակել ատոմակայանը», «Ո՛չ Եղվարդի ջրամբարին»: Մեզ նայում էին փողոցներում կուտակված անտարբեր անցորդները, արևածաղիկ չրթող, գողակաճ քյարթերը, տրոլեյբուսների նեղյութաժ վարորդները: Ղարաբաղի մասին, կամ անկախության մասին 87-ի աշնանը խոսք անգամ չկար:

Խորհրդային Հայաստանում մարդիկ կարծես թե ոչ էլ առանձնապես երազում էին անկախության մասին: Դա այլախոհների առաքելությունն էր ու արտոնությունը, խաչն ու անեծքը: Այլախոհներն ԱՄԿ-ում էին: «Այլախոհության պատմությունը ԽՍՀՄ-ում» գրքում նշվում էր, որ Հայաստանը ԽՍՀՄ տարածքում միակ հանրապետությունն էր, որտեղ գործում էր ԽՍՀՄ կազմից դուրս գալու նպատակներ հետապնդող կուսակցություն, որի գաղափարն ընդունելի և հասկանալի էր ժողովրդի համար: Սակայն իմ դիտարկումներով Ազգային միացյալ կուսակցության սակավաթիվ անդամները՝ բոլորն էլ անկախության գաղափարի նվիրյալ մարտիկներ, այդպես էլ մնացին ինքնազոհողության դիմած, բայց զանգվածի համար չհասկացված խենթեր: Չէ՞ որ ԽՍՀՄ-ը համարվում էր անխորտակելի կայսրություն:

Մենք, որ հոգնել էինք սովետական անհեթեթ կարգերից, համատարած աղբատությունից, երկաթե վարագույրից, ԿԳԲ-ի ամենահաս սովերից, պարտոժողովներից ու կոմերիտական անդամավճարներից, պիտներական ռազմականացումից ու պլանային տնտեսությունից, հոգնել ու զզվում էինք մարքս-լենինյան միակ ճշմարիտ գաղափարախոսությունից, որին անտեղյակ էին ու որին չէին հավատում նախևառաջ ռայկոմների քարտուղարներն ու կոմսոմոլի հրահանգիչները, մենք, որ լացելու աստիճան ծիծաղում էինք «Կեցցե ԽՍՀՄ ժողովուրդների անխախտ միությունը» կարգախոսի վրա, խորշանք ու նողկանք էինք զգում «Փառք ՍՄԿ» լրզունգից, որի՞ պատառոտված լաթերով ժանգոտած մետաղացանցերը հիմնովին զոդած էին բոլոր շենքերի խարխուլ տանիքներին, մենք, որ ամաչում էինք քաղաքական անեկդոտները միայն խոհանոցում պատմելուց, ահա ուրեմն մենք բոլորս 3 միլիոն 514 հազար 900 մարդ՝ 1990 թվականին, չէինք հավատում, որ Խորհրդային Միությունը երբևէ կդադարի գոյություն ունենալ:

1988-ի սեպտեմբերն էր: Մեր կուրսի երկու տասնյակ ուսանողներով պատրաստվում էինք դպրոցում լեզու-գրականություն դասավանդելու պրակտիկան անցնել Ղարաբաղում՝ Մարտակերտի շրջանում: Այդպիսի բան դեռ չէր եղել համալսարանի պատմության մեջ: 5-6 տղաներով քայլում էինք Կոնսերվատորիայի այգում: Ընկերս շատ զգուշավոր ու մտահոգ տոնով հարցրեց ինձ. «Սենց որ շարունակվի կանկախանանք է՞ր»: Հայացքս հատեցի դեպի մշուշոտ հեռուն ու հնարավորին չափ խորհրդավոր ձայնով ասացի. «Եթե բախտներս բերի, մի 15 տարի էլ կմնանք Սովետում, և շատ ավելի բարվոք պայմաններում կանկախանանք: Եթե 10 տարուց անկախացանք, կորուստները շատ կլինեն: Իսկ եթե բախտներս չբերի ու ստիպված լինենք 5 տարուց անկախանալ, ուրեմն էլի մնալու ենք կործանված կայսրության փլատակներում»: Ընկերս հուսահատությունից սիգարետ կացրեց: Հայրիկյանականներից բացի գուցե մի քանի տասնյակ մարդիկ էլ էին երազում անկախության մասին: Գուցե: Բայց ես տեսնում էի հազարավոր, տասնյակ ու հարյուր հազարավոր մարդկանց, որոնց հոգեպես խորթ էր անկախության գաղափարը: Շատերի համար անկախության մասին մտածելն ու առավել ևս խոսելն ազգակործան վարք էր, ավանտյուրիստական պահվածք: «Բա որ թուրքը հարձակվի, ինչ ես անելու առանց Սովետ»: «Բա որ ԿԳԲ-ն զիջերը գա մեր տուն, երեխեքիս ինչ պատասխան ես տալու, որ հիմա ախմախ-ախմախ լեզվիդ ես տալիս»: «Բա որ ռուսներն ասեն՝ 70 տարում մեր սարքածը

հետ տվեք, բոլոր դպրոցները, հիվանդանոցները, գործարանները, շենքերը, փողոցները, գյուղերը, քաղաքները ո՞նց ենք հետ տալու: Միջնադարում մեր սարքած եկեղեցիներից բացի ինչ պիտի մնա մեզ»:

Դպրոցում սիրում էի ուսումնասիրել Պատմական Հայաստանի քարտեզը: Կարդում էի Տիգրան Մեծի մասին, Արշակ 2-րդի, Աշոտ Երկաթի: Ձեռքս ընկած քարտեզների վրա կարմիր մատիտով ավելացնում էի Արևմտյան Հայաստանը: Ու կպցնում էի ՀԽՍՀ-ին: ԽՍՀՄ կազմում: Մտքովս էլ չէր անցնում դրա առանձին գոյությունը: Ստացվում էր ԽՍՀՄ+Արևմտյան Հայաստան: Պատմության ուսուցչուհին տարիքով կին էր, ծանր կյանք ապրած տատիկ: 1977-ին մի անգամ մեզ պատմեց, թե ինչպես Խրուշչովը 1954-ին Ղրիմը նվիրեց Ուկրաինային Ձապրոժյեն Ռուսաստանի հետ միավորելու 300-ամյակի կապակցությամբ: Ու նրա աչքերը լցվեցին, մատները դողացին, ձայնը թրթռաց ու անցավ գրեթե շշնջոցի. «Ես հույս ունեմ... Մենք՝ դարաբաղցիներս, հույս ունենք, որ ճիշտ այդպես էլ Բրեժնևը եկող տարի Ղարաբաղը կնվիրի հայերին՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի կապակցությամբ»: Քար լռություն տիրեց: Բոլորս շունչներս պահեցինք, քանի որ մեր ուսուցչուհին մեզ հենց նոր պետական գաղտնիք էր բացել: Կամ շատ ազգայնական՝ նացիոնալիստական մի բան էր ասել: Ու վախեցած նայեց դեպի ծանր դուռը, ամուր փակած պատուհանները: ԿԳԲ-ն չլսի...

Հաջորդ տարին ոչինչ չեղավ: Բրեժնևը Ղարաբաղը չտվեց հայերին: Ոչ էլ մեր ուսուցչուհուն ձեռքակալեցին: Մի տեսակ հիասթափվեցինք: Անցավ 10 տարի: Ու հիասթափվածների մի քանի սերունդ լցվեց Թատերական հրապարակ, որը վերանվանեցին Ազատության: Ինչո՞ւ Ազատության և ոչ թե Անկախության: Հավանաբար ազատությունն ավելի ոչ թանձրացական է, քան անկախությունը, որին ձգտելու համար նաև քրեական հորված կար: Իսկ ազատության համար չկար: Ազատության ձգտումն անմեղ ժամանց է: Յույնիսկ Լենինն ու Ստալինն էին ազատության ձգտում Մեծ Հոկտեմբերին: Իսկ այ անկախությունը... քրեորեն հետապնդելի արարք է:

88-ին մարդկանց մեծ բազմություն էր հավաքվում Օպերայի մոտ, Մատենադարանի մոտ, Կենտկոմի մոտ, որն այսօր Աժ-ն է: Մարդիկ հավաքվում էին, շեփորը հնչեցնում էր արևելյան մեղրածոր ելևէջները, որոնք չգիտես ինչու դարձել էին հանրահավաքների կոչնակները, և ցուցարար-



← Հանրախվելի հաշվարկը



ները, անհամբեր սպասելով Ղարաբաղ կոմիտեի բոցաշունչ հռետորների կոնցետայտուալ ելույթներին, իրար մեջ քննարկում էին, թե Ղարաբաղի հարցում ո՞րն է ավելի ծանրակշիռ կամ առավել հիմնավոր՝ Կենտկոմի պլենումի՞ որոշումը, թե՞ Սովմինի: Ու երրորդն էլ զիտակի թավ ձայնով ասում էր. «Ինչ պլենում, ինչ սովմին: Գերագույն սովետի նախագահության հրամանով պիտի տան, որ հետ վերցնել չլինի»:

Կենտկոմի շենքի դիմաց հավաքված էինք, պահանջում էինք, որ Դեմիրճյանը դուրս գա ժողովրդի առաջ: «Ձայն բազմաց՝ ձայն Աստծո՞ւ»,– խորիմաստ բղավեց ընկերս: Մի քանի հարյուր հայրենասերներ գոհունակությամբ նայեցին մեր ուղղությամբ: Հաճելի էր կարգախոս թեյադրողի դերում լինելը: Լավեց շեփորի արևելյան, ալարկոտ, քաղցրածոր մեղեդին, բոլորի աչքերը լցվեցին: Ես բարձրացրի աջ ձեռքիս երկու մատները: Ընկերս կրկնեց: Մի քանի հոգի նայեցին մեզ: «Վիվատ»,– հակիրճ բացատրեց ընկերս: Երկու մատների բացվածքը թևածեց Բաղրամյան պողոտայում: Մեր բերկրանքին չափ չկար: Բայց մի քանի օր հետո Օպերայի բակում ցույցի ժամանակ հարթակին հայտնվեց Ջորի Բալայանը և ոգևորիչ ելույթի ամենաթունը պահին պողոթկաց. «Մենք հաղթելու ենք: Մեզ կոտրել չի լինի: Երկու մատը հեշտ կծալեն, իսկ բռունցքի դեմ նրանք անգոր են: Այսօրվանից ոչ մի մատ, միայն բռունցք»: Եվ վիվատի 2 մատները փոխվեցին բռունցքի: Ես ու ընկերս հիասթափվեցինք այդ պատմական շրջադարձից. օ, նախ ամբոխ, ինչ փոփոխական են քո հիացումները:

Ահա, ուրեմն, 1991 թվականի սեպտեմբերի 21-ին ձայնագրման միկրոֆոնը ձեռքիս, վազելով անցնում էի Երևանի փողոցներով, բակերով ու այգիներով և հիմար հարցեր տալիս մարդկանց, ովքեր վերջին 70 տարում վարժվել էին խոսել մի քանի մասին, մտածել մեկ այլ, կողքինին համոզել երրորդ տարբերակը, վերադասին զեկուցել 4-րդը, լրագրողին՝ ինչպես քննիչին, ասել այն, ինչ նա է ուզում լսել.

- Քվեարկության գնացել եք:
- Տղա ջան, դու դեռ քնած էիր, որ ես գնացի քվեարկեցի:
- Ինչ եք զգում անկախության առաջին օրը:
- Ձգում եմ, որ ճիշտ ընտրություն ենք կատարել:
- Հետո չե՞ք փոշմանի:
- Էլ փոշմանել-մոշմանել չկա: Էղածն էղել ա:
- Ինչ է անկախությունը Ձեզ համար:
- Լավ կյանքի հույս... Երբ եք ցույց տալու:

Լուսինե Հովհաննիսյան. Լենին, պարտիա, անկախություն

**Լուսինե Հովհաննիսյանի հասկն անկախացող
սերնդի մի մաս լինելու մասին:**

— Օպերայում մարդ կա՞:

— Անկախականներն են մենակ:

Կամ «Անկախականները հավաքվեն ձախ թևում»:

Անկախության հետ առաջին շոշափելի շփումս այս էր՝ 1988-ին ու դրանից մի քիչ հետո: Հետո տեսա «Անկախություն» անգույն բրոշյուրը: Մենք՝ վաղ տարիքում անկախացածներս, նկատի ունեն սերունդը, զառիվայրով վազելով իջնում էինք, որովհետև չվազելու դեպքում հաստատ ընկնելու էինք, իսկ վազելու դեպքում միշտ մեկ տոկոս հավանականություն կա, որ զառիթափի վերջում, եթե կարողանաս քեզ պահել, ոտքդ կցավի, մարմինդ կցնցվի, մկաններդ կձգվեն, բայց ծնկներիդ ու արմունկներիդ վրա չես փռվի, անպաշտպան մարմինդ բերծելով չես գլորվի՝ կծկված ու վիրավոր, մինչև զառիթափի ավարտը: Անկախամալիս մնում էր միայն վազելը, որովհետև զառիթափով իջնելիս միայն վազում են:

Այդ վազքի մեջ մտնում էր պատերազմը, ողջ մնալը, լուրերը, տան ցուրտը, տան մութը, քաղցին դիմամալու համար ելակի համով շրթները օգտագործելը, ուրբաթ օրերին ճգնափողյանի համերգին գնալը, որ տաքանաս ֆիլհարմոնիկի դահլիճում ու չգովես մութ ու կամաց-կամաց սառչող տանը: Այդ վազքի մեջ մտնում էր ամեն դեպքում կրթվելը, համակարգչից օգտվել սովորելը, ցույցերը, ցույցերը, ցույցերը:

Անկախությունը դեպքերն էր:

Ամեն ինչ սկսվել էր ուրիշ բանից:

Ամեն ինչ սկսվել էր նրանից, որ մեզ, մեզնից մեծերին, մեզնից ավելի մեծերին շատ երկար ժամանակ զուգել էին. մեզնից մեծերին պրակատի կինն էր երկար ցուցամատով ասել ինչ չի կարելի, մեզ՝ ուսուցիչները, տնօրենները: Հիմա «չի կարելի» զսպանակը բաց էին թողել: Ջսպանակը սկզբում անկանոն հետ ու առաջ էր արել, այսինքն ուզել էր մի բան ուզել, որ առաջ չէր կարելի, ուզել էր մի բան անել, որ առաջ չէր կարելի, ուզել էր գոռալ, բռնուցքները թափահարել ու շատ սիրել բողրին՝ ուն պատահի, անծանոթին ասել «ախպերա» ու «բուրիկ ջան»: Այդպես էլ անում էինք. մենք ուզում էինք, պահանջում էինք, գոռում էինք, սիրում էինք մեր կողքին կանգնած համաքաղաքացուն, շրջաններից եկած մարդկանց, մեր ընկերներին և ուն որ պատահեր:

Սկզբում մենք գոռում էինք Նաիրիտ, մաքուր օդ, հետո՝ Լա-րա-բաղ, հետո՝ Ի-գոր, հետո՝ Իգոր հեռացիր, հետո՝ Կոմիտե, արանքում՝ Լուկյանով: Հետո հանդարտվում էինք մի քիչ մեծ ողբերգությունների արանքում: Ու փողոցում անընդհատ երգում էինք: Երգում էինք «հայ ֆիդայիներ, ջան ֆիդայիներ, ձեր մայրերը ձեզ դուրբան»։ Այնքան էինք երգում, որ վատ էինք զգում տեքստից էլ, մեղեդուց էլ: Հետո երգում էինք «Կոտորածն անգութ, հայերը թող լան, անապատ դարձավ տխուր Արաման»։ Հետո մի երգ էինք երգում, որը ստեղծվել էր Ստեփանակերտում, մենք մագնիտոֆոնով հրապարակում միացնում էինք այդ երգը, բարակ ձայնով մեկը երգում էր՝ «Որքան կարող է մարդ պայպես ապրել, որքան կարող է սրտում ցավ պահել», իսկ հետո կրկներգն էր՝ «Հայաստան...»: Երեկոյան երգում էինք Գուրգեն Գաբրիելյանի «Գանձասարը», ու «ավաղ ճեղք է տալիս սրբատունս» տողի վրա հաղթական թափածն օծում մի գրամ արցունքով: Իսկ ավելի ուշ՝ գիշերը, երբ Օպերայի առաջին նստացույցի հանդիսատեսները ցրվում էին ու հրապարակում մնում էինք մենք՝ ուսանողներս, իսկ մենք շատ ջահել էինք, երգում էինք Ռուբեն Հախվերդյանի երգերը: Քանի որ մենք անկախացել էինք

դեռ ոչ Սովետական Միությունից, այլ ընդհանրապես անկախացել էինք ավելի մեծ իմաստով, մեր նախկին կյանքի ձևից էինք անկախացել՝ մենք քնում էինք օպերայի աստիճանների վրա ու առավոտ վեցին արթնանում էինք ուժեղ անձրևից, լրիվ թաց ու սառած, մենք մահճակալի ծածկոցը մեր ուսերին առած քայլում էինք Օպերայի հրապարակով, որտեղով տասնյոթ տարի անցել էինք ձիգ, հագած-կապած, ուշիմ: Մենք կարող էինք գիշերը չգնալ տուն, և դա ոչ թե անկարգություն էր, այլ՝ հայրենասիրություն: Մենք ուսումնում էինք անծանոթ մարդկանց բերած ուտելիքը, ծածկվում անծանոթ մարդկանց բերած ծածկոցներով: Մենք քաղաքական խորագրի տակ ազատագրվել էինք մեզ անգթորեն սեղմած մանկապատանեկան «ուստավից»: Մենք անկախացրել էինք մեզ՝ այդ հրաշալի պահին առանձնապես լինելիքից տեղյակ չլինելով, մանավանդ՝ պատերազմից, և անսահմանափակ երջանիկ էինք:

Այդ անսահմանափակ երջանկությունն էր մեր անկախությունը:

Հիմա, շատ տարիների հետվից, առանց բացառության մասնակիցը եղած լինելով Երևանում ու շրջակայքում տեղի ունեցած բոլոր դեպքերին, բացառությամբ մայիսի քսանյոթի կայարանի սարսափը, ես հաստատ գիտեմ, որ մենք՝ վաղ տարիքում անկախացածներս, նախքան Սովետական Միությունից անկախանալը, նախևառաջ անկախացել էինք որպես մի առանձին մարդ: Մինչ այդ զուսպ, հստակ շարադասությամբ պատանիներ էինք: Հիմա մենք կանգնում էինք Օպերայի շրջանագիծը պաշարած սովետական զինվորների կալաշնիկովների դիմաց ու գոռում էինք «հեռացեք մեր երկրից», որովհետև մենք անապասելի միանգամից ներսում անկախացել էինք:

Շատ եմ մտածել, թե ինչպես մենք՝ նախորդ օրվա պարտաճանաչ սովետական ուսանողներս կամ երբևէ որևէ սովետական քամու դեմ մեկ անգամ չգնացածները՝ բանվորը, գյուղացին, մնացածը, մի օրում հավաքվեցին հրապարակում: Ես մեծացել էի ոչ արմատական դրսևորումներով հակասովետական ընտանիքում, որտեղ կային բռնադատվածներ, կային զոհեր, կուլակաթափ եղած նախնիներ, որտեղ գիշերները լուսն էին ամերիկյան ու եվրոպական բոլոր արգելված ռադիոձայները, որտեղ կարողում էին արգելված գրականություն ու բարձր պատմում իրականությունը՝ ընդհուպ Լենինին «սիֆիլիսիկ խրտվիլակ» անվանելով, նմանակելով բոլոր սովետական առաջնորդներին: Որտեղ վիճում էին բոլոր այն բարեկամների հետ, ովքեր իրենց երեխաներին ռուսական կրթության էին տալիս: Իսկ առավոտյան կապում էի ալ կարմիր վզկապս ու գնում ամենասովետական դպրոցներից մեկը: Եվ մերի պես ու ավելի արմատական հակասովետական էլի շատ ընտանիքներ կային: Բայց միևնույն է՝ դրանք այնքան քիչ էին հրապարակն ու Երևանի փողոցները լցնելու համար: Ինչ էր զուգել իր մեջ նորմալ աշխատավարձ ստացող բանվոր դասակարգը, իր հավելյալ պարգևավճարներով, արտոնություններով, հանգստյան տների ուղեգրերով: Մեծ մասի կյանքից սովետի դժոխային դրվագները բացակայում էին: Ինչ էր պայթել ոտքով Երևան եկող գյուղացի մարդկանց մեջ՝ հաստատ ոչ Սինյավսկու ու Յուլի Դանիելի արգելված ստեղծագործությունները կարդալու անգուսպ ցանկությունը. դրանք արդեն տպագրված էին 1987-ին: Ինչ էր պահանջում ընդամենը մի քանի օր առաջ ծառայողների խոնարհ սոցիալական շերտը:

Միթե Դարաբաղը, որի տեղը շատերն այդ պահին չգիտեին նույնիսկ: Միթե անկախությունը, որի հետոն շատերը չէին պատկերացնում և առանց «ռուսի» իրենց կյանքը նույնականացնում էին յաթաղանի հետ:



Ոչ, իհարկե: Հիմա ես գիտեմ ինչ էին գոռում Օպերայի հրապարակում հավաքվածները, ինչի մասին էին գոռում «Ղա-րա-բաղ» վանկարկելիս, «Անկախություն» գոռալիս: Շատ տարիների ընթացքում ամեն մեկը կուտակել էր իր Ղարաբաղը: Ամեն մեկն ուներ իր Ղարաբաղը, անկախության իր պահանջը: Մի մասը պահանջում էր Հայաստանի արևմտյան մասում կանաչած իրենց տների ոչ մի կերպ չհանդարտվող դառնությունից, մյուս մասը եղեռնից չփրկվածների փոխարեն էր գոռում, մյուսները հայրենադարձվելու խաբկանքի համար էին պատասխանում, ոմանք բոլշևիկների գլխատած իրենց հարազատների անունից, մի մասը հայրենականից տուն չեկած հայրերին ու հարազատներին էին պահանջում, ինչը երբեք չէին համարձակվի խոստովանել անգամ իրենք իրենց՝ երեկ չէ առաջին օրը՝ փետրվարի տասնիննին: Ոմանք՝ Աֆղանստանում անիմաստ կորած իրենց միամիտ տասնութամյա տղաների վրեժը, ոմանք սոփադաբար Չեռնոբիլ տարած հարազատների վրեժն էին հանում: Վիրավորված ժողովրդի անկախություն էր, որի ցատումը ջարդել էր ոչ միայն սովետական, այլև թուրքական, ռուս-թուրքական, բոլշևիկյան, հիտլերյան, լենինյան, ստալինյան պարիսպներն ու այդ չձևակերպվող պարիսպների ավերակների վրա ժողովուրդը գոռում էր «Ղարաբաղ» ու «Անկախություն»:

Մի օր՝ մայիսի քսանութին, երբ մենք ուսանողներս, նստած էինք Օպերայի աստիճաններին ու պահանջում էինք ՊՄ արտահերթ նստաշրջան, հրապարակ եկան «անկախականները»: Պարույր Հայրիկյանի «ԱԽՄ»-ի անկախականները Մովսես Գորգիսյանի առաջնորդությամբ: Մովսեսը բարձրացավ հարթակ: Մենք՝ վաղ տարիքում անկախացածներս, անվերապահ ենթարկվում էինք «Ղարաբաղ» կոմիտեի տղաներին: Նրանք մեզ զգուշացրին, որ այս ցույցի հետ մենք կապ չունենք, որ անկախականներն իրենց ցույցը կանեն ու կգնան: Անկախականները 18 տարեկան տղայի՝ տասը ռուպեից մեռնելու պատրաստականություն ունեին ու ուզում էին, որ բոլորն ունենան: Անկախականներն ասում էին միայն անկախություն ստանալուց հետո կարելի է ուզել «Ղարաբաղ»: Այ, այս կետում մեր ու իրենց գետը մի հունով չէր գնում, մեզ Ղարաբաղը վաղը չէ մյուս օրը կեսօրին էր պետք, համաձայն չէինք սպասել: Եվ այսպես, մենք նստած էինք Օպերայի աստիճաններին, այսինքն՝ մեջքով: Մեզ ասել էին՝ անկախականների ցույցին չեք խառնվում: Երբ Մովսես Գորգիսյանը սկսեց խոսել, բոլորս ջրջվեցինք դեմքով դեպի իրեն: Եռագույն դրոշմ առաջին անգամ Օպերայում բարձրացավ: Ու հաջորդ օրվանից եռագույն կաշուն ժապավենից ստեղծած կրծքանշաններն ամսվա թրեմոն էին, ինչպես կասեն հիմա՝ անկախ ծնվածները: Եռագույն կաշուն ժապավենից սարքած կրծքանշանը լավագույն նվերն էր:

Անկախությունն այնքան էլ հասկանալի չէր, ու այնքան էլ միանշանակ չէր: Բայց անկախությունը մի բան էր, որ երբ գալիս է, պիտի հպարտ լինես և փռես ամենասպիտակ օսլայած սփռոցը:

Իմ՝ վաղ տարիքում անկախացածիս առաջին աշխատանքային օրը՝ հինգերորդ կուրսում պետական քննությունն հանձնելուց հետո, «Անկախություն» թերթում էր՝ Վահան Իշխանյանի ղեկավարությամբ: Վահանն առաջին անկախականներից էր, մայիսի քսանութին հարթակից ելույթ ունեցողների մեջ էր իր հայրը՝ Ռաֆայել Իշխանյանը. միշտ ընդհանուր հոսանքին դեմ գնացողներից էր Վահանը ու հիմա ընդգծված ռուսամետ է: Այսպիսի կողմեր էլ ունի անկախությունը:

Եթե մեկ նախադասությամբ ու շատ հաստատ, ապա անկախության ամենատեսանելի դրսևորումն ինձ համար թեժ ռուսախոս ծնողների լիարժեք հայախոս զավակներն էին անկախությունից մի քանի տարի անց ռուսախոսության էպիկենտրոն դարձնելու: Իսկ մնացածը կարելի է քննարկել:

Անկախությունը շքեղ հարսանիքի նման բան է. գեղեցիկ քող, շքեղ շոր, հյուրեր, նվերներ, երաժշտություն, բաժակաճառեր՝ զովքի ու մաղթանքի, համբույրներ ու պար. իսկ հետո բոլորը ցրվում են իրենց տներով, ոչ ոք չի հիշում քեզ առանձնապես, ու մնում ես դու և ընտրությունդ, կարող եմ՝ երջանիկ եղիր, չես կարող՝ մի եղիր, ոչ մեկի մտքում չես այլևս. շորդ ու քողդ պահարանում են, նվերները՝ տեղավորած, տորթը վաղուց պատառ-պատառ արված, երաժշտությունը լռել է, բաժակաճառ ասող չկա առաջին անսպասելի հիասթափությանը սարսափելի պահին՝ գոտեպնդող ոչինչ. դու ես ու քո խելքը, եթե բախտդ բերեց՝ նաև ընտրածիդ խելքը: Կարող ես հայտնվել ավերակների վրա, կարող ես կառուցել սիրուն տուն ու հմայիչ ընտանիք: Այդպիսի բան է անկախությունը, ուղղակի շորի, քողի, երգի ու բաժակաճառի փոխարեն պատերազմ, ռումբ, ական, վիրավոր, մահ, ավերածություն, քաղց, մոլե և... անկախություն: Ղարաբաղն ու անկախությունը միասին էին ու միասին եկան, սկզբում Ղարաբաղն էր, բայց անկախությունն ավելի շուտ եկավ, քան Ղարաբաղը: Ու պարզվեց՝ իրենք միասին էին, մեզ սխալ էին ասել, թե մենք՝ 1988-ի մայիսի նստացույցի նստածներս, կապ չունենք անկախության հետ: Սկզբից Ղարաբաղն էր, բայց անկախությունն ավելի շուտ եկավ: 1990-ի հուլիսին Ստեփանակերտի օդանավակայանում ռուսական զորքն ադրբեջանական ՕՍՕՆ-ի հետ ստուգում էր Երևանից Ստեփանակերտ ժամանած ինքնաթիռի ուղևորների բեռները, ստուգում էր բացարձակ սանձարձակ, ու ամենաչնչին հնարավորության դեպքում, իսկ երբեմն նույնիսկ առանց այդ հնարավորության, երիտասարդ տղամարդկանց նստեցնում էին մեքենա ու տանում անհայտ ուղղությամբ: Այն ժամանակ չէինք էլ հասկացել, որ շատ ռիսկային էր Երևանից ժամանել Ստեփանակերտ, «Ժամանել» բառի ամենահեզվական իմաստով:

Այդ նույն օրը քարերով ջարդեցին Ստեփանակերտից Մարտունի գնացող ավտոբուսը: Լուռ պատերազմ էր: Մի քանի օր անց Երևանից Ստեփանակերտ թռչող մարդատար Յակ 40 ինքնաթիռը վայրէջք չկատարեց Ստեփանակերտում. պայթեց օդում: Բոլոր ուղևորները զոհված էին: Մենք զոհ ունեինք՝ մեկ հոգի մեր ընտանիքից, երկուսը՝ հարևանների: Օգոստոսի չորսին՝ սարսափելի հուղարկավորության օրը, ինչ-որ մեկը կողքից պատմում էր, որ Երևանում Կոմկուսը պարտվել է, Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվել է խորհրդարանի նախագահ: Յոթանասունամյա պատերազմն ավարտվել էր: Անկախությունը սկսված էր, իսկ Ղարաբաղում մեկնարկում էր ծանր պատերազմը:

Ինչ խոսք, մենք զինը լավ չէինք պատկերացրել 1988-ի փետրվարի քսանմեկին: Բայց պետություն ունենալ ուզում էինք, և վստահ էինք, որ ուզում ենք: Հիմա էլ վստահ ենք:

Օպերայի ձախ թևում հիմա անկախականներ չկան՝ թեքահարթակից հեծանիվով իջնող երեխաներ են, որոնց համար այս ամենը պատմության դասագրքի հերթական դաս է. երբեմն նույնիսկ անհետաքրքիր դաս: Շատ հետաքրքիր էր լինել անկախացման դժվար ճանապարհին Օպերայի ձախ թևում: Շատ կարևոր է ապրել օպերայի ձախ թևի թեքահարթակից հեծանիվով իջնող երեխաների օրերում:

Աննա Իսրայելյան.

Ակտիվիստ լրագրողը կամ լրագրող ակտիվիստը

Լրագրող Աննա Իսրայելյանը Ղարաբաղյան շարժման ուսանող ակտիվիստներից է, ինչպես ինձն է ասում՝ ժեկը հարյուր հաշարավոր ցույարարներից: Հարուկ ԵՐԵՎԱՆԻ համար Աննա Իսրայելյանը ծնողում է 88-ի շարժման, անկախ ծամուլի, սերունդների բախման և երբեք չափսոսալու ծամին:

Առաջին հաղթանակները

Դեռահաս տարիքից միշտ էլ գիտեի, որ լրագրող եմ դառնալու: Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի ուսանող էի (այն ժամանակ ժողնապիստիկայի մասնագիտացման խմբեր կային), երբ սկսվեցին ցույցերը: Ընդունվելուցս երեք տարի անց՝ աշնանը, մի ցույց բնապահպանական բնույթ էր կրում, երկրորդն արդեն Ղարաբաղի հետ էր կապված և երկուսն էլ բանասիրության ֆակուլտետի ակտիվ մասնակցությամբ: Հաջորդ տարի՝ արդեն 1988թ., երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, առաջին իսկ օրվանից ֆակուլտետի ուսանողներով կրկին ցույցերի ակտիվ մասնակիցներն էինք:

Մենք բավական ազգայնական մոտեցումներ ունեինք, հավանաբար կրթության բերումով: Ինձ համար այդ տարիներին երկու շատ վաղ շրջան եղավ: Նախ՝ 1988թ. մայիսն էր, երբ մենք Գերագույն խորհրդից պահանջում էինք, որ հարգեն և ընդունեն ԼՂԻՄ-ի դիմումը Հայաստանին վերամիավորվելու պահանջով և այն ժամանակ դա շարժման առաջին պահանջն էր, որ հաջողությամբ պսակվեց: Հաջորդը՝ երբ արդեն սեպտեմբերին եռագույններով երթ կազմակերպվեց դեպի Մուսալեռ:

Բնավ առանցքային դեր չեմ ունեցել շարժման ընթացքում: Ես հարյուր հազարավոր ցուցարարներից մեկն էի, որ գործում էի մեր ուսանողական շարժման առաջնորդների ցուցումներով, ովքեր, ինչպես հետո պարզվեց, համագործակցում էին «Ղարաբաղ» կոմիտեի հետ:

Անկախացած ծամուլ

Ուսանողական տարիներին լրագրությունն ու ակտիվիզմը հազվադեպ են հատվել: Այն ժամանակ, ի տարբերություն հիմիկվա, լրատվամիջոցներում աշխատանք գտնելն այդքան էլ հեշտ չէր: Երբեմն ստացվում էր Երևանի պետական համալսարանի թերթին թղթակցել,



← Եռագույններով, կենտրոնում՝ Աննա Իսրայելյանը

մեկ-մեկ էլ «Գարունի» «Պատուհան» երիտասարդական խմբագրությանը: Միայն 1989-ին համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի անցա բազմատպաքանակ «Աերպասագործ» թերթում: Այդտեղ, ասենք, հարցազրույց եմ արել Ազատ Արշակյանի հետ, որը նոր էր բանտից դուրս եկել:

Այդուհանդերձ պրոֆեսիոնալ կարիերայիս սկիզբը համընկավ Խորհրդային Միության փլուզման սկզբին: Ես, կարելի է ասել, խորհրդային մամուլում աշխատելու փորձառություն չունեցա: Շուտով աշխատե-

ցի անկախ մամուլի առաջին պարբերականներից երկուսում՝ ՀՀԸ-ի պաշտոնաթերթ «Հայք»-ում և Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության «Ազգ» օրաթերթում: Իմ բախտը բերեց, որ ի սկզբանե շնչեցի այդ թթվածինը, որ լցվել էր մամուլ. մինչ այդ ուղղակի չկար նման ազատություն: Ես չեմ առնչվել խորհրդային գրաքննության՝ «զլավիտի» հետ:

Սակայն հստակ ձևավորված դիրքորոշում ունենալն ու շարժման կողմնակից լինելը գուցե թույլ չէին տալիս հանդես գալ անկախ լրսաբանողի դիրքերից: Ես իմ ընտրությունն արդեն արել էի, որ Հայաստանը պետք է անկախ լիներ և անշուշտ, անկախության հանրաքվեն լրսաբանելիս դժվար էր հավատարիմ մնալ պրոֆեսիոնալ լրագրության սկզբունքներին՝ անաչառորեն ներկայացնել անգամ այն դիրքորոշումները, որոնք չեն կիսում: Այն ժամանակ մամուլի դասական օրենքներից էլ թերևս առավել կարևոր էին զգացողությունները, չէր էլ ստացվում դրանք մի կողմ թողնել:

Այդ հետո էր, որ «Ղարաբաղ» կոմիտեն տրոհվեց, բայց այն ժամանակ նրանք մեր հերոսներն էին, ես սիրով էի գրում նրանց մասին: Այժմ, երբ նայում եմ այդ շրջանի հոդվածներս, հստակ զգում եմ աչառու վերաբերմունքս նրանց հանդեպ: Լրագրողի սառը հայացքը պիտի տարիների հետ ձևավորվեր:



← Օպերայի սափիեանների ջախ ծառայ



Մերունդների ու հայայիների բախում

Շատերը՝ հատկապես ավագ սերունդը, եռագույնը պարզած մեր երիտասարդների խումբը դիտարկում էին իբրև արկածախնդիրների, մարդկանց, ովքեր կործանման կտանեն Հայաստանը։ Հենց բանասիրության ֆակուլտետի ղեկավարությունն էլ դեմ էր մեր դիրքորոշմանը, ասում էին այսօր անկախության հարց դնելով Հայաստանը նետում եք դեպի Թուրքիայի երախը և որ մենք առանց Ռուսաստանի ոչինչ չենք կարողանա անել։ Իսկ ավելի երիտասարդ, անհամեստորեն ասեմ՝ առաջադեմ մասն այնուամենայնիվ անկախության մեջ էր տեսնում մեր շատ ու շատ խնդիրների լուծումը։ Ինչ, իբրև բանասերի, այն ժամանակ շատ էին հուզում լեզվի, կրթության, օտարամոլությանն առնչվող խնդիրները։ Մտածում էի, որ միայն անկախ պետության պայմաններում է հնարավոր դրանց լուծումը։ Ցավոք, հետագա տարիների ընթացքում մի քանի անգամ համոզվեցի, որ լեզվի, կրթության ու հայերենի նկատմամբ հարձակումներին մենք ստիպված ենք լինելու դիմագրավել անընդհատ։ Այն ժամանակ Հայաստանի անկախությունը թվում էր համաբալասան բոլոր այդ խնդիրների լուծման համար, ցավոք, պարզվեց, որ դա բնավ էլ այդպես չէ։

Ազգի լավագույն որակների ծախս

Ջուզահեռներ անցկացնելով 1988-ի և 2018-ի միջև՝ պետք է ասեմ, որ երկրորդն ավելի շատ իմ որդու հեղափոխությունն էր, սերունդների հարց է, իմը 88-ինն էր։ Բայց ես տեսնում էի, կային բաներ, որ հիշեցնում էին 88-ը։ Հիշում եմ, որ Ազատության հրապարակի վերջին շաբաթից դեպի առաջին շաբաթ կարող էին ջուր փոխանցել կամ հիշում եմ, թե մեր նստացույցի ժամանակ ինչպես էին կողքի շենքերի բնակիչները մեզ համար տաք ծածկոցներ և ուտելիք բերում, ինչ-որ մեկը մատաղ էր անում։ Միասնականության կամ համերաշխության ոգի կար։



Թվականին չկար ո՛չ դրա տեխնիկական հնարավորությունը, ո՛չ այդքան լրատվամիջոց և ո՛չ էլ դա անելու ազատություն։ Մի անգամ նույնիսկ հավաքել են ուսանողական դաշինքի ինքնահրատ պարբերականները։

Ոչ մի ափսոսանք

Ոչ որպես լրագրող և ոչ էլ որպես ակտիվիստ, այլ որպես պարզապես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ես չեմ ափսոսում արածս ոչ մի քայլի համար։ Որդիս ծնվեց ու 2-3 ամիս անց սկսվեցին Ղարաբաղյան պատերազմի առաջին ռազմական գործողությունները։ Սակայն ամենաճանր պահերին անգամ, երբ նույնիսկ նորածին որդու բարուրի վրա նավթի վառարանի մրուրն էր նստում, ես չեի տրոնջում, որովհետև գիտեի, թե այդ զոհողություններն ինչի համար էին։ Հետո մեկ անգամ միայն այդ ոգևորությունը փոխարինվեց հոռետեսությամբ, երբ երկրի հեռանկարը չէի տեսնում և երբ, ցավոք, առաջին անգամ Հայաստանից հեռանալու ցանկություն առաջացավ։ 2008-ի մարտի 1-ից հետո էր։ Իսկ այն տարիներին ոչ, ոչ մի անգամ չեմ ափսոսացել ո՛չ անկախության հանրաքվեի քվեաթերթիկում իմ դրած «այո»-ի համար և ո՛չ էլ երբևէ հարց է առաջացել, թե այս ի՞նչ արեցինք կամ ինչի՞ համար։ Ամեն ինչ ճիշտ էր, և ես սիրով նորից այդ ամենը կանցնեի։ Նույնիսկ, եթե սխալներ եմ արել։ Բայց իմ կյանքի ամենասիրելի շրջանն էր, դա հաստատ։

Տիգրան Պասկեհյան.

Գործընթացի սկիզբը

Գրող, լրագրող Միգրան Պասկեհյանը հիշում է, թե ինչպես նշվեց Անկախության հռչակագրի ընթերցումը և ինչու էր Շարժման ժամանակ հրապարակն ամենաապահով վայրը:

Անկախությունը, հիմա որ հիշում եմ, երևութացավ նույնքան աննկատ, որքան թվացյալ էր

դրա անհնարինությունը: Օգոստոսի 23-ի երեկոյան կեսգիշերին մոտ, Ազատության հրապարակից քայլեցինք դեպի Սարյանի պուրակ: Արամ Մանուկյանը հանդիսավոր առոգանությամբ արդեն ընթերցել էր հռչակագրի տեքստը, Կոմիտեի անդամները ելույթներ էին ունեցել: Վառոն, հիշում եմ, ասել էր՝ այս հռչակագրից հետո պետք է ներել բոլորի բոլոր մեղքերը:

Մի բան խմելու ցանկություն կար, բայց երևի փող չունեինք, խանութներն էլ արդեն փակ էին: Դեռ Սովետ էր, խանութները ժամը ութին փակվում էին:

Հռչակագիրը դեռ չէր փոխել

կարգերը, ընդամենը գործընթաց էր սկսվել. սպասիր մինչև կբացվեն: Տղերքից մեկը հանկարծ, ինչպես ձեռնածուն գլխարկից նապաստակ դուրս կբերեր, ասանի, պայուսակից հանեց մի շիշ լիմոնի օղի: Այդ տարիներին Վրաստանից էին բերում, ավելի ճշգրիտ՝ Աբխազիայից: Դեղին, դառնահամ հեղուկ էր: Ասեց՝ ես կանխատեսում էի, որ գործընթաց է սկսվելու ու տնից դուրս գալուց էս շիշը վերցրի:

«Կազիրյոյկ» սրճարանը փակ էր, աթոռները հավաքած-կողպած: Մի սեղանի մոտ կանգնեցինք ու, քանի որ բաժակ էլ չունեինք, հենց շշի բկից սկսեցինք ներքաշել դառնահամ հեղուկը՝ չմոռանալով նախ և ապա ասել՝ կեցցե՛ անկախությունը:

Շատ հետո, երբ մի մտավորական հեռուստացույցով լուրջ տեսքով ասում էր. «Մենք անպատրաստ էինք այս անկախությանը» (կարծես այլ անկախություն եղել կամ լինելու էր), հիշեցի օգոստոսի 23-ի այդ երեկոն և համաձայնեցի բանավխոսի մտքին: Անպատրաստ էինք, բա ինչ, որովհետև մենք ոչ միայն օղու հետ ուտելու բան չունեինք, այլև չունեինք երկրորդ-երրորդ-չորրորդ շշերն ու ստիպված պիտի ընդհատեինք պանծանքի այդ ծեսն ու ցրվեինք տներով:

Դա տոնի ամենալավ ավարտը չէր: Տնամերձ պարտեզում, գիտեի, հայրս նստած ծխում էր ու սպասում, որ կովի հետս, որ ասի. «անկախություն, հա, ինչ»: Հայրս նրանցից չէր, որոնք սովետը «գլոգլալ» էին համարում: Շատ լավ գիտեի ինչն ինչու է, գիտեի, որ արդարությունն անարդարությունից քիչ է, որ սուտը շատ է, ազնվությունը՝ նվազ, որ խանութները դատարկ են, թերթերն ու հեռուստացույցը լի ուռնացված հաշ-



← Միգրան Պասկեհյանը 1990-ի օգոստոսին Գերագույն Խորհրդի նիստերի դահլիճի ասփիեանների վրա, լուսանկարը՝ Զարեն Ռաշիկյանի

վետություններով ու սին խոստումներով, որ զավակների համար հեռանկար չիք, բայց նաև չիք գնալու տեղ: Գնալու իմաստն էլ...:

Ազատության մասին հորս սերունդը չէր խոսում. չգիտեին երևի ինչ է դա: Իսկ մեր վեճերը, որ ծայր էին առել 88-ի փետրվարից ու թեժացել նույն թվականի նոյեմբերին, երբ տուն գալով Լենինի (այժմ՝ Հանրապետության) հրապարակից՝ առողջ, մի տեսակ ժրաջան ցինիզմով նկարագրել էի «նոյեմբերի յոթն ու քառուսը մեկ արեցինք» արարքը, վեճերը դադարել էին երկխոսություն լինելուց. իմ դավանած ազատությունն իր ներսում կուչ եկած տազնապին ու անհանգստությանն այլևս հակոտնյա էր:

Տուն հասա, հայրս պարտեզում չէր, քնել էր արդեն: Օրվա կռիվն արել էր հարևանի կնոջ հետ, որը, տեսակով STP-ներից լինելով, իր տունը մտնելուց առաջ հարկ էր համարում հարևանի հետ կիսվել տպավորություններով և, հերքում չընդունող տոնով ասում էր. «Անկախություն... и только անկախություն» կամ «Комитет всегда прав»: Պատկերացրեցի խեղճ հորս վիճակը՝ ո՞նց է ներս արել հույզերը հարևանի (նաև իր մանկության ընկերոջ) կնոջը «խելառ անտեր» կամ «ախմախ» չանվանելու համար:

Պատկեցի քնելու: Անհաց-անպանիր խմած դառն օղին ներծծվելու խնդիր ուներ: Քունը մոտ չէր գալիս, բայց կոպերս ծանր էին, քունքիս տակ զարկվում էին բազմամարդ հրապարակի «ան-կախ-ութ-յուն, ան-կախ-ութ-յուն» կանչերը: Մի վիճակ, որ մտածում ես՝ քնած եմ, մինչ արթնության ստորին մակերևույթին ժամանակագրությունից ու պատումից գերծված պատկերներ են հայտնվում: Հայտնվում ու կորչում են: Կորչում ու կրկին են հայտնվում:

1979-ի դեկտեմբերի 24-ն է։ Սովետական զորքերը մտել են Աֆղանստան։ Աֆղանստանը հեռու է, բայց ժամանակի և տարածության մեջ մեզ ամենամոտ պատերազմն է։ Եղբայրս ավարտել է դպրոցն ու պոլիտեխնիկ ընդունվելու անհաջող փորձ արել։ Բանակի խնդիր կա։ Բանակն այլևս մեզանից ավագների («демейстеры армии») ների ոռմանտիկան չէ՝ գոտին փորից կախ, դռները բաց, լրթի կեցվածքով կամանդիրսկի «ТАЗ-69»-ին հենված։ Բանակը ստույգ պատերազմ է։ Ու տատա անհասցե անիծում է. «Վայ, տունդ քանդվի, պատերազմ սկսող»։ Հիտլեր չկա, որ ասի «տունդ քանդվի Հիտլեր»։ Չգիտի՝ ում մեղադրի։ Սովետական երկիրն էլ, որ իրեն հայտարարել է «отстал мира», այսինքն՝ ալան աշխարհի խաղաղության պատվար ու երաշխիք, ինքն է մտել Աֆղանստան։ Պապս լուռ է, ոչ մի դատողություն Բրեժնևի ու քաղբյուրոյի անքննելի ճշտության մասին, բայց և ոչ մի հակառակ դատողություն։ Եղբայրս մի պահ երևում ու անհետանում է։ Հետո ես հանրային գրադարանում եմ։ Դիմացը պոլիտեխնիկի զլխավոր մասնաշենքն է։ Մարքսի կիսադեմը հազիվ է երևում տերևաթափ ծառերի արանքից։ Շենքի ճակատային սյուներից սև սալաններ են կախում։ Չեմ հասկանում՝ ինչ է կատարվում։ Գիրքն արագ փակում եմ, որ մոտենամ գրադարանավարին՝

ինչ-որ բան իմանալու հույսով։ Վաթուենն անց կինը՝ շալերով փաթաթված, նստած է։ Ասում է՝ չգիտեմ, չգիտեմ ու պարզում ժեստն։ Մի քանի քայլ չարած՝ հետ է կանչում. «Աստվածաշունչը որ պատվիրել էիր, մերժվել է»։ Ինչո՞ւ՝ զարմանում եմ։ «Գրված է՝ չի հանձնարարվում»։ Դուրս եմ գալիս, Արմենն է պատահում՝ ընկերս, ասում է. «Տեսա՞ր, Բրոն մեռավ»։ Բրոն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի առաջին քարտուղար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի անվան կարճ-փաղաքշական ձևն էր։ Չի ասում՝ իմացա՞ր, ասում է՝ տեսա՞ր։ Գուցե որովհետև Բրոն վաղուց մեռած էր, մենք չէինք նկատում։ «Դե, դրանք ինչքան էլ մեռած լինեն, կաշին մի իշաբեռ ա»։ Ծիծաղում է։ Գնանք, էդ առիթով մի բաժակ բան խմենք՝ ասում եմ։ Խմում ենք ջրիկ, մի քիչ թթված «Հրազդան» զինի. ամենաէժանն է։ Արմենն ականջիս տակ շշուկով ասում է. «Վախենամ՝ ավելի վատ լինի»։ Սրանից վատ, էլ ուր՝ ի պատասխան շշնջում եմ։ Եղբորս կնուճքն է։ Որոշել են՝ բանակ գնալուց առաջ անպայման մկրտված լինի։ Քահանան տուն է եկել։ Ալյումինե թասի մեջ ջրի փոխարեն թարխունի լիմոնաղ է։ Երևի նոր են լցրել, գազը դեռ պնդում է։ Զարմանում եմ՝ որտեղի՞ց. ամբողջը օրը չորս-հինգ խանութ եմ վազել, թարխունի լիմոնաղ չկար։ «Ծառա Աստծո...». ասում է քահանան։ Նրա աջ ձեռքում մեկնարկային ատրճանակ կա։ «Ծառա Աստծո...». ասում ու կրակում է։ Բակի մեծ թթենուց երամով սև ծոեր են թոչում։ Վազում եմ դուրս հաշվելու։

Մեկ-երկու-երեք-չորս... Շարային քայլք։ Հրապարակի սալքարերը դաղում են ոտքերս. փաթաթանը քանդվել ու կուչ է եկել սապոգիս մեջ։ Սերժանտը ոտքով խփում է կոճիս, որ համաքայլ գնամ։ Ցավից գլուխս լցվում է մշուշով։ Մեկ էլ պապս հայտնվում ու ասում է. «Իրա համար գիտե՞ս քեզ ուր կուղարկվեն»։ Ուր՝ հարցնում եմ ու շուրջս մթնում է։ Բանտախցում ինձ նման մի տասնյակ մարդ կա։ Դուք ինչ եք անում ստեղձ հարցնում եմ։ Ասում են՝ համաքայլ չգնաս, ստեղ են բերում։ Հուսահատ կուչ եմ գալիս մի անկյունում, նստում եմ գետնին։ Մեկ էլ մեկն ասում է՝ ըստեղ մի նստի, դա Չարենցի տեղն ա։ Պապս ու



← Ղարաբաղում րեղի ունե-
ցող բռնության դեմ ցույց

Չարենցը ջահել ժամանակ շատ նման էին իրար, մոտաժում եմ՝ խղիմա կըլներ Չարենցի տեղը սխալմամբ պապիս գնդակահարած լինեին։ Շրխկոցով բացվում է դռան պատուհանիկը։ Մեկ էլ տեսնեմ՝ պապս հայացքով ինձ է փնտրում ու, նեղացած, որ նման պատահականություն եմ անցկացրել մտքովս, ասում է. «Ի՛նչ, դու՛րս իմ տնից»։ Գրեթե լացակումամ հարցնում եմ. «Բայց ի՞նչ եմ արել, որ...»։ Ասում է՝ դրսում ազատություն ա, այ

դամնազ»։ Ազատությունն ինչ ա՛ հարցնում եմ խցակից տղերքին։ Կասկածոտ հայացքով նայում եմ ասեն-չասեն, բա որ չեկայի դրածո լինեմ։ Մեկ էլ մեկը մոտենում, ականջիս շշնջում է. «Անսի 18-ին համալսարանի մոտ ենք հավաքվում, կգամ»։ Ասում եմ՝ որ ստեղից թողնեն, կգամ։ Տղերքը ծիծաղում եմ՝ դու ստեղ չես, մենք էլ արդեն ստեղ չենք։

Քայլում ենք, քայլում ենք խիտ շարքով։ Խիտ ենք, երևի, որովհետև վախենում ենք։ Վախենում ենք, որովհետև առաջին անգամն է։ Առաջին անգամը վախենալու է։ Առաջին ծխախոտից ականջիդ արմատն է ցավում։ Առաջին խումից սիրտդ է խառնում։ Առաջին սեքսից... Չե, սովետում սեքս չկար, կար միայն վերարտադրողական ֆունկցիա։ Ու մեր ձեռքերի լայն ցուցապատառներում հենց դա էլ զրված էր. «Մաիրիտը վտանգում է մեր երեխաների ապագան»։ «ԱԵԿ-ը մեր երկրի տակ դրված ռումբ է»։ գոռում է մեկը։ Մյուսն աղաղակում է. «Թույլ չենք տա նոր Չեռնոբիլ»։

Առաջին անգամվա խիզախությունը փոխարինվում է բռնվելու վախով։ Բռնվելու վախը ստիպում է թաքնվելու տեղ գտնել։ Ասում են՝ ինչքան չգրաքննված բան ունեք, պահեք, որ չգտնեն։ Պահելու տեղ չկա, թաքնվելու տեղ չկա. ստիպված ես խիզախ լինել։ Թաքնվելու միակ տեղը հրապարակն է՝ բոլորը բոլորին տեսնում են, բոլորը մերձ են բոլորին, գետինը ոտքի տակ է այն աթոռակի նման, որը կանխորոշելու է կախված չկախված լինելը։

Քայլում ենք, երզում՝ բամբ-բարձրաձայն։ Շարքերում հանկարծ նկատում եմ եղբորս։ Աֆղանստանից նոր է եկել։ Ինձ թվում է աջ ձեռքը չկա։ Մի ոտքն էլ, ծնկից ներքև՝ բացակա է։ Ինքը չի երևի մոտաժում եմ։ Ես եմ ասում է ու, աջ ձեռքի բռունցքը վեր պարզած՝ քայլում։ Քայլում, քայլում է փաստորեն։

Արթնանում եմ։ Հայրս տանը չի։ Աշխատանքի է գնացել։ Ում հետ վիճեմ կիսատ վեճը։ Մայրս վիճող չի, կարեկցող է։ Ուզում ես քնարական բանաստեղծություն գրի, ուզում ես կայսրություն փլուզիր՝ ինքը սրտակից է։ Չի ասում. «անկախություն, հա, ինչ»։

Ասում է՝ միայն զգույշ եղեք, էդ անկախությունը չընկնի գլխներիդ։ Ասում եմ՝ մամ, քյարփինջ չի, որ ընկնի գլխներիս, գործընթաց ա, ավելի շուտ՝ գործընթացի սկիզբը։

Տանկն ու ճագարը

Անկախապաշտան օրերը երեխաների համար բավական ռզկորիչ էին: Փակ փողոցներ, ԲՄՌ-ներ ու օտարերկրացի սինվորներ: Մի խանի ութսունականների երեխաներ ԵՐԵՎԱՆ-ի հետ կիսվել են սովետական բանակի սինվորների հետ կապված իրենց հուշերով:



Արսեն Շոտ Ասրապետյան

Օպերայի մոտ էինք ապրում, հենց այստեղ սովետական բանակի զինվորներ էին տանկերով: Մենք երեխա էինք, մեզ ամենուր թողնում էին մտնել: Խցկվում էինք, գնում, շփվում էինք զինվորների հետ: Հայ չէին, ընդամենը 18 տարեկան տղաներ էին: Իրենց մածուն էինք տանում, դրա փոխարեն մեզ զիջաներ կամ նույնիսկ հակազագ էին տալիս: Անգամ թողնում էին տանկի մեջ մտնել:

Մի օր պատշգամբից տեսանք, որ երկու զինվոր փախչում են: Պարզվեց՝ դուրս էին եկել ինքնակամ ու հիմա ղեկավարությունն ընկել էր իրենց հետևից: Հայրս կանչեց վերև, ասաց, որ գան մեր տուն, տատիկս էլ շտապ կերակրեց իրենց: Նրանք փաստացի մեր դեմ էին: Հանձնաժողով էին, հանձնաժողով էին, չգիտեմ ոնց իրենց պահել: Մի անգամ էլ հորս պարետային ժամից հետո բռնեցին, բայց հետո ԲՏՌ-ով բերեցին տուն:



Աննա Մանյակյան

80-ականներին Կիևյան կամուրջի հարևանությամբ այդքան շատ շենքեր չկային, ասֆալտապատ տարածք էր, մենք էլ մոտակայքում էինք բնակվում: Անկախացման օրերին այնտեղ տանկեր էին կանգնած: Չեմ հիշում՝ երբ առաջին անգամ մոտեցա զինվորներին, բայց հիշում եմ, որ մի քանի աղջիկներով խաղում էինք նրանցից ոչ հեռու: Աղջիկները վախեցան, իսկ ես ոչ: Գնում էի զինվորների մոտ հյուր, ու մի պահից սկսեցի հետո բրդուճներ տանել: Երևի գնացել էի տուն մայրիկիս պատմել, որ սոված զինվորներ են, տվել էր, որ տանեի հյուրավորել: Ամեն դեպքում հետո արդեն մայրս ինքն էր ինձ տալիս սնունդը, ասում՝ տար թող ուտեն, մեղք եմ:

Սովետ էր, եթե այսօր երեխասս գար ասեր, որ ուզում է օտարերկրացի զինվորների մոտ գնա, մի բան տանի իրենց, հաստատ չէի թողնի գնալ: Բացի այդ, մենք սովոր էինք զինվորների: Մի քանի տարի Մոնոլիթայում ենք ապրել, ռուսների մեջ, ու այնտեղ էլ շատ զինվորներ կային: Գալիս իրենց պատրաստած հացն էին բերում, խնդրում՝ փոխարենն իրենց ծխախոտ տանել: Ի դեպ այդ համա առ այսօր հիշում եմ: Հրաշալի հաց էին թխում: Կարծում եմ՝ դրա համար էլ չվախեցա մեր բակի մոտ կայանած տանկերից: Իսկ զինվորները զարմանում էին՝ որտեղից այդքան լավ ռուսերեն գիտեմ, ես էլ պատմում էի, որ Մոնոլիթայում ենք ապրել:

Մի քանի անգամ թույլ տվեցին մտնեմ տանկի մեջ: Տանը ճագար էի պահում ու նույնիսկ տարել էի ու հետո տանկի մեջ մտցրել: Անհոգ վազվզում էր: Մի օր էլ երջանիկ, բրդուճները ձեռքս գնացի իրենց մոտ ու տեսա, որ հեռացել են:





Արշակ Թովմասյան

Անկախացման օրերին մոտ տասը-տասնմեկ տարեկան էի: Հիշում եմ, որ իմացանք՝ զինվորներին դիմավորելիս օդանավակայանում մարդիկ են մահացել: Այդ ժամանակ՝ նույնիսկ այդ մանկապատանեկան տարիքում, հայրենասիրական մղումներն արդեն զլխումնս կային:

Այդքան զինվոր կյանքումս չէի տեսել: Ռուս, ուզբեկ, ղազախ: Դա էլ էր ինձ համար նոր. նրանք բոլորը ռուսախոս էին ու այլ ազգերից: Փակել էին Բաղրամյանն ու պարետային ժամ էր հայտարարվել: Փողոցի ամենավերջում ակտիվիստներն էին տեղակայված՝ կանգնած, նստած, մատրաններին պատկած: Ողջ օրն այնտեղ էին, որպեսզի չթողնեն, որ իրենց մեջքի հետևում կանգնած տանկերը մտնեն Օպերայի հրապարակ: Հիշում եմ, որ մի օր ցուցարարները բերել էին Լենինի հատորներն ու շարել հենց տանկերի ակերի առջև, թե առաջ գաք, առաջինը Լենինի վրայով եք անցնելու: Չեմ կարծում, որ դա իրենց զգալերու էր, եթե հրամանն ստանալին, անցնելու էին գնալին, բայց, միևնույն է, էպիկ էր:

Մի անգամ մորս հետ անցնում էինք զինվորների ու տանկերի մոտով, մեկ էլ հրամանատարներից մեկը ասաց՝ Первая боевая готовность (Խմբ. առաջին պատրաստություն): Այդ պահին մայրս շատ ուժեղ զայրացավ, սկսեց գոռալ նրանց վրա՝ ասելով, թե դուք մարդ եք, ձեր դիմաց երեխաներ են կանգնած ու էլի նման բաներ: Այդ պահը շատ հետաքրքիր էր, որովհետև մոտս տպավորություն էր, որ հրամանատարը վախեցավ: Սկսեց արդարանալ, թե մի անհանգստացեք, սաղ լավ կլինի:

Մենք ապրում ենք Այգեձորում, և ձմռանը Ջեյմս Բրայս փողոցը՝ նույն ինքը՝ «մեր դիքը», երեխաների համար դառնում էր սահադաշտ: Այն ժամանակ առանձնապես լավ քշվող մեքենաներ չէին, ու ճանապարհներին ոչ մեկ աղ չէր լցնում, դրա համար տարվա այդ եղանակին մեր դիքով երթևեկելն անկանխատեսելի ավարտով միջոցառում էր: Էն աստիճանի, որ ներքևի հատվածում փակվում էր, որպեսզի իջնող մեքենաները չհայտնվեն ձորում: Բնականաբար, զիշերները որոշ արկածախնդիր վարորդներ իրենց օձ-երով ու «ջորիներով» փորձում էին իջնել այդ դիքով, և ամեն տարի մենք ունենում էինք 6-7 մեքենա, որոնց պետք էր ձորից հանել: Շատ բարձր չէր, չէին մահանում, պարզապես մեքենաներն էին վնասվում: Այդ տարի, երբ բանակը երևանում էր, մի քանի անգամ հարևաններով գնում ԲՏՌ-ներ վարող զինվորներին համոզում էին, որ գան օգնեն մեքենաները հանեն հետ ու նրանք համաձայնում, գալիս օգնում էին, իսկ ես բերանս բաց նայում էի:



Արմեն Հայրապետյան

Ցույցերի պատճառով պարետային ժամ էին մտցրել: Ամեն օր տեսնում էինք՝ Բանգլադեշում մեր բակերի միջով երեկոյան շրջայցներ էին կատարում սովետական համազգեստով սովետական զինվորները՝ շինելներ հագած, շարժական ռադիոկայանը մեկի մեջքից կախած, մի 3-4 հոգով ավտոմատներով զինված:

Հիմնականում, ում տեսել եմ, սլավոնական արտաքինով էին: Իսկական, խիստ պարետային ժամ էր, հիմիկվա նման ձևական չէր: Մի օր դաս սովորելուց հիշեցի, որ մի գիրքս դասարանցուս տանն եմ թողել ու արդեն պարետային ժամ էր, մթնել էր, դասարանցիս մի քանի շենք էն կողմ էր: Մտածեցի՝ վազելով կգնամ, կվերցնեմ, կգամ: Տնեցիներին համոզեցի, որ արագ գնամ, ոչ մեկ չի տեսնի, դուրս եկա, վազելով գնացի դասարանցուս բակ, գիրքը վերցրի ու արդեն առանց վազելու տուն էի գալիս, շենքերի հեռավորությունը մի 150 մետր էր, բայց թարսի պես դուրս եկան դեմս:

Զինվորականները հանգիստ քայլում էին, թուուցիկ հայացք գցեցին վրաս ու առանց բան ասելու անցան, դե՛ երեխա, ձեռքին դասագիրք... Կամ խելացի տղերք էին, կամ էլ մարդ բռնելու հավես չունեին, հետո պուճուր երեխեն ինչ վտանգ... մանավանդ որ Աֆղանստանը չէր, որ իրանց մեջ վախ լիներ, թե թիկունքից կկրակի փողը տղան: Հետո մեր բնակչությունն իրանց հաց էր տալիս, խղճում էին: Մեր ազգի մեջ մարդկությունն ու խիղճը գենետիկ դրած են, հասարակ քայլող զինվորին նայում էին, դե՛ Սովետ էր ու էդ պահին լիքը հայ տղաներ նույն էր բանակում ծառայում էին, ուղղակի ուրիշ հանրապետություններում: Էդպիսի դեպքերում քեզ մոտ օտարներին փորձում ես վերաբերվել էնպես, ոնց որ կուզես, որ ձերոնց վերաբերվեն դրսում: Բնակիչներն իջնում, զինվորներին տոպրակներով ուսելիք ու ծխախոտ էին տալիս: Հետո մի տեսակ ոնց որ զինվորներին էլ դրական տրամադրեին մեր ժողովրդի հանդեպ:

Բայց լարվածությունն էլ եմ տեսել: Երբ ներքին զորքերն իջան օդանավակայանում ու շարժվեցին դեպի Երևան, մարդիկ փորձել էին ճանապարհը փակել, բախումներ եղան: Մեր բակերի մեջով ահավոր քանակությամբ մարդիկ էին փախչում: Սկզբում լռություն էր, ընդհանրապես մարդ չկար, մեկ էլ հանկարծ հարյուրավոր մարդիկ վազեցին էդ կողմից մեր շենքերի արանքով: Ընկերներիցս մի քանի հոգի էլ տանիքների վրայից տեսել էին ծեծ ու ջարդը:

Հետո սկսեցին զորքը դասավորել քաղաքի տարբեր կողմերում:

Կայանատեղեկից մեկը Մալաթիայի ֆուտբոլի դպրոցն էր, որտեղ հայրիկս մարզիչ էր աշխատում: Երեխեքը ոնց որ ռազմաբազայում ֆուտբոլ պարապելուց լինեին: Զինվորական հրամանատարական կազմի հետ լավ հարաբերություններ էին կառուցել ու հայավարի ձևերով էնպես արել, որ դրանք արդեն ջերմ բարիդրացիական տրամադրությամբ են եղել հայերի հանդեպ: Նույնիսկ տարածքը լքելուց հրամանատարն առաջարկել է հոսանքի գեներատորը նվեր տա հայրիկիս, բայց հայրիկս հրաժարվել էր: Դեռ չգիտեր, որ մի երկու տարուց շատ պետք կգար:





Ջանգվաճային ոչնչացման զենք

**Աշուր Միրզոյանը և իր լեզենդար շեփորը՝
Ղարաբաղյան շարժման խորհրդանիշներից մեկը,
որի ելևէզները ճայնակյեղ են ցույցերին առաջին
օրերից մինչև հաղթանակ: Պարսիմ է երաժիշտը:**

Շեփորներից ամենաապսպարաժը
Երաժշտությունն ինձ համար միշտ էլ ավելին
էր, քան պարզապես զբաղմունք: Դեռևս դե-
ռահաս տարիքում նվագում էի Հայկելկորո-
գործարանի անսամբլում, որտեղ հայրս գոր-
ծիքային բաժնի վարիչն էր: Հիշում եմ, թե ինչ-
պես էի Մոցարտի ռոնդոն կատարում բեմի
վրա՝ նվագախմբի առջև կանգնած, որի կազ-
մում միայն մեծահասակ, լուրջ տղամարդիկ
էին: Ավելի ուշ՝ արդեն Պոլիտեխնիկական ինս-
տիտուտում սովորելու տարիներին, սկսեցի
նվագել «Արմինա» անսամբլում: Մենք համերգ-
ներով հանդես էինք գալիս Հայաստանի տար-
բեր քաղաքներում, հյուրախաղերով լինում
Խորհրդային Միության այլ հանրապետու-
թյուններում: Դրանցից մեկին նախապատ-
րաստվելիս էլ ձեռքս ընկավ հենց այն շեփորը,
որը հետո մի քանի ամիս շարունակ հնչեց
Թատերական հրապարակում: «Արմինայի»
կազմում պիտի հյուրախաղերի մեկնեի Ռու-

սով և Սանկտ Պետերբուրգ: Ես երաժշտական
գործիք, որպես այդպիսին, չունեի, մեր շեփորը
պատկանում էր Մերգելյան ինստիտուտի նվա-
գախմբին, որտեղ ես երբեմն նվագում էի: Երե-
կոյան դասավորեցի ճամպրուկներս, գործիքն
իր կաղապարի մեջ դրեցի ճամպրուկի կողքին
և զնացի ընկերներիս հետ մի ուղեթաս խմելու:
Պետք է ասեմ, որ հայրս դեմ էր այդ ճամպրո-
դությանը, նրան դուր չէր գալիս, որ հյուրա-
խաղերի համար մեկամյա ակադեմիական
արձակուրդ էի վերցրել ինստիտուտում: Մի
խոսքով, երբ ես զնացի, նա զանգահարեց
նվագախմբի տնօրենին և առաջարկեց վերա-
դարձնել գործիքը: Նա էլ իհարկե համաձայնեց,
քանի որ առանց շեփորի էին մնացել: Տուն
վերադարձա շատ ուշ և փովեցի անկողնուս
քնելու: Պատկերացրեք, թե որքան զարմացա,
երբ առավոտյան չգտա գործիքը և ինչպես
զայրացա, երբ պարզեցի, թե ինչ էր պատա-
հել: Դե էլ ինչ կարող էի անել, զանգահարեցի

տղաներին, ամեն ինչ պատմեցի, ասացի, որ չեմ
կարողանա մեկնել: Բայց մեր մենակատարին
կոտրելը հեշտ չէր, նա հրամայեց չհուսահատ-
վել և շատ արագ գնալ Օպերա:
Մենք գնացինք ֆիլհարմոնիայի Խորոզ (այսինքն
աբլոր) մականվամբ պահեստապետի մոտ: Նա
շեփոր առաջարկեց 150 ռուբլիով, բայց մենք՝
Երաժշտության հանդես մեծ ձգտում ունեցող
ուսանող-ինժեներներս, իհարկե այդքան գու-
մար չունեինք: Ապա Խորոզը մեզ մի սենյակ
ուղեկցեց, որտեղ պահվում էին անսարք և դուրս
գրված գործիքներ: Դրանք կարելի էր անվճար
վերցնել, իհարկե, եթե գտնեիր քիչ թե շատ
սարքինք: Շեփորների մի ամբողջ կույտ կար,
մեկի պտուտակն էր կոտրված, մյուսի կեռիկը:
Վերջապես ես գտա նրան. մաքրելուց և յուղե-
լուց հետո պետք է որ նվագեր:
Հասնելով Ռոստոմի հյուրանոց՝ առաջին հերթին
խոհարարից մի թաս ուզեցի: Դրա մեջ իմ նոր
շեփորը եռացրի, քանդեցի, մաքրեցի այնքան,
մինչև որ փայլի և իջա համերգի: Խայտառակ
լինելը մեղմ է ասված. ես կանգնել էի բեմի վրա՝
շեփորը միկրոֆոնին դեմ տված և որքան ուժ
ունեի փչում էի, ձայն դուրս չէր գալիս: Բայց
այն պետք է նվագեր, ես հաստատ զիտեի: Ողջ
հաջորդ օրը ես հյուրանոցային համարիցս դուրս
չեկա, փորձում էի բառի բուն իմաստով կյանք
ներշնչել նրա մեջ: Առաջին երկու ժամը ոչինչ չէր
ստացվում, հետո քիչ-քիչ ուշքի եկավ: Սկզբում
վալտորնի նման խռպոտ ձայն ուներ, իսկ ռուս-
տովյան հյուրախաղերի վերջում արդեն զրնգում
էր ինչպես ամենաազնվազարմ շեփորը:

Ապրիլից

Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատան-
քի անցա «Լազերային տեխնիկա» գիտաար-
տադրական միավորումում: Ազատ ժամանակ
ավելի քիչ ունեի, բայց ես և երաժշտությունը,

միննույն է, չբաժանվեցինք: Այդ տարիներին ինձ նույնիսկ Կոնստանտին Օրբելյանի նվագախումբ հրավիրեցին, բայց ես չգնացի. նրանք դասական էստրադային գործեր էին նվագում, իսկ մենք՝ ինչ ուզեինք, և դա ինձ դուր էր գալիս: Իմ նկարիչ ընկերներից մեկը տուն ուներ մետրոլի «Բարեկամություն» կայարանի հարևանությամբ: Տան առաջին հարկում նա իր արվեստանոցն էր հարմարեցրել: Այնտեղ հավաքվում էինք ու նվագում Սթիվի Ուոնդեր, Blood, Sweat & Tears, երաժշտություն՝ դուրս խորհրդային իրականությունից:

Մի անգամ նստած էինք արվեստանոցում, երբ ներս մտավ մեր տղաներից մեկը՝ Քիսը, և ասաց, որ Օպերայի մոտ մեծ ամբոխ է հավաքվել: Ժողովուրդը պահանջներ է ներկայացրել ու հիմա Մոսկվայից հանձնախումբ է ժամանել պատասխանով: Որոշեցինք գնալ, տեսնել, թե ինչ է կատարվում:

Փետրվարն էր, Ղարաբաղյան շարժումը նոր-նոր էր թափ հավաքում և նման մեծ ցույց երևանում ես դեռ երբեք չէի տեսել: Մարդիկ սպասում էին Օպերայի մոտ, շուտով պիտի հայտնեին Մոսկվայի պատասխանը: Մեկ ժամ, երկու ժամ, ոչ մի նորություն: Որքան շատ էինք սպասում, այնքան շատ էինք նյարդայնանում: Ի վերջո լարվածությունը գերակա դարձավ, որոշում կայացվեց գնալ կենտրոնական կոմիտեի մոտ և փակել Պրոսպեկտը: Ասելը հեշտ է: Մենք կուտակվում էինք մայթին այնպիսի զգացողությամբ, կարծես հիմա պիտի թոշենք առանց պարաշյուտի: Նախկինում ոչ մեկը ստիպված չի եղել կանգնեցնել երթևեկությունը, փողոցներ փակել քաղաքի կենտրոնում: Այդ ոչ այնքան հարմար պահին մի փոքրիկ տղա հագուստիցս քաշեց. «Հորեղ-բայր, սա շեփոր է»,– ես ներքև նայեցի և գլխով արեցի: «Ատա՜մ նվագեմ»,– ես մտածեցի, որ եթե երեխան տարբերակում է շեփորի պատյանը, ապա, հավանաբար նվագել էլ գիտի և տվեցի գործիքը: Վերցնելով փորձեց փչել և ինչ-որ խզված ձայն դուրս եկավ: Ամբոխը սկսեց զայրանալ, թե երեխայի ձեռքից գործիքը վերցրեք, մենք լուրջ գործով ենք զբաղված, իսկ դուք՝ Աստված գիտե, թե ինչու: Երեխայի ձեռքից խլեցի գործիքը, շուրթերս մոտեցրի փողին ու նվագեցի իմ սիրելի ազդակույ՜ը: Ու հանկարծ կարծես հրամանով ամբոխը զգաստ կանգնեց դեպի վեր պարզած բռունցքներով ու առաջ շարժվեց: Փողոցը փակեցինք:

Շեփորահարը քսանիֆին


Ռուս պաշտոնյաները մի կարգին բան չասացին և իրավիճակն էլ ավելի սրվեց: Հաջորդ օրը ես սովորականի պես աշխատանքի գնացի և նախատեսում էի Օպերա գնալ միայն երեկոյան, բայց չեղավ: Պարզվեց, որ հրապարակում հավաքված մարդիկ շեփորահարին էին պահանջել: Ամբոխի մեջ մեկն ասել էր, որ ինձ ճանաչում է, որ անունս Աշոտ է և որ աշխատում եմ «Լազերային տեխնիկայում»: Իմ հետևից հանձնախումբ ուղարկվեց, որ ոտքով պիտի հասներ, այն դեպքում, երբ մեր ընկերությունը քաղաքի կենտրոնից յոթ կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում: Աշխատանքն ընթանում էր իր բնականոն հունով, երբ բղավոցներ լսեցի, իսկ հետո վայրի իրարանցում սկսվեց: Բակի կողմից կանչում էին «Շեփոր, շեփոր...»: Բերաններս բաց մենք պատուհանից ցած էինք նայում, երբ աշխատասենյակ մտավ տնօրենն ու բղավեց. «Աշոտ, արի, նրանք հիմա ցանկապատը կպո-



կեն»: Տնօրենն այնքան էր վախեցել, որ վերջում թույլ տվեց գալ ու գնալ, երբ որ կցանկանամ: Ողջ խմբով քայլեցինք հետ՝ դեպի կենտրոն: Ես տուն մտա, վերցրի շեփորը և հետ գալով Օպերա՝ հայտնաբերեցի, որ խցկվելու տարբերակ պարզապես չկա: Քիչ հեռու պաղպաղակի կրպակ կար, որի կողքին մի մեծ ծառ: Ես ծանոթ տղաների գտա, խնդրեցի օգնել ինձ բարձրանալ կրպակի տանիքին: Ամբիոնի մոտ ինչ-որ մեկը ելույթ էր ունենում: Ես սպասեցի, մինչև որ նա կվերջացնի ելույթը և նվագեցի: Ինչպես և նախորդ օրը, ամբոխը վայրկենապես վեր բարձրացրեց բռունցք արած ձեռքերը: Ես նվագում էի այդ բռունցքների ծովից վեր և հասկանում, որ մենք մեծ ուժ ենք, որն ի զորու է ամեն բանի: Երբ շեփորն իջեցրի դիմացիս ամբոխը սկսեց շարժվել, ծովի ջրերը մի կողմ հոսեցին և այդ ստեղծված արահետով ես հանգիստ հասա ամբիոնին, որտեղ ինձ դիմեցին շարժման առաջնորդները՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները և խնդրեցին այլևս չբացակայել:

Անկախության եռանդարհին

Ես միշտ համարել եմ, որ շեփորը գնդացիից ուժեղ է: Եվ Ղարաբաղյան շարժումը մեկ անգամ չէ, որ հաստատել է դա: Օրինակ՝ «Զվարթնոցի» դեպքերի ժամանակ: Ողջ Հայաստանով մեկ ընկերությունները գործադուլներ էին սկսել: Ինչ-որ մեկն Օպերայում ամբիոնից ասաց, որ «Զվարթնոց» օդանավակայանի ղեկավարությունը խոչընդոտում է աշխատողներին անցկացնել բողոքի ակցիան: Բազմահազարանոց ամբոխը շարժվեց դեպի օդանավակայան և իրավիճակը վերահսկողությունից դուրս եկավ: Ես այնտեղ հասա մեծ դժվարությամբ և շատ անհանգստացա՝ տեսնելով, թե ինչ է կատարվում: Մարդիկ նյարդայնացած էին, օդանավակայանի դիմաց զինվորներ էին կանգնած, տարածքը շրջափակված էր, կանաչք հետևում էին թողել տղամարդկանց և ծանր իրերով լի պայուսակներով հարվածում էին զինվորներին: Ես հասկացա, որ դա լավ չի ավարտվի և փորձեցի անել այն, ինչ արդեն ոչ մեկ անգամ արել էր իմ շեփորը. հանգստացնել և միավորել մարդկանց: Ես առաջ գնացի, կանգնեցի մի ինչ-որ քարի վրա և նվագեցի արդեն բոլորին ծանոթ ազդակույ՜ը: Շուրջբոլորը մարդիկ կարծես սթափվեցին, հիշեցին ինչ-որ կարևոր բան, երևի այն մասին, որ Երևանում մենք միմյանց թշնամին չենք: Բոլորը պատի պես ամուր կանգնեցին և վեր բարձրացրին բռունցքները: Համենայն դեպս




մի որոշ ժամանակով շեփորը վերականգնեց կարգ ու կանոնը: Եվ այդպես եղավ բոլոր հետագա ինը ամիսների ընթացքում: Ամենադժվարին պահերին շեփորի ելևէջները ոչ միայն ոգեշնչում էին մարդկանց, այլև հուշում էին ելքեր, հորդորում էին լինել հանգիստ և դիմացկուն: Չէ՞ որ շեփորը թե՛ մեր պայքարի և թե՛ միասնության խորհրդանիշն էր: Որքան հաճախ ենք մենք եղել սահմանագծին, և ամեն անգամ այն զերծ էր պահում մեզ սխալ քայլերից: Այդ օրերին, երբ ամբոխը երկու մասի էր բաժանվել, կողմերի առաջնորդները գրեթե կոչ էին անում հարձակվել միմյանց վրա նույն այդ վեր պարզած բռունցքներով: Ես մոտեցա խմբերից մեկի ղեկավարին և ասացի, որ կարող եմ դա կանգնեցնել: Նա ծաղրական հայացք նետեց ինձ վրա, իբր՝ դու ուր: Բայց ես չէի կասկածում: Ես այդ ժամանակ նվագեցի, որպեսզի հիշեցնեմ, որ մենք մեկ ամբողջություն ենք: Լսելով մեղեդին՝ մարդիկ մի պահ տատանվում էին, բայց շեփորը պնդում էր իրենը և բռունցքները վեր էին ձգվում և մենք կրկին մեկ ամբողջություն էինք: Գործիքն իջեցնելով՝ ես մոտեցա խոսափողին և ասացի, որ այլևս չեմ նվագելու և որ շեփորը միասնության խորհրդանիշն է, եթե չկա միասնություն, չկա նաև շեփոր: Շեփորին հրաժեշտ տալը դժվար էր, բայց մի օր ես հստակ հասկացա, որ այն այլևս ինձ չէր էլ պատկանում, այն արդեն երկրի սեփականությունն էր: Ես այն Հայաստանի պատմության թանգարան տարա: Այժմ այն այնտեղ է, որտեղ և պետք է լինի. թանգարանի Երրորդ հանրապետությանը նվիրված բաժնում: Եթե միջանցքներում մոլորվեք՝ սրահը կոչվում է «Անկախության ճանապարհին»:

🏠 **Ապրիլե Ղապարյան**

📍 **Աշոտ Միրզոյանի արվիվ,**
Արմենայրես / Ռուբեն Աթայան

Զրույց իրականության հետ

Անկախացումն իր սերնդի լավագույն լուսանկարիչներից
Ծեղի՝ Զավեն Ռաչիկյանի օբյեկտիվով ու հուշերով:




Զավեն Ռաչիկյանը
երեք գրքի հեղինակ
է. «54321», 2010թ.,
«Սև, սպիտակ,
եռագույն», 2016թ.,
«Հոսող ջուր», 2019թ.

Պատմության արձանագրում

Անկախացման օրերին լուսանկարելիս չէի համարում, որ պատմական լուսանկար եմ անում. նման առաքելություն չեմ ունեցել: Այդ ամբիցիան չկար, ամեն ինչ ենթագիտակցորեն էր տեղի ունենում, երբ շատերը՝ գրեթե բոլորս, նետվել էինք պատմության մեր այս խառնարանը... Բայց երբ տրվում ես հետազոտությանն ամբողջությամբ, այն ուժ է ստանում և տարածվում է: Չէի նպատակադրվել «կերտելու» Արցախյան շարժման կամ պատերազմի պատմության պատկերը: Ես պատերազմի լուսանկարիչ չեմ. ես լուսանկարիչ եմ, որին նյութը, ոտքերն ու սիրտն ուղղորդել են Արցախ՝ պատերազմի դաշտ: Ես պերֆեկցիոնիստ եմ ու, եթե լավ կռվել իմանայի, պիտի լինեի պատերազմի դաշտում... սա էլ իմ ոչ միակ թերությունն է: Ես ինձ լավ լուսանկարիչ եմ համարում և գնում եմ մի ճամփով, որը հարթել են հայ ճարտարապետ-լուսանկարիչները՝ Թորոմանյան, Վրույր, Քյուրքչյան, և որոնց առաքելական գործին կես դարյա հապաղու մով միացավ Անդրանիկ Քոչարը: Ես ինձ գտնում եմ հենց այդ դեպի համաշխարհային լուսանկարչություն տանող մայրուղու վրա, իսկ այստեղ կարևորը հայ ինքնության բացահայտումն է:

Արցախում էմոցիոնալ դաշտն ավելի սրված էր, մարդիկ ավելի լուրջ էին ու զուսպ. պատերազմի ծանրությունն իրենց վրա էին կրում: Այնտեղ գերակշիռը լուրջությունն էր ու լուրջանք լեզուն, դա արտացոլվում է նաև այնտեղ արված լուսանկարներում: Արցախում պատկերն ավելի քանդակային էր, իսկ Հայաստանում՝ ավելի ակվարելային. թամաշան էր շատ:

Երբ աշխատում էի «Սև, սպիտակ, եռագույն» գրքի վրա, որտեղ ժողովել եմ այդ օրերին արված լուսանկարներս, լուրջ բարդությունների առերեսվեցի, շատ մեծ խճճվածություն կար քսանհինգ տարվա իմ արխիվն ինքս ինձ համար պարզաբանելու, խմբագրելու ընթացքին: Միայն աշխատանքս ավարտին հասցնելուց հետո հասկացա արածիս արժեքը: Արեցի, որպեսզի ազատվեմ, նվաճեմ իմ ազատությունը:



Լուսանկարչություն, դոկումենտ, **հեղափոխություն**

Ֆիզիկայի բնագավառը հարկադրաբար լքելուց հետո լուսանկարչությունն իրականության հետ զրուցելու իմ միջոցներից մեկն էր։ Այդքան էլ ընդունված մասնագիտություն չէր։ Բարդ ճանապարհ էի բռնել, բայց երբ վստահում ես նյութին, որին ծառայում ես, դու ինքդ ես գնահատում, թե որքանով ես հաջողակ և անիմաստ բարդություններ չես ստեղծում։ Լուսանկարչությունն այն տարիներին թվացյալ փախուստ էր համատարած լճացումից, նաև ֆիզիկայի գեղեցկագույն բնագավառին պատած լճացումից։

Պատրաստվում էի ֆիզիկոս դառնալ, բայց մի օր հասկացա, որ մի բան այն չէ. մենք կանչված էինք հիմնարար գիտությամբ միտքներս արելու, այնինչ սուտ ռազմական պատվերներով էին փորձում մեզ խաբել, ինժեներությունն ու գիտությունը շփոթել էին շատերը, այդպես ձեռնտու էր, սուտ, կեղծ։ Սկսեցի փնտրել ճշմարտությունն ինքս իմ ներսում, այդ ժամանակ շատերն էին նման որոնումների մեջ։ Մտա լուսանկարչություն, որպեսզի հետագայում տեղափոխվեմ կինոյի ոլորտ։ Սկսեցի մամուլի հետ աշխատել, պատրաստվում էի դիմել ՎԳԻԿ, բայց մի պահ հասկացա, որ Մոսկվա գնալ չեմ ուզում։ Հայաստանում պրոֆեսիոնալ լուսանկարչությամբ զբաղվելու ոչ մի հեռանկար չկար, մնացի մամուլում։ Երբ ասում եմ «աշխատանք մամուլում», մի հասկացեք որպես լրագրող, ես ինձ երբեք լրագրող չեմ համարել։ Սովետի տարիներին եղածը լրագրություն չէր, այլև աջակցում պրոպագանդիստական գերմեքենային։ Ես զբաղվել եմ դոկումենտալ լուսանկարչությամբ՝ միևնույն ժամանակ հետազոտելով այն, ու դա չի նշանակել, որ ծառայել եմ որևէ ուժի։ Եթե ծառայել, ապա միայն ազնվությամբ՝ լուսանկարչությամբ։

Խնդիրներն ու նպատակներս անընդհատ փոխվում էին, բայց միշտ պտտվում էի նույն առանցքի շուրջ՝ լուսանկարչություն, դոկումենտ, հետազոտություն։





Հայ լուսանկարիչը

Լավ լուսանկարիչ լինելուց առաջ ինձ համար ավելի կարևոր է լինել հայ լուսանկարիչ: Ճառայելով հայ լուսանկարչությանը, եթե մի քիչ ավելի վերամբարձ ասեմ, համաշխարհային լուսանկարչությանը՝ կարծում եմ՝ կարողացել եմ հայտնաբերել հետաքրքիր տիպաժներ, կերտել կերպարներ, կառուցվածքներ, հասնել տեսական բնույթի հայտնագործության: Վաղը, եթե մեկն ուսումնասիրի հայ լուսանկարչությունը ու փնտրի, օրինակ, ութսունականների երեխայի տիպաժներ, կերպարներ, երևի կկարողանա այն գտնել իմ լուսանկարներում: Շատ բարդ է ասել, թե որտեղ է ազգայինը սկսում ի հայտ գալ վիզուալում: Բնականաբար, խոսքը «հայկական» տարազների ու այլ տարրերի մասին մեխանիկական օգտագործման մասին չէ: Ազգային այն իմաստով, ինչպես այն թաքնված է Հրանտ Մաթևոսյանի արձակում, Համո Սահյանի կամ Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում: Այն լուսանկարները, որոնք հաջողված են ու որոնց մեջ ես կայացել եմ, նրանք են, որտեղ հայ իրականության հետաքրքիր հարաբերություններ եմ գտել և կարողացել փոխանցել: Ձեզ դրանք ներկայանում են կերպարների կամ տիպաժների տեսքով: Չեմ սիրում լուսանկարներին կերպարներին անվանել հերոսներ: Ինձ համար նրանք այդ դոկումենտալ բազմաշերտ գոյության մասնիկներն են: Խմբակային դիմանկար լուսանկարային ժանրն իմ հայտնագործությունը չէ, բայց թե ինչպես եմ ազգային կերպարներով այդ հարթապատկերային գիրը տեղափոխում մեկ այլ հարթություն, միայն ես դա գիտեմ: Այստեղ արվեստաբանող գիտակի օգնության կարիքն ունեմ, նաև կամեցող, ոչ կլիշեակիր: Երբեք ինքս ինձ չեմ ասում, որ «պրոբլեմ» եմ իրականացնում: Չեմ վերնագրում, չեմ որոշում, որ այսօր պիտի նկարեմ որոշակի տեսակի մարդկանց, որոշակի իրավիճակում: Ես երբեք նման նպատակներ չեմ դրել իմ առջև: Դա շատ ներքին հարց է՝ համադրված գիտական համոզմունքների և ինտուիցիայի հետ:





Ամեն օրվա հերոսություն

Մենք սիրում ենք պիտակավորել մարդկանց: Սա քաղաքագետ է, սա Ղարաբաղ կոմիտեի անդամ է, սա՝ պատգամավոր, այս մեկը՝ «մուզիկանտ», իսկ սա էլ ինչ-որ մի լուսանկարիչ է: Ես միշտ հանդես եմ եկել իմ գործիքով, ես լուսանկարիչ եմ, ով համալսարանն ավարտել է գերագանցությամբ: Այդպիսի հիմքով հիմար լինել չես կարող. առնվազն վերլուծական մտածողություն պիտի ունենալ: Ես ունեմ էմոցիոնալ դրսևորումներ և պոթկումներ, վերջ ի վերջո, արվեստի եզրին եմ աշխատում, բայց միևնույն է, զերակշիռ վերլուծական մտածողությունն է: Կան նկարիչներ, ովքեր ասում են՝ արտիստը պիտի պոթկումներով ստեղծագործի, պիտի սրտի ուզածն անի, իսկ Սարյանն ասում էր, որ միևնույն ժամանակ արտիստը պիտի խելքով աշխատի: Նա չէր ասում, որ նկարի վրա ամեն զիծ քաշելիս նկարիչը պիտի հաշվի, թե ինչքան գումար կաշխատի դրանից, նա պարզապես պիտի վերլուծի:

Եթե այն տարիներին երկիրը չգնար փլուզման և լքացման, կմնայի ֆիզիկայի բնագավառում, բայց հաջորդող տարիներին և առ այսօր մենք չունենք լուրջ բնագիտություն, արդեն ստորադասվում է նաև գիտնականը: Այսօր էլ կրթության, գիտության և քրոնաջան աշխատանքի փոխարեն մենք նույն պահանջատիրական ոճով «փորձում» ենք փոփոխություն բերել: Առ այսօր չունենք կայացած ինստիտուտներ ու հասարակություն և այս չկայացվածության վրա ենք փորձում երկիր կառուցել: Միակ ճիշտ ճանապարհը կրթությունն ու աշխատանքն է: Ամեն օր, հերոսաբար:

Սիրողական օբյեկտիվ

Ճարտարապետ Արսեն Շուռ Ասրապետյանը պատմում է իր սեփական փեսախցիկով արված սիրողական կադրերի (սև-սպիտակ) մասին, ինչպես նաև կիսվում լինում մի շենժում հայրնաբերված՝ անհայտ լուսանկարչին պատկանող ծապավենով (գունավոր):



Հենց էն տարիներ

88-ին ութերորդ դասարանում էի: Մայրիկիս հետ պատահական անցնում էինք հանրահավաքների կողքով: Տեսածս ինձ շատ ոգևորեց: Դրան գումարվում էր նաև, որ հենց այն տարիքում էինք, երբ ամեն ինչին ուզում ես մասնակցել: Սովետ էր, չէր կարելի, ցույցերն արգելված էին. շատ գրավիչ էր: Հետաքրքիր էր, որ ես ու տարիքակիցներս բավական հասուն էինք, տեղյակ էինք տեղի ունեցողից: Մեզ համար ոգևորվածության առիթ էր, բայց իրականում տագնապալի օրեր էին: Ակրակեն, չեն կրակի: Ծնողներս խիստ էին, բայց, չնայած դրա, թողնում էին զնալ ցույցերի:





Ինքնաբերիկ հայրենասիրություն

Երբ դեռ նոր էր ամեն ինչ սկսվում, ու ցույցեր գրեթե չկային, Հրապարակում պարբերաբար շքերթներ էին անցկացվում և բոլոր դպրոցներին պարտադրում էին աշակերտներին բերել այնտեղ: Մեզ էլ դասարանով տարան, ու երբ հասանք Լենինի արձանի մոտ, բոլորս հանեցինք եռագույնները և սկսեցինք թափահարել: Շքերթը դարձավ Արցախին նվիրված ցույց: Նախաձեռնողներն ավելի բարձր դասարաններից մի խումբ տղաներ էին: Սովետի ժամանակ ցույց անելն անհավանական բան էր թվում: Վերջին անգամ քաղաքում ցույցեր վաթսուևականներին էին եղել: Թե՛ տանը, թե՛ դպրոցում մեզ բան չասեցին, այդ օրերին քաղաքում խառն իրավիճակ էր, արդեն անիմաստ էր մի բան ասել:




Այն ժամանակ ու հիմա

Հիմա չափազանց եփված ենք, բոլորը կարծես ամեն ինչից զրուխ են հանում: Այն ժամանակ ամեն ինչ պարզ էր, մի քիչ ավելի ռոմանտիկ էր: Բնականաբար, կար գիտակցում, բայց մեծ քաղաքական հարցերի մեջ շատ քչերն էին զրուխ հանում:

Մի բան է, երբ դիմացդ սեփական երկրիդ ուստիկանությունն է, ուրիշ բան է, երբ կանգնած ես սովետական բանակի առջև: Այն ժամանակ կարող էին տանկերով վրայովդ անցնել, այսօր այդ վախը չկա:

Մի անգամ հայրս իմ վրա շատ ուժեղ ջղայնացավ: Գնացել էինք ցույցի, բոլորը գոռում էին՝ «ով չի՞ ցնի ցույցի, հայ չի», մենք էլ երեխեք էինք՝ ոգևորվել էինք, սկսեցինք նույնը փոխել: Երբ եկա տուն, հորս պատմեցի, շատ բարկացավ: Մինչև հիմա հիշում եմ ասածը: Ասաց՝ «դու ի՞նչ իրավունք ունես մարդուն ասել, թե նա ինչ անի»: Ուժեղ տպավորվել էր, հիմա երբ զգում եմ, որ մի տեղ ամբոխ է հավաքվում, հեռանում եմ: Կարելի է ասել իմունիտետ եմ ձեռք բերել:



Հայրենի և անհայր հեղինակից

Փոքրուց սիրել եմ լուսանկարել: Երբ երկրորդ-երրորդ դասարաններում էի, հայրս ինձ տեսախցիկ նվիրեց: Առջվում էր՝ SMENA 8-N LOMO: Փոքրիկ, շատ հասարակ տեսախցիկ էր: Ցույցերին միշտ հետս էր: Իրականում շատ լուսանկարներ ունեի: Նույնիսկ քաղաքի վրայով թռչող ուղղաթիռներն էի բռնացրել: Տան վրայով ցածր թռչում էին մոտ 20 ուղղաթիռ: Իրական հոգեբանական ճնշում էր: Ցավոք, ժապավեններին մի մեծ մաս տվել էի ընկերներիցս մեկին, որպեսզի երևակեր, բայց հետո նա մահացավ ու ժապավեններս անհետ կորան: Տեսախցիկս էլ մեկ այլ ընկերոջս էի տվել, զնում էր օդանավակայան, իսկ ես զբաղված էի: Հենց այն օրն էր, երբ առաջին զոհը եղավ: Ընկերս, փախչելով օդանավակայանից, զցել էր տեսախցիկս ու կոտրել:

Իհարկե էսօրվա նման ամեն մեկը չէր, բայց միևնույն է՝ շատերն էին սիրողական նկարում, հաստատ ես միակը չէի: Ես ուղղակի ֆիքսում էի տեսածս: Օպերայի մոտ բոլորը քաղաքական թեմաներով ազդագրեր էին բերում-կացնում: Ինքնաբուխ արվեստ էր, ես էլ նկարում էի դրանք, որ հիշեմ: Փոշմանում եմ, որ քաղաքը քիչ եմ նկարել, միգուցե հիմա հնարավոր կլիներ շատ ավելին պահպանել: Մի անգամ տղաներով դուրս էինք եկել Բաղրամյան, փողոցի մեջտեղում դատարկ էր. մի կողմից հանրահավաքի մասնակիցներն էին, մյուս կողմից սովետական բանակի զինվորները, իսկ մենք նրանց միջև: Այդ օրը երկու լուսանկար արեցի՝ նկարեցի երկու կողմերը: Միգուցե այսօր երեխաներիս թույլ չտայի նման տեղերում հայտնվել:



93-ին Առնիստասում գտնվող Դիզալնի ինստիտուտի շենքն էինք չափագրում: Մի պահից այնտեղի աշխատողները պարզապես թողել էին շենքը ոնց կար ու հեռացել էին: Նրանց ֆոտոլաբորատորիայից լիքը ժապավեններ էինք փրկել: Այդ պահին մի մեծ մաս թողեցինք այնտեղ, պայմանավորվել էինք, որ կգանք վերցնելու, շինարարներն էլ խոսք էին տվել պահել, բայց հետո պարզվեց՝ զցել էին աղբը: Բարեբախտաբար, մի քանիսը վերցրել էի հետս: Վրան գունավոր, շատ լավ որակով լուսանկարներ էին ցույցերից: Սկանավորեցի ու պահեցի ինձ մոտ: Ցավոք, հեղինակն անհայտ է:

Պայքարի պատկերագրությունը

1988-ի դեպքերն աչի ընկան մշակութային նոր ու փարքեր դրսևորումներով: Համախմբված գործողությունները հանգեցրին նոր ժողովրդական կոլեկտիվ արվեստի ի հայտ գալուն: Սրեղծվեցին ցուցապատումներ, որոնք ներկայացնում էին ցուցարարների հավախական կարծիքը և յուրահայտիկ նշանային բնույթ էին կրում: Ընդ որում, դրանց շարժում կային թե՛ պրոֆեսիոնալ նկարիչների և թե՛ անփորձ ճեռի սրեղծած պատումներ:

→ Միտոսական պատմությունը ցույցերից



Ի մասշտաբով և կարևորությամբ այս իրադարձություններն աննախադեպ էին ԽՍՀՄ պատմության համար: Թե՛ վիզուալ և թե՛ կոնցեպտուալ առումով ցուցապատումների մշակույթն այս կոնտեքստում չունեի նախադեպ և պետք է ձևավորվեր տեղում, ընդգրկեր խիստ տեղայնացված և օրակարգային նշանային համակարգ՝ պատկերներ ու տեքստեր: Մյուս կողմից՝ ժողովրդի հիշողությունը դեռ թարմ էր, չէ՛ որ ԽՍՀՄ քարոզչամեթոդային զինանոցում պատաստային արվեստը՝ պլակատը, մեծ դեր ուներ՝ շնորհիվ արդեն թագ ազդեցություն թողնելու, տպավորելու, տեսողական հիշողության վրա ներազդելու հատկանիշների: Սա թերևս հետաքրքիր է այն առումով, որ ցույցերի ընթացքում ի հայտ եկած այս ժողովրդական արվեստը խորհրդային քարոզչամեթոդային զենքն ուղղեց հենց իր դեմ:

Շարժման պատատները ցույց էին տալիս ժողովրդի քաղաքական դիրքորոշումը, տրամադրությունը, հիշողությունը, ձևերի ու գույների նշանային ընկալումը: Դրանք բազմազան էին ժանրային և բովանդակային առումով և, որ ամենակարևորն է, ազատ ստեղծագործական մտքի արզասիք էին, թելադրված չէին ոչ մի կոնկրետ քաղաքական ուժի կողմից: Դրանք անշուշտ կրում էին թե՛ ազգային և թե՛ խորհրդային հիշողության հետքեր, խոսում էին, պարզ, բայց և սրամիտ ու կտրուկ և յուրատեսակ հումոր էին պարունակում: Բազմազան էին և թեմաները, որոնց անդրադառնում էին այդ շրջանի պատատները: Դրանցում երևում էր ժողովրդի վերաբերմունքը ԽՍՀՄ ղեկավարության հանդեպ, դիրքորոշումը Հայոց ցեղասպանության, սումգայիթյան դեպքերի, հայապահպանության, Ղարաբաղի հետ վերամիավորման, ազգերի ինքնորոշման, Հայաստանի անկախության, ընդհուպ մինչև պանթուրքիզմի հարցերի վերաբերյալ: Նախ ցուցապատատները պարզապես զրոյություններ էին, տեքստեր, հաճախ ոչ միայն պարզապես նախադասություններ, այլև





↑ Շարժման պատատները 2018 թվականի «Ձայնադրբյուր. շվեյցարական և հայկական խաղախմբային պատկերասրահների (հավա)հաթկերիկ կողմերը» ցուցահանդեսում

մտածված բառախաղ պարունակող արտահայտություններ: Ավելի ուշ ստեղծվեց նաև պատկերների մի ամբողջ փունջ, որը սակայն աչքի էր ընկնում ոչ պրոֆեսիոնալ մոտեցմամբ և խորհրդային պլակատի մեծ ազդեցությամբ: Շուտով առաջ եկավ ազատ նկարիչների մի խումբ, որ հրապարակ բերեց ցուցապատատների նոր մշակույթ: Նրանցից էին Մկրտիչ Մաթևոսյանը, Գրիգոր Խաչատրյանը, Նորայր Այվազյանը, Ռուբեն Առնոլդյանը և Արտակ Բաղդասարյանը: Նկարիչները հավաքվում էին Սվերդլով փողոցի շենքերից մեկում գտնվող արվեստանոցում, ինչպես իրենք էին կատակում շտաբում, քննարկում, վիճաբանում ու ստեղծագործում: Սա հենց այն ոռո լսող, եռացրած ջինս հագնող, երկար մազ-մորուք պահող ու հակասովետական գրականություն կարդացող երիտասարդությունն էր, որ պիտի դուրս գար պայքարի իր ձևով, իր դաշտում:

→ Նորայր Աշխատանքի պատրաստ

Ըմբոստ նկարիչներն առաջին պաստառները փորձել էին ցուցադրել Նկարիչների միությունում, բայց այնտեղից չարտոնավորված հեղինակներին դուրս էին արել, իսկ աշխատանքներից մեկը նույնիսկ պատռվել էր Միության աշխատողների մեկի ձեռքով: Ի պատասխան որոշվեց պաստառները ցուցադրել միանգամից Թատերական հրապարակում, առանց միջնորդների: Հրապարակի շրջակայքում եղած տաղավարների վրա էլ հենց փակցվել էին պլակատները: Սա բոլորովին նոր մոտեցում էր, փորձ թե՛ քաղաքական և թե՛ մշակութային շատ լուրջ հայտ ներկայացնելու: Հրապարակում էին ապագայի անկախ Հայաստանի անկախ մտածելակերպի տեր արվեստագետները: Նրանք արձագանքում էին տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձության և դեպքերի զարգացումն ինքն էր թելադրում ամեն հաջորդ պաստառի բովանդակությունը: Երբեմն էլ պաստառներին զուգահեռ իրականացվում էին փողոցային ինստալյացիաներ ու ակցիաներ. եռագույնով փրկոչակով շապիկներ ու եռագույն կրծքանշաններ, Կրեմլի էլեմենտ պարունակող ռազմական կոշիկ, և, ի վերջո, պարզապես եռագույնը հրապարակ բերելու բավական վտանգավոր ակտ: Շուտով առաջ եկան «Կարմիր կովը կաշին չի փոխի», «Համաձայն որոշման սա սպիտակ է, համաձայն որոշման սա սև է», «Իրավական պետություն», «Փոքրիկ կարապների





↑ Հանրախփելին ու
ՀՀ համագումարին
նվիրված պաստառները

← Գրիգոր Ռաչատրյանի
պաստառը



պարը Երևանի «Կարապի լիճը» բալետից» և շատ այլ պաստառներ: Նրանց աշխատանքներն այնքան մեծ արձագանք ստացան, որ հաջորդիվ հրապարակ բերվեցին դրանցից ոգեշնչված ժողովրդի ստեղծած ցուցապաստառները: Ձևավորվեց պայքարի մի ամբողջական պատկերագրություն, որն արդեն պատկանում էր ոչ թե անհատ ստեղծագործողներին, այլ ժողովրդին և անստորագիր էր: Պաստառների վրա հայտնվեց եռագույնը, որի կիրառությունն այն ժամանակ արգելված էր և վտանգավոր: Ամենատարածված խորհրդանիշը թերևս գինվորական երկարաճիտ կոշիկն էր, որ մատնանշում էր ԽՍՀՄ ռազմական բռնապետության վերածվելը և հասարակական տարբեր ոլորտներում գինվորականության առկայությունը: Ծուցապաստառների մետամորֆոզներն այսպիսով չավարտվեցին: Դրանք հեշտությամբ հարմարվում էին իրավիճակին ու տրանսֆորմացվում: Ստեղծվեցին ծաղկեպսակ-ցուցապաստառները: Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը լի էր այդ խոսող ծաղկեպսակներով: Ավելի ուշ արդեն 1989-ին, ՀՀ առաջին համագումարի ժամանակ նոյեմբերի 4-ին, ցուցապաստառների ցուցահանդես կազմակերպվեց: Այսպես՝ ցուցապաստառները վերածվեցին բողոքի ամենակենսունակ և ամենախոսուն կրիչների, որ յուրատեսակ միջնորդներ դարձան ժողովրդի և աշխարհի միջև, որ հավասարազոր էին ամբիոնից հնչեցրած մտքին, հանրաքվեի ժամանակ քվեաթերթիկին դրված «այո»-ին:

Հասմիկ Բարխուդարյան
Էդ Թադևոսյան, Աննա Համբարձումյան,
Երևանի պալատական թանգարան



Ի՞նչ ես պետք ու թոշակ գարելի

Ի՞նչ եմ պետք ծառայող, ովքեր սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության հետ միասին կնշեն իրենց 29-ամյակը: Մյուսներից ավելի անկախ բնավորություն ունեն: Ստանդարտը փոխում եմ հրապարակում ժողովրդի հետ: Իսկ ի՞նչ եմ իրենց պատժում ծնողները՝ այն պատժական օրը ծննդատանն անկասկածաբար մասին: Որոշել եմ Հանրապետության փարեկիցների հետ:

Ես
Չափանշում

Կարծես
Բաղադրարար

Ամեն ինչ իր ժամանակին


Մայրիկը (Կարինե). 90-ականներին լվացք անելը խնդիր էր: Հղիության վերջին շրջանում մի երկու-երեք փոխանորդ սպիտակեղեն հավաքել, լցրել էի մի տեղ, որ ձեռքով լվանամ: Հարևանուհիս ամեն օր գալիս էր ու հարցնում. «Դու դեռ չե՞ս զնացել հիվանդանոց»: Ես էլ պատասխանում էի՝ հենց լվացքս անեմ, վերջացնեմ, կգնամ: Մի օր եկավ, տեսավ լվացել եմ, ժալել դրել, մնում է փոխելը. հարևանուհուս ասացի՝ քանի որ գործս վերջացրել եմ, արդեն կարող եմ գնալ ծննդաբերելու: Ասածիս հետ համընկավ. հենց այդ գիշեր էլ ցավերս բռնեց, գնացի՞նք «Երեբունի» հիվանդանոց: Գիշերվա 4-ն էր, երեխան շտապում էր, համարյա լիֆտի մեջ էր ծնվում: Շատ արագ ու հեշտ անցավ ծննդաբերությունը, ժամը 5-ի կողմերը ծավալեց:

Ասացին, որ այդ օրվա ծննդաբերածներին պարգևատրում են տալու, իբր ամենքին 100-ական դրվար: Ինձ չհասավ, իհարկե: Դեռ սպասում եմ (հեղ. – ծիծաղում է), որոշ մարդկանց ոնց որ տվել էին գումարը:

«Այո»-ն՝ ծննդատանից

Մայրիկը. Առանձնապես այդ օրվա վրա չեի ֆիքսվել, բայց դե ցանկալի էր՝ նման հիշարժան օր ծնվել երեխա: Հիվանդանոցում եկան, շնորհավորեցին մեզ. չեմ հիշում կոնկրետ ովքեր էին, այսպես ասած, իշխանավորներից էին: Այդ օրը հենց քվեարկության օրն էր, ծննդատուն տուփ բերեցին, այդտեղ էլ քվեարկեցինք ու թերթիկը գցեցինք տուփի մեջ: Իհարկե, մինչ այդ էլ էի պատրաստվում գնալ հանրաքվեի. մեր ընտանիքը շատ ակտիվ մասնակցում է քաղաքական բոլոր իրադարձություններին, շատ պարտաճանաչ ենք: Չգիտեի, որ ծննդատանը քվեարկելու հնարավորություն կունենանք. հաճելի անակնկալ էր:

Այդ օրվանից ամեն ինչ շատ մանրամասն չեմ հիշում: Հիշում եմ միայն, որ ուրախ էի, որ վերջապես այդ փորից ազատվեցի ու ամեն ինչ հետևում մնաց: Իմիջիպալոց, ձեզ ասեմ, որ աղջիկս բնույթով անկախության նման է, մանկուց էլ շատ անկախ է՝ ծնված օրվան համահունչ: Ինքն իր հոգը հոգում է, տան բյուջեի վրա հեշ չի ծանրացել, ընդհակառակը, ինքն է տուն բերում:



ԽՄԵՆՔ ՀԱՆՐԱԱՎԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՅՐ

Աղջիկը (Մարե). Այդ օրը միշտ առանձնահատուկ է: Քույրիկիս ծնունդը, օրինակ, օգոստոսի 16-ին է, նրա ծնունդն էլ ենք միշտ նշում, բայց ավելի շատ ընտանիքով ենք նշում: Իսկ իմ ծնունդը սաղովի, ազգովի ենք նշում: Ընդհանուր տոն է բոլորի համար, իսկ ինձ համար կրկնակի տոն է: Քանի որ այդ օրը դպրոց չկա ու չենք աշխատում, դա նույնպես դրական հետք է ունենում:

Ես սիրում եմ իմ ծնունդը նշել, սիրում եմ, երբ ուշադրությունն ինձ վրա է, սիրում եմ, որ այդ օրը շրջապատված եմ հարազատ մարդկանցով: Միայն չեմ սիրում, որ առաջինը խմում են երկրի անկախության կենացը, իսկ իմը՝ երկրորդը: Դա հայրիկիս մշտական ձեռագիրն է. նա շատ հայրենասեր է:

Մի անգամ է եղել, որ Հանրապետության հրապարակում նշեմ ծնունդս, բայց քանի որ ամբողջալիմ տեղեր շատ չեմ սիրում, կլաուստրաֆոբիաս բռնեց ու այլևս քաղաքում չնշեցի: Դժվար էլի հրապարակում նշեմ, բայց հրավառությունները միշտ նայում եմ:

Մայրիկը. Մարեն 1-ին կամ 2-րդ դասարան էր: Բնականաբար 90-ականներին ոչ բոլորս էինք կարողանում ճոխ ապրել, մի հատ սեղան էինք զգում, այն էլ բարեկամների համար: Այդ անգամ ես Մարեին հատուկ զգուշացրել էի՝ ծնունդը միայն բարեկամներով ենք նշելու, ինքն էլ համաձայնվել էր: Մի ժամ հետո դուռը զանգեցին ու հայաթի բոլոր երեխաները, մոտ 20 հոգի, շարվեշարան եկան Մարեի ծնունդին. նա բոլորին հրավիրել էր: Ինչ ունեի-չունեի հանեցի դրեցի սեղանին, ուտե-լիքը կերան, տորթը կերան ու գնացին: Երեկոյան բարեկամները եկան, ստիպված մնացորդներով յուրա գնացին:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆՔԻՔ, ԱՆՎԱՅՐ, ԱՆԿԱՅԻ

Աղջիկը. Դեռ փոքրուց սիրում էի ամեն ինչ ինքնուրույն անել: Չորս-հինգ տարեկան էի, արդեն մենակ էի իջնում բակ խաղալու, չէի սիրում, երբ ինչ-որ մեկն ինձ ուղղորդում էր, ասում՝ ինչ անել: Հիմա էլ եմ այդպիսին, ու դա արտահայտվում է ամեն ինչում:

Այսքան ժամանակ միայն մի մարդու եմ հանդիպել, որ նույն օրն է ծնվել՝ ընկերուհուս քույրիկն է: Ինքն էլ է տենց անկախ ու գծավարի աղջիկ՝ ինձ նման: Կարծում եմ՝ այդ օրն իր ազդեցությունն ունենում է: Փոխկապված է, ազատությունն իմ մեջ ինչ-որ չափով կար, բայց երբ ամեն տարի լսում եմ՝ «Երկրի նման ազատ ես», «Երկրի նման անկախ ես»՝ արտահայտությունները, իր նստվածքը թողնում է:

Ի դեպ, անձնագիրս պետությունն է նվիրել: Սեպտեմբերի 21-ի նախօրեին եկան դպրոցից ինձ հանեցին և ուղարկեցին ՕՎԻԲ: Ես նախատեսել էի՝ կես տարի հետո անձնագիր հանել, դրա համար դեռ ստորագրություն չունեի: Այդ պահին անհասկանալի ինչ-որ խզբզանք արեցի, որն էլ մինչև հիմա մնացել է վրաս: Սեպտեմբերի 21-ին պաշտոնական արարողություն եղավ անձնագրայինում, կարծեմ թաղապետն էր ներկա, նա հանձնեց անձնագիրս:

ՄԻՐ ԵՍ ԻՆՉԱՎԵՐ ՎԵՐ ԿԵՆԱՄ ՉԵՄ

Մայրիկը. 1991-ի սեպտեմբերին դեռ լույս ու հույս կար, որ ամեն ինչ լավ է լինելու: Մարեի ծնվելուց հետո Հայաստանում սկսվեցին ծանր օրերը. նոյեմբերից արդեն լույս չունեինք, մինչդեռ պետք էր կաթ տաքացնել, տակաշորերը լվանալ, չորացնել, արդուկել...

Չնայած տարբերակ ունեցել ենք երկրից հեռանալու: Ամուսինս ծրագրավորող է, Կանադայից աշխատանքի հրավեր էին ուղարկել, բայց մենք, իհարկե, չենք գնացել:

Աղջիկը. Հայրիկս շատ հայրենասեր է: Որ փոքր էի, չէի հասկանում՝ եթե կա հնարավորություն ավելի լավ կյանք ունենալու, ինչպես կարելի է բաց թողնել:

Հիմա ինքս էլ ունեմ Հայաստանից գնալու հնարավորություն, բայց ցանկություն չկա: Տարիների ընթացքում սկսում ես գնահատել երկրի առավելությունները. ճիշտ է՝ շատ բաներ կան, որ կուզեմ փոխվի Հայաստանում, բայց միանշանակ տեսնում եմ երկրի առաջխաղացումը, պոտենցիալը, ու հասկանում եմ՝ Հայաստանից լավ տեղ ինձ համար չկա:



Սոնա Մկրտչյան

Մայրիկս չի կարողացել մասնակցել հանրաքվեին՝ ծննդատանն էր, բայց հայրիկս և մյուս հարազատներս իրենց ներդրումն ունեցել են այդ օրվան: Երբ ծնվեցի, հայրս մորս համար անակնկալ էր պատրաստել. ծննդատան պատուհանից դուրս նայելիս մայրս նրա ձեռքին պաստառ է տեսել, որի վրա գրված էր՝ «Անկախ Սոնան ծնվեց»:

Ծննդանս օրվա առանձնահատկությամբ պայմանավորված ինչ ինձ հիշում եմ, միշտ հպարտության զգացողություն եմ ունեցել: Դա կարևորվեց նաև առաջին անձնագրիս ստանալով, որը ինձ հանձնեցին հանդիսավոր պայմաններում Կառավարության շենքի բակում:

Օրվա խորհուրդն անդրադարձել է նաև բնավորությանս վրա՝ տեսակով շատ անկախ եմ: Շատ եմ սիրում ծննդանս օրը և երկրիս համար դրա նշանակությունը: Հաճելի է, երբ պետության անկախության հետ միաժամանակ ես մեծանում, նույն տարիքին ես:

Երբ ամբողջ երկրում տոն է, իհարկե, փոքր-ինչ խնդիր է լինում ծննդանս օրն անհատապես նշել, քանի որ այդ օրն ամբողջ հանրապետությունն է տոնում, բայց ոչ պակաս հետաքրքիր: Ի դեպ, մինչև 12 տարեկանս պարային համույթով ինքս միշտ մասնակցել եմ տոնական այդ համերգներին: Հետագայում արդեն ծննդանս օրը նշելու համար Անկախության օրվանից մեկ ամիս առաջ նախապես նշելու տեղ էի ամրագրում: Անկախ տարեթվից, շատ տարաբնույթ եմ նշել օրս, միշտ հետաքրքիր ու գունեղ:

Իսկ ընդհանրապես, անկախություն բառն ինձ համար ուժ ունի. կարծում եմ՝ ցանկացած արտաբերած բառ օրում հենց էնպես չի սավառնում, կաչում է իր նշանակետին: Ինձ համար անկախությունն ինքնուրույնություն է, վստահություն, ազատություն, առանց որոնց ոչ մի էական բարձունքի կամ ձեռքբերման չես հասնի:



Հուսիսե Նոսրիսանջաւ

Սահմանամերձ Սարիգյուղում ենք ապրել, որտեղ ծննդատունը չկա, տեղի կանայք ծննդաբերում էին կամ հարևան Սևքարի ծննդատանը, կամ Իջևանում: Մայրիկս արդեն երկրորդ բալիկին էր սպասում, և որոշում է այս անգամ Սևքարում ծննդաբերել, բայց հասնում են ծննդատուն, պարզվում է՝ բժիշկը գնացել է մասնակցելու հանրաքվեին ու ասել՝ եթե ծնունդ լինի, ուղարկեն Իջևան: Այսպես ես ծնվում եմ Իջևանում: Հարազատներն ու հարևանները ծնողներիս խորհուրդ են տվել ինձ Ազատուհի անվանել, բայց նրանք որոշել են չփոխել նախօրոք ընտրված անունը: Մայրս միշտ ափսոսում է, որ ծննդյանս օրը չի կարողացել մասնակցել հանրաքվեին և միանգամից ուղղում ինքն իրեն՝ իսկ ինչո՞ւ ափսոսալ, չէ՞ որ հայրենիքին լավագույն նվերն էր իմ ծնունդը: Ես ինքս ինձ Աստծո ընտրյալ եմ համարում. ծննդատնից դուրս գրելուց հետո (5-6 օրական եմ եղել) գյուղ գնալու ճանապարհին մեր մեքենային է բախվում մեկ այլ մեքենա, բայց հայրիկիս արագ կողմնորոշվելու շնորհիվ բոլորս փրկվում ենք: Ճակատագրի հեզանքով, սակայն, 16 տարեկան չկայի՝ հայրս մահացավ ավտովթարից...

Ինչքան մեծանում եմ, ծննդյանս օրվա նշանակալի լինելն ավելի տպավորիչ է դառնում: Յուզնիսկ սկսել եմ պատկերացնել, որ կգա ժամանակ, երբ ես չեմ լինի, բայց անկախ Հայաստանը միշտ կլինի: Այդ ամենին նպաստելու համար իմ փոքրիկ լուման կլինի այն, որ ինչ անեմ, հնարավորինս լավ անեմ:

Այդ օրը տանը նստել չեմ սիրում. ինչ ինձ գիտեմ՝ միշտ մի միջոցառման մասնակցել եմ: Հիմա էլ երեխաներիս հետ եմ դուրս գալիս՝ նրանք բացատրելով, որ սա ազգային տոն է, կարևոր օր: Անձամբ ինձ համար անկախությունն ազատության և ինքնուրույնության բազմապատկումն է, գերադրական աստիճանը: Անկախ լինել, նշանակում է միշտ լինել այդպիսին:



Եկելի Չեմքոտայա

Հենց ծննդյանս օրը հայրիկս մեզ ծննդատնից տուն է տարել. ճանապարհին մեզ բոլորիս հորս հորաքույրն է դիմավորել, որն Անկախության առթիվ հենց գյուղի կենտրոնում մատաղի միս էր եփում: Այդ օրը հարազատներս 7 զատ են մատաղ արել, եփել հենց գյուղի կենտրոնում ու բաժանել մարդկանց: Ասում են՝ շատ տոնական եռուզեռ էր, մարդիկ մեծ ոգևորվածությամբ էին քվեարկում անկախանալու համար...

Մերոնք անունս ընտրել են հատուկ գրքից, այդ օրվա շատ տարածված անուններից խուսափելու համար: Չնայած դրան պապիկս ինձ գրեթե միշտ Անկախուհի էր անվանում:

Այս օրը ծնվելն ինձ համար տարբերվող է, ինչու ոչ, պարտավորեցնող, ոգեշնչող, իհարկե հաճելի, քանի որ ուշադրությունը մի փոքր ավելին է: Կարծում եմ՝ այդ օրը ստիպում է ավագ սերնդին ցույց տալ, որ անկախության սերունդն ավելի լավն է դարձնելու Անկախ Հայաստանը:

Ծննդյանս օրերից հատկապես հիշարժան էր 20-ամյակս. հատուկ միջոցառում էր, որտեղ հնարավորություն ունեցա շփվելու Արաքս և Տիգրան Մանուկյանների հետ, միջոցառման ընթացքում լինելու Նիկոլայ Ծատուրյանի «գործընկերը»:


Մեկ-մեկ կատակում են, թե ծննդյանս օրը Հանրապետության հրապարակում հատուկ համերգ են կազմակերպել և հրավիրում են բոլորին մասնակցելու:

Ինձ համար հատկապես կարևոր է հոգեպես լինել անկախ, անկախ ընտրության, տեղաշարժի հարցում, նաև սեփական կարծիքն արտահայտելու: Պետության անկախության բացակայության դեպքում վերոնշյալ բոլոր կետերը կորցնում են իմաստը, հետևաբար ամեն զնով պետք է պահպանել երկրի անկախությունը:



Արժեք Խաչոյան

Սեպտեմբերի 21-ի առավոտյան եմ ծնվել, և մայրս հանրաքվեին չի մասնակցել:
 Ծնողներին խոսքով՝ այդ օրվա տղա նորածիններին դրամական պարգև էին տալիս, բայց աղջիկ
 ծնվեց: Նրանք ուզում էին անունս օրվան համահունչ՝ Ազատուհի դնել, բայց հետո մտափոխվեցին:
 Տեսնում ես, որ այդ օրվա համար չորսբյուրը պատրաստություն են տեսնում, բեմ զարդարում,
 համերգներ կազմակերպում: Չնայած այդ ամենը հենց ինձ համար չէ, այլ տոնի առթիվ է, բայց
 միևնույն է՝ ուրախ առիթ է, նաև այն, որ այդ օրը բոլորը ժպտում են: Ինքս ծննդյանս օրերը սովորաբար
 հարազատներիս հետ եմ անցկացնում կամ էլ աշխատանքի վայրում՝ Երևանի կոնյակի գործարանում եմ
 աշխատում, և դա խաղողի մթերման շրջանն է:
 Ծննդյանս օրվա հետ կապված ունեմ նաև երկու գեղեցիկ հիշողություններ: Ամուսինս մի տարի
 ոսկե մատանի նվիրեց և ամուսնության առաջարկ արեց: Եվ դրա առաջին տարին մեր աշխատանքային
 ավտոբուսի մեջ մեծ փափուկ խաղալիք էր բերել և անակնկալ մատուցել:



Կարինե Մարգարյան

Բերդում եմ ծնվել, ծննդյանս օրը մայրիկս շտապում էր Երևան՝ մասնակցելու հանրաքվեին, բայց, երևի, ես ուզում էի հենց այդ նշանակալի օրը ծնվել՝ մեր Հանրապետության օրը. արդյունքում մայրս ճանապարհից հետ վերադարձավ: Նա, իհարկե, մասնակցեց հանրաքվեին և իր «Այո»-ն ասաց ծննդատանը: Պատմում է՝ մայրանալը և անկախ հայրենքի ունենալն իր համար կրկնակի ուրախություն էր:

Սովորաբար ծննդյանս օրը նշում եմ հարազատներիս և ընկերներիս հետ՝ ուրախ միջավայրում: Շատ հաճելի է, որ իմ օրը տոն է բոլոր հայրենակիցներիս համար: Խնջույքիցս հետո հաճախակի մասնակցում եմ Հանրապետության հրապարակում կազմակերպված համերգներին և այդ տոնական տրամադրությունը նույնպես փոխանցվում է ինձ:

Անկախ Հայաստանի Հանրապետության հետ ծնվելն ինձ համար և՛ մեծ պատիվ է, և՛ հպարտություն, և՛ մեծ պարտավորություն: Հայրենիքիս հարատև անկախությունն եմ մաղթում, ուզում եմ, որ բազում սերունդներ վայելեն անկախության բերկրանքը: Ինձ համար ուղեցույց են Գարեգին Նժդեհի այս փառավոր խոսքերը՝

Անկախ Հայրենիք ունենալն իրավունքից զատ նաև Պարտականություն է, Ազգի ուրույն հանձարն անկաշկանդ աճում և ստեղծագործում է միայն բացարձակ անկախության մեջ...



Իսահակ Շախմուրջյան

Մայրս իմ պատճառով չի մասնակցել հանրաքվեին: Սկզբում տան առօրյա գործերով է եղել զբաղված, հետո էլ հանկարծ ծննդաբերական ցավեր է ունեցել: Իսկ հետո ծննդատանը պարզվել է, որ այդ օրը ծնվածների համար ինչ-որ պետական նվերներ կան նախատեսված: Բայց ինձ ճիշտ օրը գրանցելու համար հիվանդանոցում մաղա-րիչ էին ականարկել: Մայրս չէր տվել ու ինձ գրանցել էին ամսի 22-ին: Իսկ մի ուրիշի իմ փոխարեն այդ օրը. նախորդը օրը ծննդաբերածներից շատերն էլ ուզում էին իրենց օրը դարձնեն 21: Բայց ամբողջ կյանքս, միևնույն է, իրական օրն ենք նշել տարեդարձս՝ սեպտեմբերի 21-ին:

Մինչ ամուսնանալս գրեթե միշտ ծնունդս նշելու էի զնում Հանրապետության հրա-պարակ, հիմա արդեն ընտանիքիս հետ տանը: Ի վերջո, ես կարծում եմ, որ ոչ թե ծնված օրն է արժեք կամ կարևորություն տալիս մարդուն, այլ մարդն ինքն է արժևո-րում իր ծննդյան օրը: Իսկ ազատությունն Աստծուց մարդուն տրված ամենամեծ պարգևն է: Լավ է, որ մեր պետությունն էլ ունի Ազատություն:

Առասպել սկզբի մասին

1980-ականների վերջին Լևոն Աբրահամյանը բողոքի ցույցերի մշտական մասնակիցներից էր: Ղարաբաղյան շարժումը հեղափոխում էր նրան ոչ միայն որպես խաղախաչու, այլև որպես ազգագրագետի: Նա հեղինակում էր երկրի և ազգի հեղափոխության ունեցող իրադարձություններին, ուսումնասիրում և վերլուծում էր մեկուսացվածությունը: Մարիներ անց գիտնականը մտորում է պատճառների ու հետևանքների մասին:



↑ Լևոն Աբրահամյանը



Ազգի ճակատորմը

Ազգի առանձնահատկությունների մասին դատելու համար նախ և առաջ պետք է հստակ սահմանել, թե ինչ է դա առհասարակ և մասնավորապես: Շատ հետազոտողներ գտնում են, որ ազգերն ի հայտ են եկել համեմատաբար վերջերս: Օրինակ՝ Բենեդիկտ Անդերսոնը դրանց սկիզբը կապում է 15-րդ դարում տպագրության գյուտի հետ: Մեծացավ գրքերի տպաքանակը, սկսեցին թերթեր հրատարակվել, այսինքն՝ հայտնվեց ընթերցողների լայն շրջանակներին տեղեկություն փոխանցելու միջոց: Մարդիկ, ովքեր միմյանց հետ ազգակցական կապ չունեին, սկսեցին կիսել միևնույն հայացքները, այսինքն, ըստ էության, վերածվել ազգի: Գուցե սա ճիշտ է, եթե խոսքը վերաբերում է Եվրոպային: Հայաստանում փոքր-ինչ այլ է: Մեր ազգի ձևավորման ժամանակաշրջանը 4-5-րդ դարերն են: 301 թվականին մենք ընդունեցինք քրիստոնեությունը

որպես պետական կրոն և ողջ ժողովրդին դարձրինք միևնույն կրոնի դավանող: Ընդամենը մեկ ու կես դար անց կրոնն «ազգայնացվեց», երբ մենք հրաժարվեցինք ընդունել Քաղկեդոնական եկեղեցու կանոնները և առանձնացանք Տիեզերական եկեղեցուց: 405 թվականին ստեղծվեց այբուբենը և բոլոր բարբառներից ընտրվեց մեկը, որով սկսեցին գրվել գրքեր և ընթերցվել քարոզներ: (Ի դեպ, քարոզը, ինչպես և թերթերը հզոր միավորող գործիք են: Օրինակ՝ Ավարայրի ճակատամարտի հերոսներին հայկական եկեղեցին սրբադասել էր դեռևս 5-րդ դարում: Սա նշանակում է, որ այդ ժամանակից ի վեր ողջ եկեղեցական համայնքը տարին գոնե մեկ անգամ լսում էր պատմություններ իր ազգի մեծագույն հերոսների մասին): Միևնույն ժամանակ Մովսես Խորենացին գրել է «Հայոց պատմությունը», որն օրինակ

հանդիսացավ հաջորդ սերունդների տարեգիրների համար: Այսինքն՝ ստեղծվեց պատմության առաջին դասագիրքը: Եվ եթե ժամանակին այս հիմնային աշխատության ստեղծման ժամանակաշրջանը կասկածի տակ էր առնվում, ապա այժմ արդեն կարելի է ապացուցված համարել, որ այն ստեղծվել է 5-րդ դարում: Այդ բոլորն ըստ էության պետական բարեփոխումներ են, որ հանգեցրել են հայ ազգի ձևավորմանը:

Ինչպես կանխանես նախը

Մենք՝ հայերս, չենք սիրում բառեր փոխառել, նախընտրում ենք թարգմանել: Դա մի հզոր ավանդույթ է, որի հիմքերը դրվել են 5-րդ դարում՝ թարգմանիչների ժամանակաշրջանում: Եղել են և բացառություններ: Եվ դրանցից մեկը «ազգ» բառն է: Բանն այն է, որ այս տերմինը ժամանակակից ընկալմամբ առաջ է եկել համեմատաբար վերջերս՝ 19-րդ դարում: Լատինական



բառարմատը ներթափանցել է գրեթե բոլոր լեզուներ, բայց ոչ հայերեն: Մենք այն չենք փոխառել, բայց և չենք էլ թարգմանել: Հայերենում, պարզվում է, արդեն կար «ազգ» բառը, որում ամփոփված են այդ հասկացության հիմքում եղած բոլոր իմաստները: Պարզապես այն ձեռք էր բերել մի նոր մեկնաբանություն: Ամենայն հավանականությամբ դա ճիշտ որոշում էր, սակայն հաշվի չէր առնվել մեկ հանգամանք. այդ բառի գլխավոր իմաստներից մեկն «ընտանիքն» է, տոհմը միշտ դոմինանտ էր մնում, այդ թվում և այն պատճառով, որ այդ արմատով ձևավորվել են բազմաթիվ այլ հաճախ օգտագործվող բառեր՝ «ազգանուն», «ազգական»: «Ազգ» բառի մեջ հղում կա տոհմին և բառն այդ նշանակությունից զրկելն անհնար է:

Արդյունքում բոլոր ճանապարհները տանում են դեպի ընտանիք և մեր ընկալմամբ ազգը ստանում է ցեղային հարաբերությունների նրբերանգներ: Սակայն դա օբյեկտիվորեն էլ այդպես է: Հայաստանն այսօր հազվագյուտ մոնոէթնիկ պետություններից մեկն է և դա ըստ էության ենթադրում է, որ մենք բոլորս միմյանց ազգականներն ենք: Չգիտեմ թե ինչու, մենք ավելի հաճախ ենք օգտագործում «ժողովուրդ» բառը: Ի տարբերություն «ազգ» հասկացության կոնկրետ նշանակության ժողովուրդը որպես կատեգորիա բավական հեղհեղուկ է: Այդ բառին ղեկավարության հրահանգով փորձեցին նշանակություն տալ խորհրդային գիտնականները: Պետք էր ձևակերպում գտնել նոր պատմական հանրույթի՝ Խորհրդային Միության բնակիչների համար: Եվ հենց այն բանի համար, որ ազգն ուներ հստակ բացատրություն, որն այնքան էլ չէր համապատասխանում այդ հանրույթի բնույթին, անվանեցին «խորհրդային ժողովուրդ»: Նույնը եղավ և Միացյալ Նահանգներում՝ «հալոցարանի» կերպարի հետ, որտեղ կարող է հայտնվել յուրաքանչյուրը և դուրս գալ այդտեղից միայն որպես ամերիկացի: Ժողովուրդը փոքր-ինչ նման է անմշակ հումքի, այն կարող է ձևավորել ազգ կամ էթնոս, կամ էլ ցանկացած այլ բան: Շատ հարմար բառ է, քանի որ այն միշտ կարելի է օգտագործել, երբ չես ցանկանում որոշակիություն: Բայց ոչ ԽՍՀՄ-ի դեպքում և ոչ էլ ԱՄՆ-ի դեպքում այդպիսի ամուր կազմավորում, ինչպիսին ազգն է, չի ստացվել. Խորհրդային Միությունը փլուզվեց, իսկ հալոցարանը, պարզվեց, ընդամենը աղցանի թաս էր:

Առանց սահմանների

Ազգը չի կարող ձևավորվել պետականության բացակայության պայմաններում: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այն շարունակում է լինել, երբ վերանում է պետականությունը:

ԱԶԳԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԶԵՎԱՎՈՐՎԵԼ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԵՐՈՒՄ: ՍԱԿԱՅՆ ԱՅՆ ՇԱՐՈՒՄԱԿՈՒՄ Է ԼԻՆԵԼ, ԵՐԲ ՎԵՐԱՆՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հայերը դրա վառ ապացույցն են: Դարեր շարունակ մենք կորցրել, ձեռք ենք բերել և կրկին կորցրել ենք մեր պետականությունը, բայց շարունակել ենք ապրել իբրև ազգ: Մարդկանց կապում են ոչ միայն սահմանները, այլև բնակավայրը, պատմությունը, ծագումը՝ միավորող հատկանիշների մի ամբողջ կծիկ: Ոչ բարենպաստ պայմաններում այդ կծիկի որոշ թելեր կարող են կտրվել, բայց երբեմն բավական է միայն մեկը, որպեսզի էթնիկական խումբը պահպանի իր կենսունակությունը և անհրաժեշտության դեպքում վերականգնի մյուսները:

Մրանսապեղ

Նախորդ դարաշրջանի սկզբին Հայաստանը բաժանված էր Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: դրանից բխող բոլոր հետևանքներով հանդերձ: Սակայն ազգը պահպանել է որոշակի թելեր, տարբեր վայրերում տարբեր, որոնք օգնեցին ժամանակի ընթացքում վերականգնել կտրված կապերը: Այդ հարցում մեծ դեր ունեցավ Ցեղասպանությունը: Առհասարակ ճնշումը, արտաքին ագրեսիան ուժեղացույց համախմբող գործոններ են, որ կարող են ձևավորել տրանսազգ, այսինքն էթնիկ խումբ, որին ինքնության պահպանման համար ամենևին էլ պետք չեն սահմաններ: Հայերի համար այդպիսի գործոն էր ցեղասպանությունը: Այն պատճառ հանդիսացավ աշխարհի ամենամեծ տրանսազգերից մեկի՝ հայկական սփյուռքի ձևավորման համար: Ցեղասպանությունից հետո ձևավորված սփյուռքն ունի փոքր-ինչ այլ ինքնություն, քան Արևելյան Հայաստանից ներգաղթածները: Մի անգամ հայ կոլեզաներիցս մեկը պատմեց,

որ Սիրիայում հայկական միջավայրում իրեն ասել են. «Արևելահայերը տարբերվում են, նրանք չեն անցել Դեր-Ջորի ճանապարհը»: Եվ ինչ-որ առումով սա ճիշտ է: Արևելահայերի համար ցեղասպանությունը սարսափելի և ողբերգական պատմական իրադարձություն է, իսկ արևմտահայերի համար դա հենց իրենց պատմության սկիզբն է: «Առասպել սկզբի մասին», այսպես գիտության մեջ անվանում են այն հաճախ դրամատիկ իրադարձությունը, որը մեկնարկային կետ է հանդիսանում մարդկային որոշակի խմբի համար, լինի դա նախնադարյան ցեղ, թե ժամանակակից ազգ: Եվ «առասպել» բառն այստեղ նշանակում է ոչ թե հորինվածք կամ կերպար, այլ նարատիվ սկզբի մասին: Այսպես թե այնպես, 1915-ի իրադարձությունները մեծ դեր են խաղացել բոլոր հայերի ինքնագիտակցության կազմավորման մեջ և պատահական չէ, որ շատ շուտով հիմնադրվեց Առաջին հանրապետությունը: Այն իհարկե երկար չգոյատևեց և Հայաստանն ընդգրկվեց ԽՍՀՄ-ի կազմում:

Ցարկ դեպի դարի խորիք

Այժմ մենք շատ ենք սիրում հրաժարվել այն ամենից, ինչ կար Խորհրդային Միությունում: Բայց, կարծում եմ, խնդիր ոչ թե ԽՍՀՄ-ի մեջ է, այլ պատմության հանդեպ մեր վերաբերմունքի մեջ առհասարակ: Տեսեք, Առաջին հանրապետության անկումից հետո մենք հրաժարվեցինք նրա զինանշանից և Երկրորդի համար ստեղծեցինք բոլորովին նորը: Երրորդ հանրապետությունը ճիշտ նույն կերպ վարվեց. դեն նետեց խորհրդային զինանշանն ու որոշ փոփոխություններ մտցրեց առաջինում: Սակայն չէ՞ որ շարունակվող պատմության արտացոլումը ոչ



միայն հերալդիկայի օրենք է, բայց և կարևոր նախապայման ավանդույթի շարունակականությունն ապահովելու համար: Դրանում է մեր վերաբերմունքն անցյալի հանդեպ. մենք չափազանց հին ազգ ենք, մենք հեշտությամբ ենք ցատկ կատարում դեպի դարերի խորքը՝ միանգամայն անտեսելով ոչ վաղ անցյալը: Բայց հանուն արդարության պետք է ասել, որ խորհրդային իշխանության 70 տարիներն ընդհանուր առմամբ բարենպաստ ժամանակահատված էր ազգային ինքնագիտակցության կտրված կապերի վերականգնման համար. բացվեցին հայկական դպրոցներ, մեծ հանդիսավորությամբ նշվում էր էպոսի հրեյլանը, որը, իմիջիայլոց, համազգային դարձավ շնորհիվ խորհրդային նախագծի, ըստ որի ավանդույթ դարձավ նշել երեբունի-երևան տոնակատարությունը: Եվ այս շարքը կարելի է շարունակել: Հարկ է նշել, որ հենց այդ պատճառով էլ տարածված կարծիքը, թե հենց հայերն առաջինը որոշեցին դուրս գալ ԽՍՀՄ կազմից, ճիշտ չէ:

Ապահարսան՝ քնդանելան իրախունի կանոնների համապարսխան

1988-ն ըմբոստների ժամանակաշրջան էր. Մոսկվան կատարվելիքը որակել էր որպես էքստրեմիստների ձեռքի գործ և ժողովուրդը պատրաստակամորեն ընդունեց ըմբոստ լինելու մեղադրանքը: Բայց դա նաև պետականամետների ժամանակաշրջան էր: Դարաբաղյան շարժումը սկսվեց Ադրբեյջանական ԽՍՀՄ կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու մասին Ստեփանակերտի շրջանային խորհրդի որոշումով: Հայաստանի գերագույն խորհուրդը ևս ընդունեց փաստաթուղթ Դարաբաղը միացնելու մասին, սակայն առաջին ցույցից միայն չորս ամիս անց: Ըստ էության, անկախության համար պայքարը սկսվել է հիասթափությունից, երբ Մոսկվան հրաժարվեց Դարաբաղը ճանաչել Հայաստանի կազմում: Միայն այդ ժամանակ հայտարարվեց, որ այլընտրանք չկա, պետք է

ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԺՈՒՄԻՑ ԺԱՌԱՆԳԵԼ Է ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԻՔ. ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ ԵՎ ՑՈՒՅՑԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄՇԱԿՈՒՅԹ

դիմել Սահմանադրության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին 72-րդ հոդվածին: Ի դեպ, ցույցերի ժամանակ աշխատում էին հատուկ սահմանադրական խմբեր, որոնք բացատրում էին մարդկանց իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այսօր մենք մոռանում ենք, որ Հայաստանը միակ պետությունն էր, որ որոշում էր կայացրել դուրս գալ ԽՍՀՄ կազմից սահմանադրական ճանապարհով: Դա իրական ապահարզան էր ընտանեկան իրավունքի կանոններին համապատասխան: Բայց ամենակարևորն այդ իրադարձություններում այն էր, որ 1988 թվականին Հայաստանը սեփական փորձով համոզվեց, որ անկախությունը պարզապես ռոմանտիկների երազանք չէ: Սեփական սուվերեն պետությունն ազգի նպատակներին հասնելու միակ միջոցն է:

Պարանի վրա

Երրորդ հանրապետությունը Դարաբաղյան շարժումից ժառանգել է անկախության երկու կարևորագույն գործիք. ազատ ընտրությունների ինստիտուտ և ցույցեր անցկացնելու մշակույթ: Եվ կարևորն այն է, որ դա պարզապես մակերեսորեն ուսումնասիրված տեսությունն չէր և ոչ էլ դեմոկրատիայի արտահանում Եվրոպայից, այլ ժողովրդի կողմից ապրված և յուրացված փորձառություն էր: Օպերայի հրապարակում, կարելի է ասել, ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան ազատ ընտրություններ, որոնց արդյունքում Գերագույն Խորհրդում հայտնվեցին երկու իրապես ընտրված պատգամավոր: Եվ այդ երկուսին, պետք է նկատել, որ բավա-

կան բան հաջողվեց անել՝ ապացուցելով խորհրդարանական պայքարի արդյունավետությունը: Ճիշտ է, ազատ ընտրություններն ավանդույթ դարձնել չհաջողվեց, բայց դա արդեն այլ խոսակցություն է:

Ինչ վերաբերում է 1988-ի ցույցերին՝ փողոց էին դուրս եկել մեծ թվով քաղաքացիներ: Միլիոն մարդ, դա հորինված թիվ չէ. այստեղ պաշտոնական և ոչ պաշտոնական թվերը համընկան: Մենք այսօր էլ հաջողությամբ ընդունում ենք ժողովրդավար հրապարակի այդ ժառանգությունը. անկախ Հայաստանում փողոցից խոսող ժողովուրդը բավական հաճախ երևույթ է: Բայց այդ իրադարձությունների ամենամեծ ձեռքբերումն անկասկած սուվերեն պետության ձևավորումն էր: Ես հաճախ եմ լսում այն մասին, որ այսօր դարեր անց և այսօր չարչարանքներից հետո մեզ հաջողվեց վերականգնել պետականությունը, քանի որ մենք յուրահատուկ ենք: Նույնիսկ խոսում են ազգի մեջ անկախության գենի առկայության մասին: Ըստ իս դրանք դատարկ խոսակցություններ են: Այո, քիչ պետություններ չեն փլուզվել, հզոր պետություններ, որոնք մեր երբեմնի հարևաններն են: Այո, երկրի երեսից վերացել են ազգեր, որոնք ձևավորվել են մեզ հետ միասին: Բայց խնդիրը գենի մեջ չէ: Խնդիրն ազգության ինքնության գրեթե կտրված պարանի մեջ այն գեթ միակ թելը պահպանելու ունակության մեջ է: Յուրաքանչյուր ազգ, որին դա հաջողվել է, ձգտում է անկախության և սպասում է հարմար առիթի: Մենք այն օգտագործել ենք 1991-ին, հուսով եմ, ապագայում այլ հնարավորության չենք սպասելու:


▲ Ասորինե Դապարյան

📍 Առնոտ Մարտիրոսյան, Արմենյա / Մարտին Շահբաբյան, Ռուբեն Աթաբյան, Միլիթար Ռազապպյան


Վերհիշելով անկախության ճանապարհը.

շապիկ

Նկարիչ Խորեն Մաթևոսյանը փորձում է բացատրել, թե ինչ է պատկերել տոնական թողարկման շապիկին:



Խորեն Մաթևոսյանը ծնվել է 1995 թվականին: 2017-ին ավարտել է Երևանի ճարտարապետության ու շինարարության ազգային համալսարանը: 2018-ին Արեգ Մովսիսյանի ու Անի Առաքելյանի հետ համատեղ ստեղծել է Kupikazu արտ-միավորումը: Եռյակի աշխատանքները մի անգամ ներկայացվել են համանուն ցուցահանդեսում: Խորենն այժմ դասավանդում է Թումոյում և շարունակում աշխատանքները Kupikazu-ի կազմում: Սա հեղինակի երկրորդ շապիկն է ԵՐԵՎԱՆ-ի համար. առաջինը զարդարել էր 2017 թվականի դիզայնեռական թողարկման 5 շապիկներից մեկը:



Անկախության մասին գրելն ավելի հեշտ է, քան այն պատկերելը: Խորհրդանշները շատ են, բայց ոչ մեկն էլ ամբողջական չի արտահայտում անկախության գաղափարը: Իմ ասոցիացիաներում կա շեփոր նվագողը, կան բռնկանքները երկինք պարզած հազարավոր հայեր, կա խառն օրերի Երևանն ու բարձրախոսներով հրապարակներում անկախության մասին առաջին անգամ խոսող մարդիկ: Ես ինքս անկախությունը պատկերելու համար օգտագործել եմ տիեզերքի ամենապարզ ֆիգուրը՝ գունդը: Այն երկբևեռ է՝ կարող է ճառագել լույս ու սփռել բարին, կարող է նաև փտել ու որդնել՝ տարածելով գաղջ ու մութ: ամեն ինչ կախված է նրանից՝ ում ձեռքերում կհայտնվի իմ անկախությունը, մեր անկախությունը: Գաղափարը լավագույնս արտահայտեց երեք գույն. սպիտակը՝ որպես մաքուր թուղթ, որը դրեցին մեր առջև 1991-ին, սևը՝ որպես ֆոն ու անցյալի բեռ, ինչ-որ տեղ՝ նաև դաս, ու դեղինը՝ որպես լույսի ու արևի, ջերմության ու բարության խորհրդանշ, որի նույնիսկ փոքր քանակը դրական տրամադրություն է ստեղծում:



Մեր հայրենիք, ապար անկախ

Անցյալ դարում Հայաստանի անկախության հռչակագիրը երկու անգամ է հնչել՝ 1918-ի մայիսին ու 1990-ի օգոստոսին: Պետությունը, որն արդեն իր պարտության երրորդ փասնամյակն է կերպում, ժառանգել է հայկական առաջին անկախ պետականության խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը և փնանշանը:



→ Մարտիրոս Սարյանի առաջարկած տարբերակները՝ Առաջին Հանրապետության դրոշի համար

Դրոշ

Այն ծածանվում է նախագահի նստավայրի վերևում և զորքերի տեղակայման վայրերում։ Այն բարձրացնում են ի պատիվ հաղթանակի և խոնարհում ի նշան սգի։ Այն տեղադրվում է զրավված բարձունքներին ու կախվում պատշգամբներից տոն օրերին։ Այն այտերին են նկարում երկրպագուներն ու հաղթանակից հետո ուներին զցում մարզիկները։ Առաջին անգամ պաշտոնապես հայկական եռագույնը բարձրացվել է 1918 թվականի օգոստոսի 1-ին։ Ազգային ժողովի բացման օրը դրոշակափայտին հայտնվեց կարմիր-կապույտ-դեղին պաստառը. պարադոքսալ է, բայց հանրապետությունում չի գտնվել նարնջագույն կտոր։ Անմիջապես հաջորդ օրը թերթերում լույս տեսավ կառավարական հրամանը, որը սահմանում էր բոլոր կազմակերպություններին պարտադիր եռագույն ունենալ. իսկ թե որտեղից նրանք պետք է գտնեին նարնջագույն կտորը, նախարարների կաբինետին չէր հետաքրքրում։

Գույների ընտրության վրա ազդել է բանասեր Ստեփան Մալխասյանի ճառը, որը խորհրդարանականներին պատմել է հայկական դրոշների պատմությունը։ Երիտասարդ պետությունը կանգ առավ հայկական վերջին պետականության՝ Կիլիկիան թագավորության խորհրդանշի վրա։ Կարմիր, կապույտ և դեղին. զինվորական միավորումների գույներն էին, որոնք մարտական ձևավորման ժամանակ միաձուլվում էին։ Ճիշտ է՝ դեղինը որոշեցին փոխարինել, քանի որ կարմիրի, կապույտի և նարնջագույնի համադրումն աչքին առավել հաճելի համարեցին։ Բացի այդ, դա բացառում էր Դոնի փառավոր զորքի դրոշի պատճենումը, ինչպես նշվում է Մարտիրոս Սարյանի նամակում։ Նա առաջարկեց երեք ջրաներկային նկար՝ հայկական դրոշի տարբերակները։ Նրանց շարքում կար նաև «ծիածանային» դրոշը։ Այդ նամակում վարպետը «համարձակվել էր մի քանի ցուցումներ տալ. եռագույն


դրոշներ շատ կան... մեզ՝ որպես արևելյան ազգի, կսազի բազմագույն դրոշը... առաջարկում եմ մեր տառապած ու սիրելի հայրենիքի վրայով ծիածան անցկացնել»։ Սարյանն առաջինը չէր, որ դրոշի վրա աշխատելիս անդրադարձել է այդ գաղափարին։ 1885-ին Փարիզի հայ ուսանողական միության անդամները խնդրեցին Մխիթարյան միաբա-



→ 2000-2006 թվականներին լեռնագնաց Կարո Հովսասփյանը բարձրացրել է եռագույնը բոլոր մայրցամաքների ամենաբարձր գագաթների վրա



նության անդամ, բանաստեղծ ու փիլիսոփա Ղևոնդ Ալիշանին հայկական դրոշ ստեղծել. նրանք պետք է մասնակցեին Վիկտոր Հյուգոյի հրաժեշտի արարողությանը։ Ալիշանի կարմիր-կանաչ-սպիտակ ուղղանկյունը բաղկացած էր երեք հավասարաչափ զուլերից, որոնց գույներն Արարատի բարձունքից Նոյի տեսած ծիածանն էին խորհրդանշում։ Հեղինակի երկրորդ փաստարկը՝ Ջատկի առաջին և երկրորդ կիրակիները, հայկական եկեղեցական օրացույցում նշվում են որպես Կարմիր և Կանաչ։ Առաջին Հանրապետության կարմիր-կապույտ-նարնջագույն դրոշը գոյատևեց, ինչպես և հանրապետությունը, 2,5 տարի մինչև 1920-ի նոյեմբերի 29-ը։ Իսկ 1922-ի փետրվարին Հայաստանի Խորհուրդների առաջին հավաքը հաստատեց բոլշևիկյան դրոշը՝ վառ կարմիր ֆոնի վրա ՀԽՍՀ ոսկեգույն տառերը։ Հապավումը բացվում էր Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն։ 1952-ին կարմիր գույնը բացեցին լայն հորիզոնական կապույտ զուլով, իսկ վերևի անկյունում հայտնվեցին մուրճը, մահակը և ոսկեգույնով եզրագծված կարմիր աստղը։ ԽՍՀՄ փլուզումից հետո վերադարձավ 1918-ի նմուշ եռագույնը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն հորիզոնական հավասարաչափ զուլերով պաստառը։ Ճիշտ է՝ տարաձայնություններից խուսափել չհաջողվեց. առավել զործնականները դեմ էին նարնջագույնին, որին հակացուցված է թեժ արևը։



Օրհներգ

Այն պարտադիր կատարում են պաշտոնական միջոցառումներին ու հանդիսավոր արարողությունների ժամանակ: Այն պարտադիր հնչում է նախագահի երդմնակալության ժամանակ և բոլոր հայկական դպրոցներում երկուշաբթի օրերին: Նրան օրական երկու անգամ եթեր են հատկացնում հայկական ռադիո և հեռուստաընկերությունները: Նրա բառերը կոչ են անում Հայաստանի զավակներին վերադառնալ անկախ հայրենիք և երանելի են կոչում նրանց, ովքեր պատրաստ են զոհվել հանուն սեփական ազգի ազատության. այս տողը հատկապես արդիական էր Հայաստանի Հանրապետության կայացման տարիներին: Առաջինի և երրորդի: Խորհրդային ժամանակահատվածում, որը տևել է ոչ ավել, ոչ պակաս 71 տարի, Հայաստանի օրհներգն այլ էր խաչատրյանական: Եկեղեցական երգեցողության դասական կանոններով կառուցված Արամ Խաչատրյանի երաժշտությունն օրհներգի կարգավիճակում վերականգնելու մասին հայտարարվեց զրոյականների կեսերին: 2006-ի աշնանը խորհրդարանը հայտարարեց նոր օրհներգի համար երաժշտության և տեքստի մրցույթ: 85 տարբերակներից եզրափակիչ փուլ անցան հինգը՝ Արամ Խաչատրյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, Երվանդ Երզնկյանի, Էդգար Հովհաննեսյանի և Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունները: Գաղտնի քվեարկությամբ հանձնաժողովը հաստատեց Սովետական Հայաստանի օրհներգի երաժշտությունը, բայց այդպես էլ չկարողացավ որոշել տեքստային մրցույթի հաղթողին (Խորհրդային Հայաստանի օրհներգի բառերի հեղինակ Սարմենի բախտն այս անգամ չբերեց, նրա բառերը որոշել էին անապայման փոխել): «Մեր Հայրենիքին» ձեռք չտալու սակավաթիվ կողմնակիցներից մեկը Լորիս Ջգնավորյանն էր՝ Սփյուռքում բնակվող դիրիժոր, որը 1990-ին ղեկավարել էր Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը: «Մեր Հայրենիքը» պաշտոնապես որպես օրհներգ հաստատելուց դեռ մեկ տարի առաջ նա իր

նվագախմբի բոլոր համերգները սկսում էր այս երաժշտության կատարմամբ: XX դարասկզբին հայ զինվորներն այս ստեղծագործության ներքո անառիկ բերդեր են գրավել՝ նվաճելով սեփական հայրենիքի անկախությունը, որն ազատագրվում է լոկ «շնորհիվ քաջ որդիների կամքի»: «Այդ ժամանակ «Մեր Հայրենիքն» օրհներգի կարգավիճակ չուներ, այն Միքայել Մալբանդյանի բանաստեղծության հիման վրա հայրենասիրական երգ էր, որը հեղինակը կոչում էր «Իտալացի աղջկա երգը»,– պատմում է Ազգային արխիվի նախկին տնօրեն Ամատունի Վիրաբյանը, որը վաղուց է զբաղվում հայկական հիմնի պատմության ուսումնասիրությամբ: Այն սկսվել է 1857-ին իտալական Սարբիում, երբ հերոս Ռիտցոմենտո Կարլո Պիզականեի առաջնորդությամբ 20 խիզախներ, ազատելով Պոնցա կղզու կալանավաճարում բանտարկված ապստամբներին, հարձակվեցին քաղաքի վրա: Նրանք երեք հարյուրն էին՝ երիտասարդ և ուժեղ, և բոլորն էլ մահացան իսպանական բուրբոնների զոհարարների հետ մարտերում: Դրանից անմիջապես հետո տպագրվեց Լուիջի Մերկանտինի «Սարալիի հնձվորուհին» բանաստեղծությունը. մարտերի մասին հեղինակը պատմեց քաղաքային դարպասների մոտակայքում ցորենի հասկեր հավաքող երիտասարդ աղջկա շուրթերով: «Սարալիի հնձվորուհու» ռուսերեն թարգմանությունն արվել է Գերցենի կողմից և տպագրվել «Անցյալ և խոհեր»-ի («Вспомог и дум») 37-րդ գլխում. որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ Միքայել Մալբանդյանի (1829-1866) «Իտալացի աղջկա երգը» Մերկանտինիի ստեղծագործության ազատ թարգմանությունն է, որի հետ ռուս հեղափոխականներին սատարող հայ փիլիսոփան ու հրապարակախոսը ծանոթացել է ռուսերեն տարբերակով: Վիրաբյանն այլ տեսակետի է հարում. Մալբանդյանը կարող էր բանաստեղծությունը լսել 1859-ին Լոնդոնի ճանապարհին հեղափոխական տրամադրված Իտալիայով անցնելիս, որտեղ, ի դեպ, նա հանդիպել է Գերցենին ու նրա համախոհներին:

1859-ի հունիսին Ջոդենում Մալբանդյանը գրում է «Իտալացի աղջկա երգը», որը 1861-ին Կոմս Էմանուել Լեոնանվանը տպագրում է Մոսկվայի հայկական «Հյուսիսստիայ» ամսագրում և կոստանդնուպոլսյան «Մեղրու» պարբերականում: Միքայել Մալբանդյանը գովերգում է իրենց հայրենիքի ազատության համար մարտնչել պատրաստ իտալուհիներին՝ նրանց որպես օրինակ բերելով սեփական հայրենակցուհիների համար: 1885 թվականի մարտի 15-ին՝ ուրբաթ օրը, թիֆլիսյան Արծրունի թատրոնում երգչախմբի կատարմամբ տեղի ունեցավ «Իտալացի աղջկա երգի» համաշխարհային պրեմիերան: Մալբանդյանի բանաստեղծության համար երաժշտությունը գրել էր երիտասարդ ինքնուս Խաչատուր Մարգարին (Մարգարյան)– Բրիտանիոյի Կարա-Մուրզա, որը, ինչպես և Մալբանդյանը, խուսափում էր անունն ազդարարել. երաժշտության հեղինակը նշված չէ անգամ նոտաների բնօրինակի վրա: Ի դեպ, Բարսեղ Ամասյանի անունը, որին այսօր վերագրում են հայկական օրհներգի երաժշտությունը, առաջին անգամ հայտնվում է Կոմիտաս վարդապետի աշակերտների կողմից 1919-ին Կոստանդնուպոլսում լույս տեսած ժողովածուի վրա: Թիֆլիսյան շնորհանդեսից հետո Կարա-Մուրզայի երգչախումբը շրջագայում է Կովկասում ու Ղրիմում, համերգ տալիս Կոստանդնուպոլսում. երգը հայտնի է դառնում բոլոր հայկական համայնքներում: Շուտով, առաջին բառերից ելնելով, այն սկսում են կոչել «Մեր Հայրենիք»։ Ինչն այս անվամբ է այն առաջին անգամ կատարվել Փարիզում 1916-ի ապրիլի 9-ին Սորբոնում կազմակերպված բարեգործական համերգին, որը կազմակերպվել էր Ցեղասպանությունից տուժած հայերին օգնելու նպատակով: Ասոցիացիայի նախագահ Ամատույ Ֆրանսի որոշյնի խոսքից հետո Schola Cantorum համալսարանական երգչախումբը հայտնի երգահան Վենսան դ'Էնդիի ղեկավարությամբ կատարեց «Մեր Հայրենիքը», որին 1918-ի օգոստոսի 1-ին վիճակված էր դառնալ Առաջին, իսկ 1991 թ. հուլիսի 1-ին Երրորդ Հանրապետության օրհներգը: Ճիշտ է՝ երկու անգամ էլ ժամանակավոր:

Զինանշան

Այն ոսկով է դաջված անձնագրի շապիկին և փորագրված է պետական կնիքներին: Այն ծիածանի բոլոր գույներով շողարձակում է թղթադրամների վրա: Նրանում արտացոլված է պետականությունների ու թագավորական հարստությունների շարունակականությունը: Այն դարձել է Առաջին հանրապետության երրորդ խորհրդանիշը, որը ժառանգել է Երրորդ հանրապետությունը: Այդպես է որոշել առաջին նախագահը, երբ ժյուրին չէր հավանել մրցույթին ներկայացրած և ոչ մի տարբերակ, իսկ խորհրդարանականներն էլ չէին կողմնորոշվել՝ ում տալ նախապատվությունը՝ Ալեքսանդր Թամանյանի զինանշանին, որը Կառավարությունը հաստատել է 1920-ին, թե Խորհրդային Հայաստանի համար ստեղծված Մարտիրոս Սարյանի տարբերակին: Ու թեև Լևոն Տեր-Պետրոսյանն ինքն էլ էր սարյանական զինանշանի կողմնակիցը, որոշեց. «Քանի որ երկիրը ժառանգել է Առաջին Հանրապետության դրոշմ ու օրհներգը, տրամաբանական կլինի նրա երրորդ խորհրդանիշն էլ ընդունել»: Ազգագրագետ Լևոն Աբրամյանը, որը 1990-ականներին զինանշանի նախագծումը համակարգող կառավարական հանձնախմբի խորհրդատուն էր, հիշում է՝ ինչ թեժ էին կրքերը, երբ խորհրդարանականներն անցան քննարկումներին. ոչ ոք չէր ուզում «վերադառնալ ԽՍՀՄ», բայց մեծամասնությունը գեղագիտորեն սարյանական զինանշանն էր հաճելի: Առաջարկում էին միայն հանել մուրճն ու մահակն աստղի հետ: Աբրամյանին Խորհրդային Հայաստանի զինանշանը հիշեցնում է «նատյուրմորտի տարրերով բնանկար», հրաշալի պատկեր, ինչպես և նկարչի ստեղծած բոլոր գործերը, որը բոլորովին չէր համապատասխանում զինանիշագիտության պահանջներին: «Երրորդ զինանշանը պետք է լինի նախորդների զարգացումը՝ ընդունելով հայկական պետականության հերթափոխը: Մենք կարող ենք ասել խորհրդային պետությունը մարմնավորող արժեքները, բայց իրավունք չունենք անփութորեն վերաբերվել մեր ազգի պատմությանը»,– բացատրում է Լևոնը, որն այդ տարիներին առաջարկում էր Թամանյանի զինանշանի մեջտեղում Արարատի հատվածի փոխարեն տեղադրել բիրլիական սարի սարյանական պատկերը: Այս գաղափարը խորհրդարանականների առջև բարձրաձայնելու գործը ստանձնեց Աբրամյանի ընկեր Սամվել Շահմուրադյանը՝ գրող, կառավարական խմբի անդամ: «Միացնում եմ ռադիոն ու լուսն, թե ինչպես, ներկայացնելով զինանիշագիտության օրենքները, Սամվելն



→ Խորհրդային Հայաստանի զինանշանը, հեղինակ՝ Մարտիրոս Սարյան

↘ Առաջին Հանրապետության զինանշանը, հեղինակ՝ Հակոբ Առջոյան

↓ Ռուբեն Առնոյանի տարբերակը



առաջարկում է... ավելացնել ուրարտական խորհրդանիշը՝ թևավոր առյուծ, եթե հիշողությունս չի դավաճանում,– պատմում է Լևոնը,– Այ թե ինչ սկսվեց: Պատգամավորները, իրար ընդհատելով, սկսեցին վրդովվել, որ զինանշանն առանց այդ էլ զազանանոց է հիշեցնում, մնում է միայն ևս մեկ կենդանի հավելել: Իսկական զազանանոց էին զինանշանն անվանում նաև Ազգային ժողովի ամենաառաջին գումարման պատգամավորները: Կենդանիների լոգոներ կան չորս թագավորական ընտանիքիների վահանների վրա՝ Արտաշեսյաններ (երկու հակադիր շրջված արծիվ), Արշակունիներ (երկգլխանի արծիվ), Բագրատունիներ (առյուծ) և Ռուբինյաններ (քայլող առյուծ, կամ ինչպես ընդունված է զինանիշագիտության մեջ՝ թագադրված առյուծ): Կոմպոզիցիայում չեն ներառվել ավելի վաղ թագավորական ընտանիքների՝ Երվանդունիների և Վանի թագավորության կառավարիչների խորհրդանիշները: Ազգային արխիվում պահպանվել է «ազատ նկարիչ Հակոբ Առջոյանի նամակը», որը պետք է թամանյանական մտահաղացումը հանձներ թղթին: Նկարչին այդպես էլ չեն ներկայացրել թագավորական ընտանիքների խորհրդանիշների մանրամասն նկարագրությունը՝ ինչ գույն պետք է ունենա վահանը, արծվի և առյուծի գունավորումները (ընդհուպ մինչև ճանկերի ու լեզվի գույնը), դրանց զինանշալին տեսակը... Թամանյանի ոգեշնչման աղբյուրը Տիգրան II-ի տարբերանշաններն են եղել, մատենագիրներ Խորենացու ու Բյուզանդի թողած վկայություններն այն մասին, որ Արշակունի թագավորները «արծիվ էին կրում», Ռուբինյան արքա Լևոն II-ի կնիքներն ու մետաղադրամները և Անի թագավորանիստ քաղաքի դարպասների

← Հայաստանի Հանրապետության զինանշանը



առյուծով ռեյիեֆը: Հայկական զինանշանի վահանը պահողները Մամիկոնյան իշխանների արծիվն ու 885 թ.-ին գահ բարձրացած Բագրատունի թագավորական տոհմի առյուծն են: Թամանյանի էսքիզում թագավորների թռչուններն ու զազանները շատ ագրեսիվ են թվում: Եվ հարցը միայն երկու իշխանական տների դարավոր պայքարը չէ. թշնամիներով շրջապատված երիտասարդ պետությունը չէր կարող բարի զինանշան ունենալ: Ի դեպ, ազգային ժողովն այդպես էլ չի հասցրել այն հաստատել: 1990-ականների զինանշանով զբաղվող խմբի անդամները ստիպված էին մի լավ չարչարվել. օրինակ, հստակ չէր՝ պետք է Նոյի տապանը լինի Արարատին, թե՛ ոչ: Արխիվային փաստաթղթերում երկու տարբերակն էլ կար: Եվ կրկին որոշում կայացրեց նախագահը. լեռան գագաթին, որի շուրջը ծիփում են ջրհեղեղի ջրերը, տապանը պետք է լինի: Ագրեսիվ թամանյանական զինանշանը կարգի բերելու գործը հանձնարարվեց նկարիչ Ռուբեն Պետրոսյանին, իսկ այն գրաֆիկայի վերածելը՝ դիզայներ Հարություն Սամուելյանին: Եվ միայն 2006-ի հունիսի 15-ին Հայաստանն ընդունեց օրենք զինանշանի մասին, որում, մասնավորապես, հայելային փոխվեց թագավորական ընտանիքների վահանների գունավորումը. օրենքը կապեց զինանշանի գույները հայկական եռագույնի հետ: Գուցե դա տրամաբանական է. թռչունները պետք է սավառեն երկնքի կապույտում, բայց պատմական ու զինանշագիտության առումով դա այդքան էլ կոռեկտ չէ: Իսկ մինչ պատմաբաններն ու իրավաբանները կողմնորոշվում են իրավական ու գիտական նրբությունների հարցում, «զինանշանի զազաններն» արդեն երրորդ տասնամյակն է՝ պահակ են կանգնած հայկական պետականությանը:

🏰 Էռնա Ռևադյան

📍 Առնոս Մարտիրոսյան, Հայաստանի ազգային արխիվ



Անկախության տոնը Հանրապետության հրապարակում, 1991 թ., սեպտեմբերի 21

Չնայած հանրաքվեի պաշտոնական արդյունքները հայտարարվեցին սեպտեմբերի 23-ին, տոնախմբությունները սկսվել էին արդեն քվեարկության օրը: Միջոցառումների մի մասն ինքնաբերական էին, մյուսները՝ կազմակերպված: Տոնահանդիսությունների կենտրոնը Հանրապետության հրապարակն էր (որը կորցրել էր Լենինի անունը մեկ տարի առաջ): Հետագայում սեպտեմբերի 21-ն ամրապնդվեց որպես Հայաստանի անկախության տոն, իսկ գլխավոր հրապարակը դարձավ միջոցառումների անցկացման հիմնական վայր:

Պարբերաբար Անկախության տոնի շրջանակում անցկացվում է նաև ռազմական շքերթ: Առաջին անգամ այն կազմակերպվել է 1996-ին՝ 5-ամյա հոբելյանի կապակցությամբ, վերջին անգամ՝ 2016-ին:



Անկախություն
21.09.2020



Արեւիկայի տուն



ԱԶԱՏԻ ԶՐԱՄԲԱՐ
Արարատի մարզ

